

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.Վ. Համբարձումյան, Տ.Ղ. Սիրունյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԵՐԵՎԱՆ

Կրթության ազգային ինստիտուտ

2011



---

---

## Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Գործնական վարժությունների սույն ձեռնարկը կազմվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից: Այն նախատեսված է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների համար, համապատասխանում է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի ընդհանուր ծրագրի՝ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից կազմված և արդեն շրջանառության մեջ դրված պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատություններում հայոց լեզվի դասավանդումը մեթոդիկայով և ծավալով տարբերվում է ավագ դպրոցում և բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող դասավանդումից: Հիմնական տարբերությունը ծրագրային նյութերի համեմատաբար մատչելի լինելն է, բուն նպատակը՝ ժամանակակից գրական հայերենին գործնականում տիրապետելը, մասնագիտական լեզվական կարիքներին բավարարելը:

Վարժությունները և առաջադրանքներն ընդգրկում են ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությանը, բառագիտությանը, ձևաբանությանը և շարահյուսությանը վերաբերող նյութեր: Ձեռնարկում տեղ է հատկացվել ինչպես խոսքի մշակույթի հարցերին, այնպես էլ աշխատանքային, կազմակերպչական և գործնական հարաբերությունները կանոնակարգող փաստաթղթային ձևանմուշներին:

Ուսանողների կողմից ուղղագրական և կետադրական կանոնների յուրացումն ապահովելու նպատակով ներառվել են տեքստեր, որոնց ընտրության ժամանակ հաշվի է առնվել ոչ միայն դրանց ուսուցողական, այլև գեղարվեստական, դաստիարակչական նշանակությունը: Հատվածներն ընտրվել են հայ և այլազգի անվանի հեղինակների ստեղծագործություններից:

Ձեռնարկում տեղ գտած վարժությունների և առաջադրանքների միջոցով ուսանողներին հնարավորություն է տրվում խորացնելու հանրակրթական ուսուցման ընթացքում ձեռք բերած գիտելիքները, ամրապնդելու կետադրական և ուղղա-

---

---

գրական հմտությունները, կատարելագործելու ինքնուրույն խոսք կառուցելը, մտքերը ճշգրիտ շարադրելը և այլն:

Վարժությունները կազմված են այնպես, որ դասավանդումը լինի մատչելի և հետաքրքրական: Ըստ դասավանդողի հայեցողության՝ յուրաքանչյուր տեքստում կարելի է կատարել թե՛ բառապաշարին և թե՛ քերականությանը մանավանդ շարահյուսությանը վերաբերող աշխատանք:

Հույս ունենք, որ սույն ձեռնարկը կծառայի իր նպատակին և օգտակար կլինի կրթական այլ հաստատությունների մասնագետներին, ուսանողներին, դպրոցականներին:

Հեղինակներ

---

---

## ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆԱԲԱԺԱՆՈՒՄԸ

**Վարժություն 1.** Որո՞նք են հայերենի գրավոր շրջանի փուլերը և ի՞նչ ժամանակահատված են ընդգրկում:

## Հ Ն Չ Յ Ո Ւ Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Վարժություն 2.** Որոշել **ե, ռ, և** տառերի հնչյունական համապատասխանությունը՝ նշելով, թե տվյալ տառը, ըստ բառում ունեցած դիրքի, քանի՞ հնչյունով է արտահայտվում, և որո՞նք են այդ հնչյունները:

1. Որքան հիշում եմ, որտեղ էլ որ բնակվել ենք, տանը դաշնամուր է եղել: Լինում էին ժամանակներ, երբ մեզնից ոչ ոք ամիսներով դաշնամուրին մոտ չէր գնում, բայց հետո հանկարծ բոլորս էլ սկսում էինք դաշնամուր նվագել:

2. Ոչ ոք չգիտեր **արդյունագործություն** բառի իմաստը, և հանդիսաճատերում մեր քաղաքագլխի երբևէ գործածած բառերից ամենաերկյուղալին առաջադիմությունն էր:

3. Մենք նրա ոչ մի բառին չհավատացինք, թեև բարեկրթորեն պատասխանում էինք նրա բոլոր հարցերին այնպես, ինչպես երևի ինքը կցանկանար լսել:

**Վ. Մարոյան**

**Վարժություն 3.** Յուրաքանչյուր տողում նշել այն բառը, որի առաջին վանկը բաց է:

- ա) դերբայ, դասղեկ, սրբագրիչ, քարհատ, ստախոս
- բ) լեռնագործ, տառասխալ, մեղվապահ, հրթիռ, թղթակից
- գ) ակնթարթ, աղբարկղ, որսատեղ, քայլերգ, սառցաջուր
- դ) ծաղրանկար, վարդակակաչ, գործավար, սակագին, կրկնուսույց
- ե) անձրևաջուր, սկյուռ, վագր, կայսր, մարգարաշտ
- զ) ոտնաձայն, հետնորդ, ձկնորս, թագակիր, հաստատություն

---

---

**Վարժություն 4.** Նշել վանկատման սխալ ձևերը:

Ո-րո-նել, կը-տըր-տել, հար-թեց-նել, սա-նըր-ել, լու-սա-մուտ, լու-սա-նը-կար, կան-աչ-ա-պատ, դա-սա-գիրք, բը-նա-նը-կար, խո-խոջ-յուն, մայ-րու-ղի, կատ-ա-ղի, կա-պուտ-ակ, սե-վաչ-յա, սա-ղար-թա-խիտ, հու-սա-լի, բը-նա-կա-րան, հա-րե-վան, մը-տա-սե-վեռ, եր-կա-րա-տև, ծա-ռու-ղի, հի-ա-նա-լի, ըս-պի-տակ, մի-ա-մըտ-որեն:

**Վարժություն 5.** *Գրել գաղտնավանկի առկայության երկուական օրինակ բառասկզբում, բառամիջում և վերջին վանկում:*

Նմուշ՝ ըս- տանալ, երկըն-չել, կար-ծըր:

**Վարժություն 6.** *Հետևյալ բառերը ենթարկել հնչյունական վերլուծության:*

Խուփ, էակ, գիր, սկիհ, չարք, սոոց, օբսիդ, պիսակ, ծանոթ:

Նմուշ՝ տուն- տ - պարզ խուլ, պայթական, առաջնալեզվային բաղաձայն.  
ու- հետնալեզվային, վերին բարձրացման, շրթնայնացված ձայնավոր.  
ն - պարզ ձայնորդ, պայթական, առաջնալեզվային բաղաձայն:

**Վարժություն 7.** *Կազմել բառեր՝ բառասկզբի և բառավերջի հետևյալ հնչյունակազմով.*

1. բառասկզբում շփական բղձ., բառավերջում պայթական բղձ.,
2. բառասկզբում պայթական բղձ., բառավերջում շփական բղձ.,
3. բառասկզբում վերին բարձրացման ձայն., բառավերջում ձայնեղ բղձ.,
4. բառասկզբում պայթաշփական բղձ., բառավերջում պայթական բղձ.,
5. բառասկզբում հետնալեզվային ձայն., բառավերջում ձայնեղ բղձ.,
6. բառասկզբում շնչեղ խուլ բղձ., բառավերջում ձայնորդ բղձ.,
7. բառասկզբում ձայնեղ բղձ., բառավերջում խուլ բղձ.,
8. բառասկզբում հագագային բղձ., բառավերջում երկշրթնային բղձ.,
9. բառասկզբում շրթնայնացված ձայն., բառավերջում խուլ բղձ.,
10. բառասկզբում միջնատամնային բղձ., բառավերջում առաջնալեզվային բղձ.:

**Վարժություն 8.** *Շեշտադրել հետևյալ բառերն ու բառաձևերը:*

Առ այսօր, մի հուշիր, մի խոսքով, շտապում եք, քանի որ, չի կարելի, ցույց տալ, չխոսել, ուսանող է, ի գիտություն, ըստ երևույթին, մի խոսիր, մինչև իսկ, մի

Ժամանակ, արտագրում է, չի գրում, ինչպե՞ս թե, մինչև որ, ընդ որում, չի կարող, չծխել, ըստ ամենայնի, վրա տալ, տեսել է, կարդալիս կլինի, պար գալ:

**Վարժություն 9.** *Տրված բառաշարերից յուրաքանչյուրում նշել այն բառը, որի վերջին վանկի ձայնավորը շեշտակիր է:*

- ա) գուցե, Անգլիա, ծանր, ծաղիկ, օպերա
- բ) գրեթե, գետը, քաղաք, որերորդ, Իտալիա
- գ) նույնիսկ, բարձր, չորրորդ, քանիտերորդ, գիրքս
- դ) երբևէ, վեհանձն, բառարան, տասնյոթերորդ

**Վարժություն 10.** *Ընտրել բաղաձայնների այն շարքերը, որոնք ունեն՝*

- ա. միայն ձայնեղ բաղաձայններ.
  - ա) դ, բ, գ,            բ) գ, ժ, տ,            գ) ձ, ջ, վ,            դ) գ, ժ, փ,
- բ. միայն խուլ բաղաձայններ.
  - ա) փ, թ, ս,            բ) պ, տ, կ,            գ) վ, ֆ, ս,            դ) ռ, ռ, հ,
- գ. միայն կիսաշփական (պայթաշփական) բաղաձայններ.
  - ա) ծ, ձ, դ,            բ) ջ, ճ, թ,            գ) չ, ն, ն,            դ) ձ, ծ, ց,
- դ. միայն առաջնալեզվային բաղաձայններ.
  - ա) դ, տ, թ,            բ) գ, ժ, հ,            գ) ս, շ, յ,            դ) վ, լ, ռ:

**Վարժություն 11.** *Որոշել հնչյունների փոխազդեցության բնույթը:*

ա. Նշել այն օրինակը, որում շնչեղ խուլ բաղաձայնի ազդեցությամբ ձայնեղը վերածվել է խուլի:

- ա) զգացման > զգացմամբ
- բ) զքողել > սքողել
- գ) մնամբ > մնանք

բ. Նշել այն օրինակը, որում երկշրթնային բաղաձայնի ազդեցությամբ առաջնալեզվային բաղաձայնը վերածվել է երկշրթնայինի:

- ա) շարժք > ժաժք
- բ) անբարիշտ > ամբարիշտ
- գ) գուժկալ > ժուժկալ

---

---

**Վարժություն 12.** *Տրված բառաշարքերից նշել այն տարբերակները, որոնք ունեն միատեսակ հնչյունափոխության օրինակներ՝ առաջացած*

ա. միայն հնչյունի հավելման հետևանքով.

ա) վաթսուն, գցել, հագնել,

գ) հարբել, հոգի, ցածր,

բ) Համշեն, հաճար, քարհատ,

դ) աման-չաման, անձնվեր, ճարտասան,

բ. միայն հնչյունի անկման հետևանքով.

ա) առաքյալ, ոգի, հրձիգ,

գ) հարս, բարձր, եղջերու,

բ) կեսուր, մուկ, դուռ,

դ) ձուկ, արծիվ, հարբել:

**Վարժություն 13.** *Բացատրել բոկիկ>բոբիկ հնչյունափոխությունը:*

**Վարժություն 14.** *Ընդգծել ու>ը, ի>ը շեշտափոխական հնչյունափոխության օրինակները:*

Ըղձական, պատանյակ, գնել, ժողովրդական, խմբակային, մտաբերել, լրագրեր, աղավնյակ, քմային, փրփրել, բրդոտ, բվեճ, թմբեր, ծանուցագիր, ջրալի, բնական, գդալ, երեսնամյա, տրտնջալ, հողաթումբ, ոսկեգույն, գեղեցկանալ, սրել, գրկել, ծաղկել, ընչաքաղց, հրոսակախմբեր, սրտակից, գարեհաց, թրթիռ:

**Վարժություն 15.** *Ընդգծել յա>է (ե), ույ>ու, յու>ը կամ սղման շեշտափոխական հնչյունափոխության օրինակները:*

Բնակվել, եղյամ, գունավոր, ձնծաղիկ, ալրաղաց, հուսալի, քրիստոնեական, սենեկապետ, կայանատեղ, վայրկենաբար, ակացիա, եղջերափող, կուրանալ, քրոջորդի, առաքելություն, բուրավետ, միութենական, կղզյակ, ձթապատ, ատենակալ, կապուտակ, տեղեկություն, կայծկլտալ, խավիար, հոբելյանական, անցյալ, մատենադարան, դաստիարակ, հնչարտաբերություն, հետիոտն, հեքիաթ, սառցապատ, պտտել, լուսավոր, երևութական, դաշունահարել, գուժել, հրեա, զգուշանալ, պանթեոն, թունավորվել, խոյրնթաց, համբուրել, միմյանց, ձուլարան, միլիոն, մշակութային, արդյոք, փութաջան, միջօրեական, չեմպիոն, ողջունել, լեգեոն, արրոտ:

---

---

**Վարժություն 16.** *Ընդգծել  $t(t) > h$ , ու > վ հնչյունափոխության օրինակները:*

Տնվոր, գեղեցկանալ, մրմուռ, ուրվանկար, մրմնջալ, մորթեղեն, առվակ, գիրանալ, ուղեգիր, մեղվապահ, կիսել, ձիավոր, կապկել, ուրվական, վիպասան, ընչաքաղց, միակազմ, այգեգործ, լեզվաբան, փրփուր, բնագիտություն, փախստական, կղզյակ, թիակ, միավոր, տրտմջալ, թուպեական, տիրակալ, գալստյան, բրդատու:

**Վարժություն 17.** *Գրել  $t(t)$ , ու, ը, ի ձայնավորներով այնպիսի օրինակներ, որոնք բառաբարդման կամ ածանցման ժամանակ չեն հնչյունափոխվում (յուրաքանչյուրից երկուական):*

**Վարժություն 18.** *Ընդգծել երկհնչյունները և դրանցով այլ բառեր կազմել (յուրաքանչյուրից մեկ-երկու օրինակ):*

Այսպիսի՝ ահա շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեց նաիրյան այդ քաղաքը հետագայում համաշխարհային պատերազմ կոչված արյունալի հյուրին, դիմավորեց, ինչպես այդ վայել էր ամեն մի իսկական քաղաքի, խորին աշարժություն, և այդ հանգամանքով քաղաքը պարտական էր կրկին նրան՝ իր արժանի գավակին՝ Համո Համբարձումովիչ Ասատուրովին՝ Մագուրի Համոյին:

**Ե. Չարենց**

Դու չանասցիր իմաստության ձայնին նույնիսկ այն ժամանակ, երբ իմ համեստ ու բարի ազգը ոչ միայն իր արյամբ լցրեց քո հյուծված լեզուների արյունաքամ երակները, այլև տասներկու կայսրեր նվիրեց քեզ, որոնցից մի երկուսը, նորոգելով ուսերիցդ սահող կայսերական ծիրանին, ամրացրին մականը քո թուլացած աջին:

**Վ. Փափազյան**

**Վարժություն 19.** *Տրված բառերին հավելել մեկ հնչյուն և կազմել երկհնչյունավոր նոր բառեր:*

Հուր, դուր, թուր, սալ, մուկ, ծածան, սար, վար, մարի, փութ, արդ, բուն, խավար, պատան, գալ:

---

**Վարժություն 20.** *Ընդգծել հնչյունափոխված բառերը և բացատրել հնչյունափոխության բնույթը:*

Այսօր եղի՛ր քրոջ պես,  
Անչար, մաքուր և գթուս,-  
Գրկենք իրար ու նստենք,  
Նստենք մինչև առավոտ...

**Վ. Տերյան**

Ես քեզ մոտ եկա հրաշք հրթիռով,  
Ես քեզ մոտ եկա սրտի թրթիռով,  
Եկա, որ գրկեմ, գգվեմ, համբուրեմ...

**Հ. Սահյան**

**Վարժություն 21.** *Գրել վանկատված բառեր՝ ձայնավորների և բաղաձայնների հետևյալ կադրապարներով. Ձ- ԲՁ, ՁԲ- ԲՁ, ՁԲԲ-ԲՁ (յուրաքանչյուրից երկուական օրինակ):*

Նմուշ՝ Ձ-ԲՁ ա-րագ, ՁԲ-ԲՁ մար-դիկ:

**Վարժություն 22.** Խմբավորել հետևյալ վանկատված բառերը՝ ըստ բաց և փակ վանկերի:

Աղ-մուկ, բոր-բոք, փող-կապ, մատ-յան, բա-րի, ըս-կիզբ, թե-րի, վառ-վել, գե-րու-հի, հա-սու, հան-գրր-վան, ցուց-մունք, խը-մո-րե, լե-զու, ժը-լա-տի, մը-նա-ցի, ցամ-քոց, Ա-րա-րատ, պայ-թել, ա-նա-գե, ա-սե-լու, քա-ղա-քա-ցի, հո-գի, համ-բույր, ա-ռու, գար-նան, կա-րո-տա-լի, կայ-սըր, ան-գետ, ա-նա-ռակ, ա-րի:

**Վարժություն 23.** *Ընդգծել գաղտնավանկով ավարտվող (1,5 վանկանի) բառերը:*

Մանր, կամար, գիրք, ծանր, կայսր, բերք, բարձր, ցածր, ծաղր, կարգ, փոքր, մեղք, մավր, հաստ, վեղար, սկուտեղ, վարձկան, ջրմուղ, ակր, կուրծք, մետր, մտրակ, գնել, վագր, ձեռք, արկղ, աստղ, ներկ, սանր, կշիռ, գնդակ, բեղուն, մթերք, վերին, կրակ, նմուշ, մեղր, ալյուր, գրչակ, քաղցր, անգղ, վերք, կարծր:

---

---

**Վարժություն 24. Ընդգծել սղված հնչյուն ունեցող բառերը:**

Քաղքենի, ուսուցման, ազնվական, գետաբերան, քմահաճ, կոճկել, օրինավոր, ազնվահոգի, աղամորդի, հեռագրեր, բնակվել, ծակուծուկ, ջրալի, հրաճիգի, անկյունաքար, անթացույ, աստծո, այլազգիներ, սառցաշերտ, խմբերգ, ծերունու, երեսնամյա, ծրագրեր, թմբկահար, ծիծղուն, արնաբիծ, վիմագիր, կրել, հասարակական, մտաբերել, ձմռան, շտկել, այրաթաթախ, հարցման, կայանատեղ:

**Վարժություն 25. Ո՞ր ձայնավորի շեշտառությունն է սահմանափակ. գրել այդ հնչյունի շեշտակրության և անշեշտության 8-10 օրինակ:**

**Վարժություն 26. Ընդգծել**

ա) այն բառերը, որոնց վերջին վանկը շեշտակիր չէ:

Հինգերորդ օրվա երեկոյան՝ աղջամուղջի հետ, երբ տավարը ծանր կրծքերով կթի էր գալիս, նա հոգնա՛ծ-հոգնած մտավ ուրթ: Ծանրումեծ սպասող կովերի միջով նա եկավ, կանգնեց թաղիքե հին վրանի դռանը, և ինքը վրանի չափ էր, ու հոգնած մռլնգաց. ը՛րըմ:

-Չա՛ն,- ասաց նանը ,- եկա՞ր:

**Հր. Մաթևոսյան**

բ) անշեշտ բառերն ու մասնիկները.

Արվեստը մի խեղկատակի թռիչք չէ, ոչ էլ ինքնահավան անտաղանդի անիմաստ ծեքծեքում. արվեստագետը պատասխանատու է իր խղճի առաջ և առանց կոչման՝ մարդկանց հոգու հետ խաղ անել հանդգնողը... ոճրագործ է:

**Վ. Փափազյան**

**Վարժություն 27. Ուղղել բառային շեշտի սխալները և բացատրել:**

Աստված ի՛նչ, ես չեմ խնդրում հրաշքներ և տեսիլքներ, ես խնդրո՛ւմ եմ ուժ ամեն օրվա համար: Սովորե՛ցրու ինձ փոքրիկ քայլերի արվեստը: Դարձրո՛ւ ինձ հետևողական և պատրաստակամ, որպեսզի օրվա միապաղաղության մեջ ճի՛շտ ժամանակին կանգնեմ բացահայտումների և փորձի առջև, որոնք ինձ կհուզեն:

Սովորեցրո՛ւ ինձ ճշգրիտ տնօրինել իմ կյանքի ժամանակը: Նվիրի՛ր ինձ ներքին ձայն, որպեսզի առանձնացնեմ այն, ինչ պետք է անել առաջի՛ն և ապա երկրո՛րդ հերթին:....Օգնի՛ր ինձ հասկանալ, որ երազանքները չեն կարող օգնել. ոչ անցյալի՛ և ոչ էլ ապագայի՛ մասին երազանքները: Օգնի՛ր ինձ լինե՛լ այստեղ և հիմա, ընդունե՛լ այս բույնն որպես ամենակարևորն ու գլխավորը:... Դու գիտե՛ս, թե մենք ինչքան շատ ենք զգում ընկերության կարիք: Թո՛ւյլ տուր արժանի լինել ճակատագրի ամենահրաշալի և քնքուշ այդ նվերին: Դարձրո՛ւ ինձ մարդ՝ ունակ թակելու այն դռները, որոնք ամենաներքևում են: Պահպանի՛ր ինձ այն վախից, որ ես կարող եմ ինչ-որ բան բաց թողնել իմ կյանքում: Տո՛ւր ինձ ոչ թե՛ այն, ինչ ես խնդրում եմ ինձ համար, այլ ա՛յն, ինչն իսկապես անհրաժեշտ է ինձ: Եվ խնդրում եմ նորից. սովորեցրո՛ւ ինձ փոքրիկ քայլերի արվեստը:

**Ա. դը Ս. Էքզյուպերի**

**Վարժություն 28.** *Շեշտադրել տրված բանաստեղծության այն բառերը, որոնց շեշտը գրությանը արտահայտվում է:*

Արեգակ, օվկիան գորության,  
Բույե առ բույե  
Փայփայիր, տուր գորություն  
Էակին այս, թող բորբ տրոփե  
Նրա սիրտը դեռ մաքուր ու թույլ.  
Իմաստուն ու բարի դու.-  
Կյանք, լույս, աճում ու բարիք:-  
Չհերկված դաշտերում աշխարհի,  
Արեգակ, դեռ ինչքան չարիք.  
Բաբբի դու, ուսուցիչ բարի.  
Էությանը քո լցվիր նրա մեջ.  
Նվիրիր քո կորովն անշեջ-  
Ցուլդ թող երբեք չմարի:

**Ե. Չարենց**

**Վարժություն 29.** *Լրացնել բաղաձայնների եռաշարք, երկշարք և միաշարք խմբերում բաց թողնված հնչյունները և նշել դրանց հատկանիշներն ըստ արտաբերության եղանակի, տեղի և ձայնի ու աղմուկի հարաբերակցության.*

...	- ա -	...	... - Ֆ	...
զ	- ... -	ք	... - խ	ն
դ	- ... -	թ	զ - ...	...
...	- ծ -	ց	ժ - ...	ր
...	- ... -	չ		...
				յ

**Վարժություն 30.** *Կազմել բաղաձայնական համակարգի աղյուսակ:*

**Վարժություն 31.** *Կազմել ձայնավորների դասակարգման աղյուսակ՝ նշելով տարբերակման բոլոր հատկանիշները:*

**Վարժություն 32.** *Գրել բառեր՝ գործածելով ձայնավորների հետևյալ հնչյունակազմը:*

- ա. ստորին բարձրացման և վերին բարձրացման ձայնավորներ
- բ. միջին բարձրացման ձայնավորներ
- գ. առաջնալեզվային և հետնալեզվային ձայնավորներ
- դ. միջնալեզվային և հետնալեզվային ձայնավորներ
- ե. շրթնայնացած ձայնավորներ

**Վարժություն 33.** *Դասակարգել բառերը ըստ նույն գրի տարբեր արտասանության:*

Ոգի, ոզնի, գոչել, էակ, ամենաերազկոտ, դխ, մնայի, դոփել, տերև, ոհմակ, թիեր, ողջույն, ոմն, գիտեի, ոչինչ, մարգարեական, ճոխ, բազեով, հեքիաթ, կակաո, Ուկրաինա, ժողովածուի, սողուն, արևավառ, երկուական, ամենաարագ, Կարոյի, տարրորշել, առևտուր, իդեալական, Վիեննա, տղայի, ոտնաման, այլևայլ, տոկուն, մոտենալ, պիես, շողալ, Նիկոլաս, պոչատ, ամենաերկար, ջոկատ, էիր, սևաթույր, եմ, աներորդի, անոխակալ, ձող:

---

**Վարժություն 34.** 1922 թ. ուղղագրական փոփոխությամբ *n* ը ձայնավորները հանվեցին այբուբենից և ե ը վերականգնվեցին:

**Վարժություն 35.** *Ի* նշ հնչյուններից են կազմված **փ, ք, թ, ձ, ծ, ց, ջ, ճ, չ** բարդ բաղաձայնները:

**Վարժություն 36.** Ո ը բառաշարքերի բոլոր բաղադրիչներն են գրվում գծիկով:

ա) մարզ/կենտրոն/, Սայաթ/Նովա/, գիշեր/ցերեկ/, տեղի/անտեղի, հայ/հունական

բ) գրել/կարդալ/, ինժեներ/մեխանիկ/, ափալ/թափալ/, փոքր/ինչ, կաս/կարմիր

գ) հայ/ռուսական/, հետ/գրություն/, կարմիր/կապույտ/, հինգ/ամյա, դեմ/դիմաց

դ) դուռ/դրկից, ոչ/կարևոր, ձեռք/ձեռքի, դեմ/առ/դեմ, հեռու/մոտիկ

ե) ոչ/ոք, Նար/Դոս, երկու/երրորդ, մուգ/կապույտ, դույզն/ինչ

զ) բան/ման, ասել/խոսել, ռուս/ճապոնական, լեփ/լեցուն, տառ/տառ

է) հայ/անգլերեն/, ոլոր/մոլոր, այստեղ/այնտեղ, երկու/երեք, Նյու/Յորք

ը) Նոր/ Չեյանդիա, կողք/կողքի, քարե/քար, մի/մի, խաչբառ/հանելուկ

թ) ասած/չասած, ասեղ/թել, կա/չկա, կենաց/մահու, կինո/աստղ

ժ) ասող/խոսող, կիլոմետր/ժամ, անցնող/դարձող, տեսակ/տեսակ, տխուր/տրտում

**Վարժություն 37.** Նշել այն բառաշարքերը, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:

ա) աշոտ երկաթ, սառուցյալ օվկիանոս, ապենինյան թերակղզի, նոր արեշ, հարյուրամյա պատերազմ

բ) պետրոս առաջին, մակ, ամերիկայի միացյալ նահանգներ, հին հունաստան, նապոլեոն բոնապարտ

գ) սուրբ կարապետ, թամանյան դիվիզիա, հովնան մարգարե, անվտանգության խորհուրդ, թել ավիվ

դ) արևելյան եփրատ, հայկական տավրոս, հեկ, հիսուս փրկիչ, գայլ վահան

ե) հայաստանի հանրապետություն, արաքս գետ, դավիթ անհաղթ, գազայի հատված, հին քարե դար

---

զ) սան ֆրանցիսկո, մխիթար սպարապետ, պարսից ծոց, գաբրիել հրեշտակապետ, գանայի հանրապետություն

է) բարձր հայք, ձենով օհան, ադիս արեբա, աֆղանստանի իսլամական պետություն, հանս քրիստիան անդերսեն

ը) մեծ մասիս, անանիա շիրակացի, գրիմ եղբայրներ, անդրկասպյան երկրամաս, նիժնի նովգորոդ

թ) մեծ բրիտանիայի միացյալ թագավորություն, լա մանշ, անբան հուռի, ռիչարդ առյուծասիրտ, լատինական ամերիկա

ժ) փոքր մասիս, արայի լեռ, իվան ահեդ, միացյալ ազգերի կազմակերպություն, արին բերդ

**Վարժություն 38.** *Գրել առաջին բաղադրիչում ածանցի կրճատումով բաղադրություններ՝ գծիկով և առանց գծիկի (ինը-տասը օրինակ).*

Նմուշ՝ հայ-անգլերեն, նյութատեխնիկական:

**Վարժություն 39.** *Նշել այն շարքերը, որոնց բառերի միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:*

ա) անվտանգության խորհուրդ, բանակի գեներալ, առաջին աշխարհամարտ, արևմտյան ուկրաինա, արվեստի ինստիտուտ

բ) արտակարգ և լիազոր դեսպան, արցախյան շարժում, պետական դուժա, վաստակավոր ուսուցիչ, սև ծով

գ) հայրենական մեծ պատերազմ, փառքի շքանշան, աքեմենյան պետություն, բաթու խան, առաքելոց վանք

դ) աֆրիկյան լեզուներ, մեծ արջի համաստեղություն, ռուս-թուրքական պատերազմ, բաղդասար դպիր, բալկանյան երկրներ

ե) արիության շքանշան, մայիսի մեկ, առաքել դավրիժեցի, բողոքական եկեղեցի, աստվածամոր տոներ

զ) նոր տարի, վրաստանի նախագահ, գևորգյան ճեմարան, կուլոնի օրենք, հասագայի միջազգային դատարան

է) խաղաղ օվկիանոս, ազգային ժողով, փառքի շքանշան, գի դը մոպասան, դանայան տակառ

ը) արտաքին գործերի նախարարություն, դաշտային դարաբաղ, հայկական բանակ, կշեռք համաստեղություն, ժողովրդական արտիստ

---

թ) կոտայքի մարզ, հռոմի պապ, կապույտ լիճ, հայաստանի ժամանակակից արվեստի թանգարան, հռիփսիմյան կույսեր

ժ) հայկական պար լեռնաշղթա, թովմաս առաքյալ, աքիլեսյան գարշապար, գիտությունների ազգային ակադեմիա, անանուն մեկնիչ

**Վարժություն 40.** Նշել այն բառաշարքը, որի բառերի բոլոր բաղադրիչները գրվում են առանձին:

- ա. լեփ/լեցուն, լավ/որակ, ձայն/ծպտուն, ժամանակ/առ/ժամանակ, նեղ/աչք
- բ. ի/հեճուկս, դեմ/դիմաց, ամեն/ոք, հինգ/վեց, ի/զուր
- գ. հազար/ութ, մուգ/կանաչ, դուրս/քշել, մինչև/իսկ, ոչ/կարևոր
- դ. երկու/երրորդ, ոչ/ոք, տնից/տուն, նիստ/ու/կաց, տաք/դեղ
- ե. կես/օր, քայլ/առ/քայլ, փոխ/տալ, փոփ/աստղ, ուշ/ուշ
- զ. սար/ու/ձոր, հուր/հրեղեն, ալ/կարմիր, Նար/Դոս, գլուխ/գլխի
- է. առ/ու/ծախ, վայ/շինարար, քսան/չորս, այլ/և/այլ, այսօր/վաղը
- ը. դուռ/դրկից, փշե/պսակ, կինո/աստղ, այն/չափ, այս/ու/այն
- թ. բան/ման, ասել/խոսել, ռուս/ճապոնական, յոթ/գլխանի, հօդս/ցնդել
- ժ. պարզ/որոշ, վաղ/միջնադար, բառ/մասնիկ, և/կամ, նույն/ինքը

**Վարժություն 41.** Նշել այն շարքերը, որոնց բառերի բաղադրիչները գրվում են միասին:

- ա. օպեր/լիագոր, օտար/անուն, օր/ավուր, ֆիլմ/աշխարհ, յուրաքանչյուր/ոք
- բ. ֆոտո/թղթակից, յոթանասուն/մեկ, նեղ/սիրտ, ներ/դիր, կաղե/կաղ
- գ. նեո/ռոմանտիզմ, նախ/օրոք, ծայր/աստիճան, ծովից/ծով, կազմ/խորհուրդ
- դ. ծնող/կոմիտե, կրակ/մարիչ, հետ/գրություն, ճառ/ասաց, սեղան/ընկեր
- ե. հետ/մահու, նախ/քան, ճարտարապետ/շինարար, հյութ/քամիչ, հրամ/կազմ
- զ. ութ/ոտնուկ, ունկն/դրել, ուզած/չուզած, քաջ/առողջ, քաղ/ծառայություն
- է. երես/սրբիչ, ի/սպառ, լայն/էկրան, մերձ/ի/մահ, միջին/հայերեն
- ը. ոլոր/մոլոր, բևեռ/աստղ, սուտ/մեռուկ, սև/անուն, ցախ/ավել
- թ. ութ/անկյուն, տեր/հայր, փայտ/փորիկ, ց/այժմ, լայն/եզր
- ժ. առ/երես, առաջն/առնել, սուր/անկյուն, երեք/դռնանի, կուզե/կուզ

---

**ԻՅ հԱՅՈՒՍՏԱՆԻ 42.** Տեր, մեյիք, բեկ, միրզա բառերը գործածել որպես անձնանունների բաղադրիչ և հատուկ անունների որոշիչ՝ ուշադրություն դարձնելով գծիկի գործածությանը (ութ-իմը օրինակ):

**Վարժություն 43.** Նշել այն շարքերը, որոնց բառերի բոլոր բաղադրիչները գրվում են փոքրատառով:

ա) ամառային օլիմպիադա, ամերիկյան լեզուներ, անանուն մատենագիր, արևելյան քաղցրավենիք, ատոմային էլեկտրակայան

բ) ավեստայի լեզու, ավետարանական եկեղեցի, ավետյաց երկիր, աստվածների հայր, արևելքի մարգարիտ

գ) արքայական տիտղոս, արտակարգ և լիազոր դեսպան, ացտեկների երկիր, հարդագողի ճանապարհ, պետական հանձնաժողով

դ) հանրապետության նախագահ, հյուսիսամերիկյան հնդկացիներ, մամուլի ակումբ, շախմատի արքա, ոչ կառավարական կազմակերպություն

ե) համաշխարհային բանկ, մարաթոնյան վազք, ադամական մեղք, արվեստի վաստակավոր գործիչ, հեթանոսական տաճար

զ) մարզային ընտրական հանձնաժողով, հայկազյան բառարան, դամոկլյան սուր, դաշտային դատարան, դանիելյան նշանագրեր

է) մարդու իրավունքների պաշտպան, ձերդ ազնվափայլություն, լատինական այբուբեն, լրատվական ծառայություն, խավարի իշխան

ը) գեներալ-մայոր, մետաքսի ճանապարհ, գերագույն գլխավոր հրամանատար, խորհրդային իշխանություն, գիտահետազոտական ինստիտուտ

թ) արարատյան գինի, արվեստների մայրաքաղաք, բարեգործական ընկերություն, բրազիլական սուրճ, զինվորական կոմիսարիատ

ժ) արդարադատության նախարարություն, կարմիր խաչ, ամառային ժամանակ, ամենայն հայոց բանաստեղծ, խաղաղության աղավնի:

**Վարժություն 44.** *Կազմել նախադասություններ՝ գործածելով պետությունների բաղադրյալ անուններ:*

**Վարժություն 45.** *Կազմել նախադասություններ՝ գործածելով անջատ և միասին գրվող ի, առ նախդիրները (չորս-հինգ օրինակ):*

---

**Վարժություն 46.** Տրված զուգադրական բայերի բաղադրիչների միջև անհրաժեշտության դեպքում դնել գծիկ:

Խմել հագենալ, կապել կապկպել, եղած չեղած, թռչել գնալ, խփել ջարդել, թափել թափթփել, ասել խոսել, քշել տանել, կցել կցմցել, վագել գնալ, գնալ գալ, լինել չլինել, գալ հասնել, կտորել թափել, կտրել հանել, գուգել զարդարել, տանել բերել, ելնել իջնել, կրել բերել, գրել ջնջել, գնալ հեռանալ, ապրած չապրած, վառել մարել, թողնել փախչել, գալ մոտենալ, գրել կարդալ:

**Վարժություն 47.** Նշել հայ գրողների անուններ և գրական կեղծանուններ, որոնք ավանդաբար գրվում են գծիկով:

**Վարժություն 48.** Գրել ձայնակապի գործածությամբ բառաձևերի երկու շարք, որոնցում յ-ն արտահայտվի գրությամբ կամ միայն արտասանությամբ (ինը-տասը օրինակ):

**Վարժություն 49.** Որոշել տրված թվականների յուրաքանչյուր շարքի տառային համապատասխանությունը և այդ հնչյուններով կազմել բառեր. Թվականները գրել տառերով:

Նմուշ՝ 20,100, 3 - իճգ՝ ճիգ:

ա) 4000, 1, 1000

բ) 4, 200, 1, 5000

գ) 9, 3000, 20

դ) 1, 3, 480

ե) 5060, 71

**Վարժություն 50.** Հետևյալ հարցերի պատասխանները արտահայտել տառերի թվային արժեքով:

ա) Ո՞ր թվականին է ստեղծվել հայերենի այբուբենը:

բ) Քանի՞ տառ և հնչյուն ունի հայերենի այբուբենը:

գ) Քանի՞ ձայնավոր և բաղաձայն ունի հայերենի այբուբենը:

դ) Ո՞ր թվականին է տպագրվել հայերեն առաջին գիրքը:

ե) Մ. Աբեղյանը ո՞ր թվականին է կատարել ուղղագրական փոփոխություններ:

զ) Ո՞ր թվականին է վերափոխվել արեղյանական ուղղագրությունը:

---

---

**Վարժություն 51.** *Լրացնել բաց թողնված է, ե և օ, ո տառերը:*

Առ...րևույթ, օրըստ...րե, աման...րյա, ան...անալ, առ...ջ, արագ...տն, ստոր...րկրյա, ան...րակ, մանր..., դող...րոցք, ելև...ջ, վաղ...րոյան, բաց...թյա, ան...րևակայելի, բախտ...րոշ, Սևանհ...կ, ովև..., հ...գուտ, արծաթագ...ծ, մեղմ...րեն, թիկն...թոց, ինչևից..., ան...րեն, լացուկ...ծ, առօր...ական, երկար...րյա, բազմ...րանգ, ան...դնաշար, հանապագ...րյա, նախօր..., այգ...տ, վաղ...րոք, կիսա...փ, ...վքեր, գիշեր...թիկ, ա...րողպրոց, հատ...րյակ, վայր...ջք, երբև..., երկ...րյակ:

**Վարժություն 52.** *Լրացնել բաց թողնված եվ, և տառերը:*

Ազ...ազ, ուն...որ, գեր...արել, վազ...ազ, գին...աճառ, ազ...որ, դափն...արդ, ...գինե, կար...եր, գին...ետ, հ...իհ..., ամեն...ին, համա...րոպական, հար...ան, ուղ...որ, օթ...ան, սեթ...եթանք, ոգ...որություն, ալ...ետ, ոսկ...արս, հոգ...արք, տար...երջ, գոտ...որել, հետ...որդ, ոսկ...ազ, սերկ...իլ, վաղը ...եթ:

**Վարժություն 53.** *Գրել բառազույգեր՝ երկշարք բաղաձայններով:*

Նմուշ՝ վ-ֆ Աղվանք-Աֆղանստան:

**Վարժություն 54.** *Հետևյալ բառերով և մասնիկներով գրել ուղղագրական տարբերակներ. էական/-եական, օղ/-ոթ, օրեն/-որեն, օղ/-ող, օր/-որդ, իա/-յա/-ես, յո/-իո:*

**Վարժություն 55.** *Օգտվելով բառարաններից՝ ընդգծել կրկնակ ձևերի ճիշտ տարբերակները:*

ակորդ- ակկորդ	վանա- վաննա
բրուտո- բրուտոո	նետո- նետոո
մասա- մասսա	Շիլեր- Շիլլեր
կլասիցիզմ- կլասսիցիզմ	վատ- վատտ
ալեգրո- ալլեգրո	տոնա- տոննա
կոլեգիա- կոլլեգիա	Աքիլես- Աքիլլես
տեռոր- տեռորր	Հանիբալ- Հաննիբալ

դղար- դղար	Օվսանա- Օվսանա
Հելադա- Հելադա	բալադ- բալադ
Մառ- Մառ	միլիոն- միլիոն

**Վարժություն 56.** *Առանձնացնել հետևյալ բառերի բաղադրիչները և բացատրել ուղղագրությունը:*

Անակնկալ, հանրօգուտ, ակնդետ, ակնթարթ, եղերերգ, երբևէ, այլընտրանք, անակնկալ, միջօրե, անընդհատ, անընդունակ, գահընկեց, մանրէաբան, ջէկ, հոտնկայս, առերևույթ, խռոններամ, գիրկընդխառն, բնօրրան, երկարօրյա, անէանալ, անելանելի, ինչևիցե, սևերես, տիեզերք, բարորակ, գույնզգույն, դասընթաց, էլեկտրատեղակայում, ոսկեգօծ, հովեկ, նրբերշիկ, լուսնկա, տնօրհներ, լայնէկրան, խոչընդոտ, կորնթարդ, համընկնել, փղոսկր, ձեռնառու, ունկնդիր:

**Վարժություն 57.** *Նշել այն շարքը, որում ուղղագրական սխալ չկա:*

- ա) չորրորդ, քսան-երեսուն, տաս, յոթ ամբողջ վեց տասնորդական, մեկառմեկ
- բ) քառորդ, քառասունչորս, իներորդ, երեքական, երկու հինգերորդ
- գ) յոթական, հազար-հազար, ութսունինն, ինը հարյուր տասնմեկ, քսանմեկերորդ
- դ) երկուս, հիսունմեկ, չորս-հինգ, չորքուտանի, հազարերորդական
- ե) հինգ-վեցերորդ, վաթսունական, տասնմեկ, հարյուր հիսունամյա, քառակի
- զ) մեկ երկրորդ, երկու հազար չորս, ութ-ինն, միլյարդ, հնգօրյա
- է) եռյակ, հարյուրավոր, ութսուն մեկ, յոթուկես, հարյուր վաթսուն
- ը) քառամյա, հազարավոր, ութսուներորդ, հնգակի, եռոտանի

**Վարժություն 58.** *Բերված բառերը դասակարգել ըստ նշված առանձնահատկությունների՝*

- ա) Բ, Գ, Դ, Չ, Ջ տառերը արտասանվում են նույնությամբ
- բ) արտասանվում են Փ, Զ, Թ, Յ, Չ:

Դարբին, բարդի, որդի, ջարդ, թարգման, լուրջ, կամուրջ, արգասիք, բարգավաճել, խարդախ, խլուրդ, արբանյակ, բորբ, երբ, երգ, երդ, արջ, կարգ, բարբաջանք, պարզև, բարբարոս, հարբել, բերդ, թրջել, արձագանք, արգահատանք,

---

---

լյարդ, արձակ, բարձ, դերձակ, հաղարջ, որջ, միլիարդ, հարձակվել, անուրջ, քուրդ, սուրբ, հագուրդ, հարդ, հորդ, վարդապետ, վերջաբան, դերձան, խոլորձ, մարգարե, նարգիզ, շրջադարձ, բուրգ, մերձավոր, վերջ, գիրգ, խուրջին, մարջան, աբսուրդ, ակորդ, հերձել, փորձագետ, ուղերձ, քուրձ, մարգարիտ, օրիորդ, մարդ, վերջիվերջո, ավանգարդ, կոկորդ, քնարերգու, որձ, զարդ, ուրբանիզմ, ուրբաթ:

- ա) Բ տառը *ր*-ից հետո արտասանվում է *փ*:
- բ) Բ տառը *ր*-ից հետո արտասանվում է *բ*:
- գ) Գ տառը *ր*-ից հետո արտասանվում է *ք*:
- դ) Գ տառը *ր*-ից հետո արտասանվում է *գ*:
- ե) Դ տառը *ր*-ից հետո արտասանվում է *թ*:
- զ) Դ տառը *ր*-ից հետո արտասանվում է *դ*:
- է ) Չ տառը *ր*-ից հետո արտասանվում է *ց*:
- ը) Չ տառը *ր*-ից հետո արտասանվում է *ձ*:
- թ) Ջ տառը *ր*-ից հետո արտասանվում է *չ*:
- ժ) Ջ տառը *ր*-ից հետո արտասանվում է *ջ*:

**Վարժություն 59.** *Գրել դբ, դգ, դդ, դձ, դջ տառակապակցություններով բառազույգեր, որոնք հակադրվեն արտասանական տարբերությամբ:*

Նմուշ՝ դբ եղբայր (խպ) -բողբոջ (դբ):

**Վարժություն 60.** *Տրված բառերում ընդգծել այն ձայնեղ բաղաձայնները, որոնց արտասանությունը խլացած է:*

Աբխազ, դաջել, մեգ, օդ, ագահ, ագարակ, ադամորդի, դողդոջ, օձաձուկ, առաջնորդ, ավագ, դագանակ, վայրէջք, թագավոր, քաջք, սհագին, իբրև, արագ, մարմաջ, խաբել, արեգնափայլ, տեգ, քրքիջ, շաբաթ, խոխոջյուն, ծագել, ճառագայթ, որոգայթ, աջ, կարագ, սողա, բագին, օձաձև, ծղրիդ, առաջարկ, հաջորդ, վագր, գագաթ, դեգերել, աբբա, Թադևոս, ադամանդ, բադ, հոդ, էջանշան, մարագ, մեջ, նորոգ, աշխարհաբար, առջև, դադար, օձաբույս, շոգ, ոգի, պատարագ, հոբելյար, առաջիկա, Աբգար, եղեգ, հոգի, հեգնանք, ձիգ, ճիգ, գաջ, ճագար:

**Վարժություն 61.** *Կարդալ հետևյալ փոխառյալ բառերը, օտար հատկանունները՝ ուշադրություն դարձնելով դրանց ուղղագրությանն ու ուղղախոսությանը:*

Տոլստոյ, Վորոնեժ, ակորդեոն, պոմիդոր, Նապոլեոն, կոստյում, ինստիտուտ, դիպլոմ, միկրոֆոն, ֆակուլտետ, ինդիկատոր, Մոսկվա, կոնֆետ, Սևոստոպոլ, կոնսերվատորիա, Խարկով, տրակտոր, Վիկտոր, կոլեկտիվ, մոնտյոր, Սիմֆերոպոլ, պրոպագանդա, պրոֆեսոր, էտյուդ, ռեկտոր, բոլշևիկ, դիրեկտոր:

**Վարժություն 62.** *Տրված բառազույգերում լրացնել բաց թողնված լծորդ բաղաձայնները:*

ս ...րդել- ս...րթնել	քսու...- փղձու...
թա...փ- թա...ափ	փող...- փեղ...
խա...ուսիկ- խա...շիկ	շաղ...ամ- շաղ...ապ
ոսկեծո...- ալեծո...	գիր...- բիր...
պապա...- փափա...	ան...ացուպ- ան...ամատոմս
սիբե...- բե...	փ...ախտ- փու...կոտ
թ...րտալ- թ...ուտ	քողտի...- փափսու...
դիցու...- թնջու...	գծու...- դեղնու...
սու...- սյու...	որ...կալ- որ...աքար
նավակատի...- կատի...	լ...պոր- ժ...որ
ձվա...և- ձվա...եղ	թպ...տալ- թ...վ...ալ
աշ...ետ- աշ...եկ	խու...ներամ- խու...շակ

**Վարժություն 63.** *Բացատրել տրված բառազույգերի ուղղագրական տարբերությունները:*

ձերբակալել- ձեռնաշղթա	հովհար- հովար
փռփռալ-փրփրել	հեղեղատ-հեղեղուկ
Անանիա- Վոլոդյա	ուղեցույց-ուղղընթաց
ընձեռել-ընդհանուր	աշխարհիկ-ապաշխարել
յոթանասուն-ութսուն	առայժմ- առ այսօր

---

**Վարժություն 64.** *Գրել կրկնակ բաղաձայններով բառեր, որոնցում հնչյունների կրկնակիությունն առաջացած լինի հնչյունափոխության կամ նույն վերջնահնչյունով ու սկզբնահնչյունով բաղադրիչների կից գրության հետևանքով (8-10 օրինակ):*

Նմուշ՝ ուղղափառ- ընդդիմակաց:

**Վարժություն 65.** *Հայերեն տառադարձել տրված բառերը և բարձրաձայն կարդալ:*

Венеция, Крым, Шанхай, Тегеран, Ливан, Рим, Брут, Афины, Москва, Лазарь.

## Բ Ա Ռ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Վարժություն 66.** *Խմբավորել բառերն ըստ հոմանիշային շարքերի:*

Խոտոր, բախտավոր, ժողովել, զարտուղի, շեղ, դյութիչ, ծուռ, ծավիլ, հմայիչ, լաջվարդ, բիլ, դրվատել, դեղձան, դատարկել, կուտակել, հպարտ, պտղաբեր, հավաքել, խոնավ, ողորկ, հրապուրիչ, հուզիչ, պոռոտախոս, համածին, երջանիկ, գովել, սնապարծ, ստերջ, դժվար, համեստ, անպտուղ, բարունակ, երկվորյակ, վեհանձն, պարպել, տամուկ, խրթին, հարթ:

**Վարժություն 67.** *Ընդգծել ածանցավոր բառերը:*

Տնտեսվարություն, ազատամարտիկ, ատենադպիր, միջնաբերդ, դպրոցահասակ, պատվարժան, թռչնաբուծարան, արձակագիր, մանկաբարձուհի, վիպասան, հայրենանվեր, մատնահետք, վարչապետ, սակավամիտ, միաբանություն, հրոսակախումբ, անհողակապ, բազմակետ, հնձվոր, ոսկրախտ, շաքարավազ, շանթարգել, նախածանց, ճոճաթոռ, բնավեր, լողավազան, ձերբազատվել, ընդամենը, հերարձակ, կնամեծար, որդեգիր, գոյական:

**Վարժություն 68.** *Բացատրել ընդգծված բառերի փոխաբերական իմաստները:*

Նոթերը կիտած լեռան հարավային գոգին բազմել էին գմբուխտ դաշտեր: Ստորոտում գալարվող վիրվրաքերան գետը անվերջ խոսում էր իր երկու ափերի

հետ: Գետի աջ ափին տխուր կանգնել էր մի կիսավեր ամրոց և անթարթ հայացքով նայում էր իր հարևաններին՝ հողածածկ խաչքարերին, մամռակալած մատուռին, ուշ աշնան գույներով պճնված ծառերին: Վարսաթափ ուռենին գլխահակ նայում էր վազող ջրերին: Հպարտ ընկուզենին հայացքը չէր կտրում լեռան բարձունքից: Դեղնահեր դեղձենիները համեստորեն շարք էին կանգնել և ժպտում էին մեկմեկու: Պայծառադեն սերկևիլներով բեռնավորված մեծամիտ սերկևիլենիները վերևից էին նայում պտղագուրկ դեղձենիներին: Նրանց ստվերում անուշ քնի մեջ ճոճվում էր մի հոգնաբեկ այգեպան:

## Ս. Խանգաղյանի

**Վարժություն 69.** *Ընդգծել առօրյա-խոսակցական բառերը, որոնց փոխարենն հաճախ օտարաբանություններ ենք գործածում:*

Հեռուստացույց, ներկայացում, համերգ, դույլ, հանդիսական, արքան, դահլիճ, որսորդ, լճափ, գետեզր, ապերասան, համերկրացի, ճամպրուկ, վերնաշապիկ, բաճկոն, պատշգամբ, կոճգամ, հյութ, պաղպաղակ, նարինջ, հովհար, հովանոց, անձրևանոց, ճարպիկ, ճարմանդ, վարսակալ, հերակալ, սուրճ, սրճեփ, սրճարան, կաթսա, թեյ, թեյնիկ, ափսե, ապակի, ապուխտ, երշիկ, սոսիճ, պայուսակ, զամբյուղ, երթուղի, չվերթ, տպիչ, պատճեն, թթվասեր, թանգիլ, կարկանդակ:

**Վարժություն 70.** *Ընդգծել բուսանունները:*

Թխկի, բուրդ, եղրևանի, մատյան, գրանիշ, եղերդակ, բնույթ, ծնունդ, լորիկ, լորենի, դատրիկ, արոս, արոսենի, չվացուցակ, բևեկն, բնօրրան, աստղածաղիկ, պատվանդան, քննաշրջան, բարդի, հանդուզն, արհամարհանք, մայրի, աթոռ, նոճի, սոճի, Սոչի, երևույթ, արևագալ, արևածաղիկ, ուխտ, ուղտափուշ, հանդեպ, տարերք, արմավենի, նվագածու, ջրօրհնեք, փշարմավ, հիրիկ, հյուրընկալ, պարթև, պատկառուկ, պատկառանք, քաջորդի, քաջվարդ, քաջագն, վարդակակաչ, կարկաչ, պարզև, ընծա:

**Վարժություն 71.** *Դուրս գրել թռչնանունները:*

Շարքացան, արտույտ, բառագետ, սարյակ, տողադարձ, արոս, արոր, մանրուք, մկրատ, բվեճ, աղբյուր, գիշանգո, արագոտն, բագե, բագրիք, հրեա, հեքիաթ, թութակ, լոր, սալոր, լեռնագնաց, կտցար, քույր, որոր, տատրակ, խաչակիր,

---

---

կարգազանց, ցախաքլոր, ցախավել, միալար, ալրադագ, վարուժնակ, բազմերանգ, փայլփլուռ, մարի, տերևաթափ, մարգագետին, մարգահավ, էակ, գործունյա, կապավոր, իմաստակիր, փայտփոր, ճանապարհանշան, անգղ, ուղեկալ, դեղձենի, դեղձանիկ, նավատորմ, ծիծեռ, դարբին, բաղակտուց, կնգուղ:

**Վարժություն 72.** *Ընդգծել տեղանուններից առաջացած անձնանունները:*

Աստղիկ, Արարատ, Անահիտ, Տարոն, Արտավազդ, Մասիս, Տրդատ, Արաքս, Տիգրան, Հրազդան, Տիրան, Սիփան, Վարդան, Վարագ, Վարդուհի, Վանուհի, Աշոտ, Կարին, Գուրգեն, Սևանիկ, Վանիկ, Հրայր, Սասուն, Հարություն, Տաթևիկ, Դավիթ, Անի, Նաիրի, Դերենիկ, Նաիրուհի, Եղիազար, Հայաստան, Ալավերդյան, Հեղինե, Բասենցյան, Նարեկ, Հասմիկ, Լոռեցյան, Վանեցյան, Գրիգոր, Մասիսյան, Սամվել, Ղափանցյան, Գևորգ, Շիրակյան, Կարինյան, Ռուբեն, Շարուրյան, Զարուհի, Հայկուհի:

**Վարժություն 73.** *Ընդգծել այն հաստուկ անունները, որոնց կազմում հասարակ գոյականներ կան:*

Դանիել Վարուժան, Ալեքսանդր Շիրվանզադե, Լևոն Շանթ, Վահան Տերյան, Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, Նար-Դոս, Մովսես Խորենացի, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Ավետիք Իսահակյան, Գուրգենդուխտ, Որմիզդուխտ, Գևորգ Մարգարետունի, Ասպրամ, Սահակ Սևադա, Հուսիկ, Աշոտ Բռնավոր, Արտակ Մոկացի, Յիկ Ամրամ, Շահանդուխտ, Սահականույշ, Գրիգոր Մազիստրոս, Մխիթար Գոշ, Նահապետ Քուչակ, Գեղամ Սարյան, Եղիշե Չարենց, Միսաք Մեծարենց, Հայք, Վան, Ծաղկաձոր, Մուշ, Արշակավան, Սասուն, Ապարան, Արտաշատ, Վանաձոր, Գյումրի, Սպիտակ, Աշտարակ, Անի, Կարին, Կարս, Մալաթիա, Կեսարիա, Զվարթնոց, Էջմիածին, Ստեփանավան, Կարմիր, Կապուտկող, Գորիս, Կապան, Հաղրութ, Ստեփանակերտ, Արցախ, Հրազդան, Սևան, Որոտան, Աղստև, Չիչխան, Դեբեդ, Գուգարք, Վայք, Եղեգնաձոր, Ամասիա, Ղուկասյան, Արթիկ, Իջևան, Տավուշ:

---

---

**Վարժություն 74.** *Ընդգծել բժշկական տերմինները:*

Բուռն, ստոծանի, ձգտում, մարմաջ, քլոր, երախտիք, երիկամ, արագավազ, որսորդ, լյարդ, քերծե, վիրակապ, երաժշտություն, սնդիկ, տավիղ, վարկ, պետություն, վարքագիծ, ծաղիկ, պասակաթերթիկ, ծիրանի, մանկաբույժ, թագավոր, մայրաքաղաք, կրծքավանդակ, գիտություն, ծծումբ, մայրուղի, անուշեղեն, շարք, բառատետր, չորս, բառակապակցություն, հիվանդասենյակ, պատասխան, քութեշ, մատուռ, կողոսկր, աստիճան, ձողիկ, բուրվառ, վիրահատարան, հեթանոս, ճնշում, տանար, բազրիք, նյարդաբան, խունկ, անոթ, նշխար, մկան, եկեղեցի, ջերմաչափ, մեհյան:

**Վարժություն 75.** *Ընդգծել լեզվաբանական տերմինները:*

Բառարան, արմատ, կազմարար, վերջածանց, խորանարդ, լիցքավորում, թարգմանիչ, գերատեսչություն, տպարան, ցողուն, կցուրդ, տառատեսակ, նախարարություն, դարձված, բացատրագիր, կայանատեղի, եռանկյունի, ընկալուչ, նախադասություն, հացահատիկ, փոխաբերույթ, ճանապարհ, բուն, խորհուրդ, թիկունք, օգնական, ոտք, մամլիչ, առվույտ, արդարություն, վարսակ, ոլորան, հավաքագրում, սաղարթ, սեղան, շաղկապ, փակուղի, աստիճանավորում, զուգափայտ, շրջադարձ, ուղեկալ, շրջանագիծ, բաղաձայնույթ, մարմնամարզիկ, երթուղի, տերև, վերաբերական, առևտուր, սերմնացան, իրավունք, պատյան, չվերթ, հավատացյալ:

**Վարժություն 76.** *Տրված բառերը խմբավորել ըստ իմաստային ընդհանրության:*

Քարհատ, երգեհոն, ռազմավար, ջութակահար, մեքենավար, թավջութակ, շեփորահար, հրանոթ, խմբավար, սյունաշար, հետախույզ, երգչախումբ, հրթիռ, կռունկ, երաժշտագետ, բազրիք, աշխղեկ, ձայներիզ, ականոթսիչ, ձեղուն, երգահան, գալարափող, հենասյուն, գերի, քանոն, ականանետ, քնար, գրոհ, բահ, հաղթանակ, համահունչ, նվագածու, հարձակում, հարթաչափ, ճակատ, ծեփամածուկ, նվագարկիչ, երաժշտանոց, զինվոր, թիկունք, մեներգ, թիթեղ, պայթուցիկ, պատգարակ, թաքստոց, նահանջ, խմբերգ, ձայնակցել, հրամանատար, վառող, շինարարություն, բանվոր:

---

**Վարժություն 77.** *Բացատրել դարձվածքների իմաստները և դրանք ներկայացնել մեկ բառով արտահայտված հոմանիշներով:*

Գլուխը բարձր, գլուխը կախ, գլխի ընկնել, գլուխ պահել, գլուխը պահել, գլխին գալ, գլխին տալ, գլխին նստել, գլուխը տանել, գլուխ տալ, գլուխը արդուկել, գլխից դուրս, գլխին բերել, գլխով անցածը, խոսք գտնել, ջան ասել, բախտը լալ, սիրտ տալ, սրտից հանել, սիրտը բանալ, սիրտը կախ, սիրտը բաց, սիրտը խորը, ձեռքը բաց, ձեռքը փակ, ձեռքերը ծալած, ձեռքով անել, ձեռքին նայել:

**Վարժություն 78.** *Գրել տրված արևմտահայերեն բառերի արևելահայերեն նույնանիշները և դրանցով նախադասություն կազմել:*

Այպանել, քարյուղ, սառնանույշ, կաղանդ, փոստալ, սակարան, էրիկմարդ:

**Վարժություն 79.** *Գտնել մենիմաստ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Խոսել, անցնել, պահել, տրոփել, հեռանալ, մոռացվել, բացատրել, հանձնել, մտածել, առաջարկել:

**Վարժություն 80.** *Գտնել մեկ արմատ և երկու ածանց ունեցող բառը և դրանով նախադասություն կազմել:*

Գործունություն, գործառույթ, վարկած, կողմնորոշում, շուկա, փխրուն, հիմնադրամ:

**Վարժություն 81.** *Գտնել բնաձայնական բառը և դրանով նախադասություն կազմել:*

Արտույտ, արոս, կարապ, կաքավ, կկու, արագիլ, լորիկ, ճայ, ծիծեռ, որոր, բագե, աքաղաղ, հավ:

**Վարժություն 82.** *Գրել օտարաբանությունների հայերեն տարբերակները և դրանցով նախադասություն կազմել:*

Անալիզ, օրիննտացիա, տրադիցիա, ստիմուլ, ֆունդամենտալ, ստաբիլ:

---

---

**Վարժություն 83.** *Գտնել թերիմաստ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Վաճառք, սակայն, դանդաղ, ուրախ, ազգակից, ավանդ, տնամերձ, սահմանապահ:

**Վարժություն 84.** *Ինչպիսի՞ն՞ չեն լինում հասկավումները:*

Տառային, վանկային, վանկաբառային, տառաբառային, բառային, նախադրական, վերջադրական:

**Վարժություն 85.** *Գտնել բազմիմաստ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Բարեկամ, երիկամ, կտցար, խեցեկիր, բազեակիր, աշտե, վարսանդ, վարսակ, տուն, շոգենավ, կանթեղ, բուրվառ, աշտանակ:

**Վարժություն 86.** *Գտնել թերիմաստ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Այլ, սայլ, բայ, բայց, գայլ, բույլ, դույլ, հույլ, ծույլ:

**Վարժություն 87.** *Գրել տրված արևմտահայերեն բառերի արևելահայերեն տարբերակները և դրանցով նախադասություն կազմել:*

Ասանկ, աղեկ, աճապարեկ, խածնեկ, երիկմարդ, ստեպղին, խպնեկ, ըլլալ, շարժանկար, լմննալ:

**Վարժություն 88.** *Գտնել բնաձայնական բառը և դրանով նախադասություն կազմել:*

Ծախել, ծածկել, ծովանալ, ծլվլալ, չորանալ, լվանալ, ծաղրել, ծածանվել, մանկանալ, տատանվել, ընդունվել, հղփանալ, պչրվել, պճնվել:

---

---

**Վարժություն 89.** *Գտնել երկարմատ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Վաճառք, համակարգ, կողմնորոշում, պահանջարկ, ինքնարժեք, արժեիջեցում, շրջապատել:

**Վարժություն 90.** *Գտնել մենիմաստ բառը և դրանով նախադասություն կազմել:*

Ինքնաթիռ, խաղ, գլուխ, թև, ճակատ, աչք, տուն, սեղան:

**Վարժություն 91.** *Նշել իրանական փոխառությունների շարքը:*

- ա) արեղա, արսոր, խանութ, կացին, քահանա
- բ) քիմիա, աճապարար, խսիր, կապա, մկրատ
- գ) արուսյակ, երաշտ, բագին, բագե, կոշիկ
- դ) ադամանդ, ամբիոն, եկեղեցի, զեփյուռ

**Վարժություն 92.** *Նշել արաբական փոխառությունների շարքը:*

- ա) արեղա, արսոր, խանութ, կացին, քահանա
- բ) քիմիա, աճապարար, խսիր, կապա, մկրատ
- գ) արուսյակ, երաշտ, բագին, բագե, կոշիկ
- դ) ադամանդ, ամբիոն, գավաթ, եկեղեցի, զեփյուռ

**Վարժություն 93.** *Նշել ասորական փոխառությունների շարքը:*

- ա) արեղա, արսոր, խանութ, կացին, քահանա
- բ) քիմիա, աճապարար, խսիր, կապա, մկրատ
- գ) արուսյակ, երաշտ, բագին, բագե, կոշիկ
- դ) ադամանդ, ամբիոն, եկեղեցի, զեփյուռ

**Վարժություն 94.** *Նշել հունական փոխառությունների շարքը:*

- ա) արեղա, արսոր, խանութ, կացին, քահանա
- բ) քիմիա, աճապարար, խսիր, կապա, մկրատ

- 
- 
- զ) արուսյակ, երաշտ, բագին, բագե, կոշիկ
  - դ) աղամանդ, ամբիոն, զեփյուռ, գավաթ, եկեղեցի

**Վարժություն 95.** *Ընդգծել իրանյան փոխառությունները (5 բառ):*

Աբեղա, խսիր, մեհյան, բժիշկ, կաքավ, կողով, պարտեզ, սպիտակ, ատրուշան, քահանա:

**Վարժություն 96.** *Ընտրել և դեմ դիմաց գրել տրված օտարաբանությունների հայերեն համարժեքները:*

Ակտիվ, ակտուալ, անալիզ, բալանս, բարիեր, բոյկոտ, գրաֆիկ, դախող, դեղուկցիա, դեպոզիտ, դետերմինանտ, դևալվացիա, դիլեմա, դիսկրիմինացիա, դիֆերենցիալ, բանկ:

Խտրականություն, դատողությունների շղթա, երկընտրանք, արժեփոփոցում, արգելք, ավանդ, դրամատուն, փաստացի, եկամուտ, գծապատկեր, վերլուծություն, որոշիչ, հրաժարում, հաշվեկշիռ, տարբերակված, գործուն:

**Վարժություն 97.** *Տրված օտարաբանություններից քանիսի՞ հայերեն համարժեքները գիտեք:*

Գիֆերենցում, դեֆյացիա, կուլտուրա, դոկտրինա, էլաստիկ, էմիգրանտ, էկոնոմիկա, էքսկլուզիվ, էքսպորտ, էքստեռն, էքսպանսիա, էֆեկտ, իմպորտ, ինդիվիդուալ, ինդուստրիա, ինիցիատիվ, ինտելիգենցիա, տուրիստ, ինվեստիցիա, ինովացիոն, ինտերնացիոնալ, ինֆլյացիա, լեզալ, լիդեր, լիմիտ, կամպանիա, կատեգորիա, կլասիկ, բիզնեսմեն, կոմերցիա, կոմերցիոն, կոնկուրենցիա, կոնկուրենտ, կոնպենսացիա:

**Վարժություն 98.** *Տրված օտարաբանությունների հայերեն համարժեքներով կազմել նախադասություններ:*

Կոնտակտ, կոնտրակտ, կոնցեպցիա, կոմբինացիա, կրիզիս, կրիմինալ, կուրս, հիպոթեզ, մարկետ, վարիանտ, մոբիլ, մոդել, մոնոպոլիա, նալոգ, նալոգովի, պերիոդ:

---

---

**Վարժություն 99.** *Տրված բառերով կազմել նախադասություններ:*

Գովազդ, քաղաքականություն, անձնական, ծրագիր, ներուժ, սկզբունք, արտադրողականություն, ծախս, կարգավորում, արտադրանք, արհմիություն, ընթացակարգ, հիմնախնդիր, պահուստ, իրական:

**Վարժություն 100.** *Ընտրել և դեմ դիմաց գրել տրված օտարաբանությունների հայերեն համարժեքները:*

Սղելկա, դիրիժոր, սիստեմ, սպրոս, ստաբիլ, ստավկա, ստիմուլ, ստրախովկա, սպիրալ, սուվերեն, վալյուտա, վետո, տաբլիցա, տամոժնյա, տոտալ, տրադիցիա:

Արժույթ, խմբավար, ինքնիշխան, պարույր, դրույք, ապահովագրություն, կայուն, ավանդույթ, պահանջարկ, խթան, համակարգ, մաքսակետ, ընդհանուր, աղյուսակ, արգելք, գործարք:

**Վարժություն 101.** *Ընտրել և դեմ դիմաց գրել տրված օտարաբանությունների հայերեն համարժեքները:*

Տրադիցիոն, ցեխ, ցիկլ, ուտեչկա, ֆակտոր, ֆիքսել, ֆոնդ, ֆունդամենտալ, ֆունկցիա, օբյոմ, օպերացիա, օրինիտացիա, սխեմա, մակետ:

Գործողություն, կողմնորոշում, մանրակերտ, ծավալ, գործառույթ, հիմնարար, հիմնադրամ, ամրակայել, արտադրամաս, գծապատկեր, ավանդական, պարբերաշրջան, արտահոսք, գործոն:

**Վարժություն 102.** *Ո՞րը բառագիտության բաժին չէ: Գրել բառագիտության բաժինները:*

- ա) իմաստաբանություն, բ) շեշտադրություն, գ) ստուգաբանություն,
- դ) բառակազմություն

**Վարժություն 103.** *Ո՞րն է բառագիտության բաժին: Գրել բառագիտության բաժինները:*

- ա) իմաստակություն
- բ) շեշտադրություն
- գ) իմաստաբանություն
- դ) բառախաղ

---

**Վարժություն 104.** *Գտնել մենիմաստ բառերը և դրանցով նախադասություն կազմել:*

Եկամուտ, աշխատել, տուն, լսարան, ինքնաթիռ, խաղ, գլուխ, թև, խոսել, անցնել, պահել, տրոփել, կտրել, գալ, ընթերցել, ձգել, տալ, վերցնել, հանել, խողխողել:

**Վարժություն 105.** *Գտնել բազմիմաստ բառերը (ընդամենը՝ 2 բառ) և դրանցով նախադասություն կազմել:*

Տուն, շոգենավ, կանթեղ, վարսանդ, բարեկամ, երիկամ, կտցար, խեցեկիր:

**Վարժություն 106.** *Գտնել թերիմաստ բառերը (ընդամենը՝ 2 բառ) և դրանցով նախադասություն կազմել:*

Վաճառք, սակայն, դանդաղ, ուրախ, սայլ, բայ, բայց:

**Վարժություն 107.** *Ընդգծել թերմաստ բառերը:*

Հետո նա դարձավ ապստամբության օրերին: Հեղափոխությունը՝ իբրև միակ ելք, իբրև հոյակապ թռիչք դեպի ազատությունը, որպես միակ ճանապարհ, մարդուն հանեց լուսավոր ափ: Նա հիշատակեց ստեղծագործ աշխատանքը, երբ անսպասուները հագնում են ջրից, և ուրախանում է մարդն իր ոռոգած դաշտերով, երբ ծուխ է բարձրանում գործարանների ծխնելույզներից, և հերոսը դժվար աշխատանքով հալում ու կոփում է իր կամքը, որպես ամրակուռ պողպատ:

Նա անսպասելի վերջացրեց... Բոլորովին հանգիստ, առանց ձայնի բարձրացնելու: Մի վայրկյան լուռ մնացին. հետո բարձրացավ ծափերի աղմուկը: Կարծես հազար-հազար աղավնիներ թալտացին ու թափով ճախրեցին:

Մամուլ

**Վարժություն 108.** *Դասավորել պարզ և ածանցավոր բառերը առանձին շարքերով:*

Դաս, առաձգական, երկու, արմատ, մեկ, ածանց, բառ, պարտավորություն, բացահայտ, անձնական, առաջին, առաջնորդ, խտրականություն, գրանցում,

---

---

հնչյունափոխություն, ենթակա, կռունկ, կարպետ, ձիգ, տարմանություն, դրափոխություն, հնչյուն, հավելում, ամփոփում, սխալ, շեշտ, առավոտ, հինգերորդ, տասնյակ, հարյուրերորդ, սպակողմնորոշում, ամրակայել, գուգակցում, փաստացի, փոխըմբռնում, ծավալայնություն, ընդունակ:

**Վարժություն 109.** *Գտնել երկու արմատից կազմված բառերը (ընդամենը՝ 5 բառ):*

Արժեիջեցում, ավանդ, արդյունավետություն, արհմիություն, գործարք, գովազդ, գրանցում, գրակալ, դատողություն, երկընտրանք, եկամուտ, իրական, ինքնարժեք, խտրականություն, ծախս, կողմնորոշում, կոր, կարգավորում, հաշվապահական, հաշվապահ, հրաժարում, համակարգ, պահուստ, պահանջարկ, վաճառք, որոշիչ, տարբերույթ:

**Վարժություն 110.** *Գտնել երկու արմատից կազմված բառերը և դրանցով կազմել նախադասություններ (ընդամենը՝ 5 բառ):*

Արտադրանք, ավանդական, ավանդ, առածական, անձնական, արգելք, շոքա, հիմնախնդիր, հայեցակարգային, ջրկիր, որակական, կորագիծ, սկզբունք, ինքնարժեք, վաճառք, հրաժարում, ծրագիր, ներգաղթյալ, ներուժ, քաղաքականություն, հետագիծ, պարբերույթ:

**Վարժություն 111.** *Գտնել մեկ արմատից և մեկ ածանցից կազմված բառերը (ընդամենը՝ 3 բառ):*

Հայեցակարգ, հարկային, բացառիկ, հաշվեկշիռ, ժամանակահատված, արժեիջեցում, միջազգային, փաստացի, իրականություն, վերացական, ընդհանրացում, խտրականություն, միջնակարգ, շարժում, ներգաղթյալ, հարկ, վերլուծություն, մենաշնորհ, բուսականություն:

---

---

**Վարժություն 112.** *Գտնել մեկ արմատից և երկու ածանցից կազմված բառերը (ընդամենը՝ 3 բառ):*

Գործունություն, գործառույթ, վարկած, կողմնացույց, շուկա, գործուն, հիմնադրամ, անգործունակ, կողմնորոշում, հրաժարում, գնագոյացում, փոխարժեք, ծավալ, հայեցակարգ, հանցավորություն, հակաճգնաժամային, ավանդատու:

**Վարժություն 113.** *Գտնել երկու արմատից և մեկ ածանցից կազմված բառերը (ընդամենը՝ 6 բառ):*

Առաձգական, մտավորականություն, առաջնորդ, ապառիկ, առևտրային, բացահայտ, գնողունակություն, գրանցում, գործարքային, դասական, երկընտրանք, եկամտաբերություն, ընկերություն, պարտավորություն, խտրականություն, կենսագործունեություն, կանխավճար, մրցակցություն, պարբերույթ, ֆիրմային, ձեռնարկատիրություն, սահմանափակություն, շուկայական, վերավաճառք, տնտեսագիտություն, տնտեսություն, փոխհարաբերություն, կանխակալ:

**Վարժություն 114.** *Գտնել բնածայնական բառերը (ընդամենը՝ 8 բառ):*

Երկնչել, ձուլել, սիրել, կշկշալ, բերել, բանել, դաջել, գծել, արտույտ, արոր, կարապ, կաքավ, կկու, արագիլ, լորիկ, ճայ, ծախել, ծածկել, ծովանալ, ծլվլալ, չորանալ, լվանալ, ծաղրել, մանկանալ, բռնիչ, կոտրիչ, գրիչ, ճիչ, ցրիչ, մերսիչ, ուսուցիչ, ընկալուչ, ծանակել, ազատել, գրկել, ծղրտալ, ծլկել, ազուցել, աղանձել, մոռանալ, հեռանալ, մրմռալ, սարսռալ, սպրդել, սփրթնել, մոմռալ, գրգռել, բազմոց, օթոց, խայթոց, բզզոց, բոց, վզնոց, կապոց, քթոց, քորոց, մատնոց, ձեռնոց, տզզոց, հիշոց, պարանոց, գլխանոց, դպրանոց, խենթանոց:

**Վարժություն 115.** *Գրել աշխատ, վարձ արմատներով բաղադրված 5-ական բառ:*

**Վարժություն 116.** *Գրել գործ, գին արմատներով բաղադրված 5-ական բառ:*

---

**Վարժություն 117.** *Գրել հոդ, տուն արմատներով բաղադրված 5-ական բառ:*

**Վարժություն 118.** *Գրել ներ-, առ- նախածանցներով բաղադրված 5-ական բառ:*

**Վարժություն 119.** *Նշել այն բառը, որտեղ չկա **առ** վերջածանցը: Դրանով նախադասություն կազմել:*

ա) բացատ, բ) խրատ, գ) քնատ, դ) կոնատ

**Վարժություն 120.** *Նշել այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից: Դրանով նախադասություն կազմել:*

ա) ստեղնաշար, բ) գահերեց, գ) վերջնագիր, դ) դժկամորեն

**Վարժություն 121.** *Ո՞ր շարքում է **ավագ** բառի փոխաբերական իմաստը: Այդ իմաստով նախադասություն կազմել:*

ա) բախտ, ճակատագիր  
բ) դուրեկան, գրավիչ  
գ) անմեղ, պարկեշտ  
դ) շատ թույլ, անհաստատ, փխրուն

**Վարժություն 122.** *Ո՞ր բառը համանուն չունի: Դրանով նախադասություն կազմել:*

ա) բազուկ,      բ) մակույկ,      գ) հողաթափիկ,      դ) ճակատ

**Վարժություն 123.** *Ի՞նչ է նշանակում **ոթել** բառը: Դրանով նախադասություն կազմել:*

ա) բանսարկել,      բ) խարխափել,      գ) հեղել,      դ) նշավակել

**Վարժություն 124.** *Ի՞նչ է նշանակում **վարդ կտրել** դարձվածքը: Դրանով նախադասություն կազմել:*

ա) քաղել,      բ) փշոտվել,      գ) շառագունել,      դ) ուրախանալ

---

**Վարժություն 125.** *Տրված բառերից առանձնացնել աստված բառի հոմանիշները և դրանցով կազմել նախադասություններ:*

Բարձրյալ, ամանոր, տարեգիր, ամենաստեղծիչ, պանդուխտ, զարմիկ, ադամորդի, երկնակալ, աղեղնավոր, ամենարար, հայտարար, գոյարար:

**Վարժություն 126.** *Գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը:*

Ով պատմություն ունի, չի կարող ետ չնայել:

Ով անցյալ ունի, չի կարող հիշողություն չունենալ (Պ.Ս.):

Թութակ է քո գոված տղան,

Որ չգիտե իր լեզուն (Ռ.Պ.):

Մահն է բեկվում ճակտիս վրա,

Մահ, չգիտեմ, կա՞, թե՞ չկա:

Ելնում եմ ես ահերն ի վեր,

Ելնում եմ ես սարերն ի վեր,

Ահեր, մահեր, գահերն ի վեր:

Աչքերիս մեջ գարնան օրեր,

Ճամփես դեպի աստղերն անմեռ,

Ինձ ելնելու քարեր կան դեռ,

Ինձ ելնելու սարեր կան դեռ,

Ժայռեր, սարեր, դարեր կան դեռ (Հ.Շ.):

Օրոր էր ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Փայտահատը հին երգն էր կրկնում

Եվ բաց սղոցն իր յուղում էր կրկին,

Թեղին անտառբեր ականջ էր դնում

Տապալված կաղնու խուլ հառաչանքին (Հ.Ս.):

Աչքերն հառած հեռու-հեռուն կարմիր վառվող արեգակին՝

Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին,

Հո՞ծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝

Գեպի արևն էին գնում ամբոխները խելագարված (Ե.Չ.):

---

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ որ մեզ,  
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
Բութ հեզնեցին մեր կարոտները հրկեզ  
Ու հեռացան ու ոչ մի լույս չբերին (Ե.Չ.):

**Վարժություն 127.** *Գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը:*

Տանում ենք հնուց մեր գանձերն անգին,  
Մեր գանձերը ծով, ինչ որ դարերով  
Երկնել է, ծնել մեր խորունկ հոգին... (Հ.Թ.)

Երկու շիրիմ իրար կից,  
Հավերժական լուռ, դրկից,  
Թախծում են պաղ ու խորհում,  
Թե ինչ տարան աշխարհքից (Հ.Թ.):

Ափսո՛ս Անուշ, սարի՛ ծաղիկ,  
Ափսո՛ս իգիթ քու յարին,  
Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ,  
Ափսո՛ս էդ ծով աչքերին (Հ.Թ.):

Ու նրանց հետ ցող-արցունքով  
Լցված սրտերն ու աչեր,  
Սարի ծաղկունք տխուր սյուքով  
Հառաչեցին էն գիշեր (Հ.Թ.):

Ապիկար մարդիկ, ստրուկ ու վախկոտ,  
Ո՞վ տվեց սուրը նմանիդ ձեռքին,  
Ո՞վ տվեց նրանց վրեժի իրավունք,  
Իշխել, խողխողել իր նմաններին (Ա.Բ.):

Կույր ու գուլ մարդիկ, առանց երազի,  
Առանց լսելու հեքիաթն այս վսեմ,

---

Իրար կոկորդից պատառ եք հանում  
Եվ դարձնում աշխարհն ահավոր գեհեն (Ա. Ի.):

**Վարժություն 128.** *Գրել տրված դարձվածքների իմաստները:*

Ճանապարհ դնել, ճանապարհ բացել, քամուն տալ, քամու բերանն ընկնել, աչքերը բացել, հող դառնալ, հողը մոռանալ, երես չունենալ, երեսը սևացնել, աստծու կրակ, աստծու պահած, ոտքը կապել, ոտքը կախել, ջուր ծեծել, ջուր դառնալ, քունը խլել, քունը գլխին, սիրտը լցվել, սիրտը ճաքել, գլուխ պահել, գլուխ տանել, գլուխ բերել, գլուխ գալ, գլխին սարքել:

**Ձ Ե Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Վարժություն 129.** *Դուրս գրել գոյականները:*

Բեթովեն, խորհուրդ, հեղհեղուկ, խորիել, շնորհալի, հայիոյել, Հովհաննես, խորին, նշխար, հայթայթել, աշխարհիկ, օրհնյալ, ապաշխարել, շնորհակալություն, արհամարիել, խոնարհ, հելլեն, ընդդիմակաց, տարընթաց, կեղծամ, երկկողմ, ուխտաբեռ, հովասուն, հովել, մրրկածեծ, ակադճուն, իննամյա, հովվապետ, տանջալուկ, աշխարհայացք, վրջնահաշվարկ, մանրավաճառ, օրհներգ, մոտեցնել, հագեցնել, ակնակապիճ, աստղիկ, հատընտիր, արձակուրդ, ընդհանրապես, կասեցնել, կապտաթույր, ծաղկագարդ, սանրվածք, խոսեցնել, գծիկ, ժամացույց, անթիվ, անհարմար, այսօր, ճերմակ, հարավ, արևելյան, երկու, ռուսական, լինել, մենակ, դատարկ, ուսապարկ, կարմիր:

**Վարժություն 130.** *Դուրս գրել ածականները և դրանցով կազմել բառակապակցություններ:*

Քմահաճ, հյուսնություն, լսարան, խորագնին, հայրենադարձ, թշնամանալ, ընդամենը, սիգավետ, ալյակ, աղեկտուր, կարծրանալ, ճշմարտանման, աննկատ, արեգակ, ուսուցչուհի, որտեղ, վարագույր, լուսանկար, վերջ տալ, միմիայն, համալսարան, սենյակ, սափոր, ապերջանիկ, ժողովածու, կայծակնահար, իտալացի:

---

---

**Վարժություն 131.** *Դուրս գրել հորովված գոյականները՝ դիմացը գրելով բառերի ուղիղ ձևը:*

Հայաստանի, բանաստեղծության, վերջին, քառյակում, մեծանալ, տաղեր-գուի, քանքարի, փայլատակումից, քրոջից, վարորդի, համբերությամբ, դեպքից, վայրով, ժամանեց, ավտոտեսուչից, Արարատի, բարձունքից, հառնեց, Արագածից, սպիտակափառ, գագաթով, գիտական, հասկացություններից, տարորոշված, ճշգրիտ, ընդգծված, իմաստով, բազմած, լուսնի, հովի, թևին, թռչելով, սարում, գլխին, հավաքվեցին, գիշերով:

**Վարժություն 132.** *Դուրս գրել հատուկ գոյականները:*

Պարմանի, մախաթ, կարս, կարաս, վարսանդ, վասակ, աքցան, արտոս, ունելի, արոս, նախագահ, քուրմ, թույր, թալին, մատակ, քուռկիկ ջալալի, արփա, վտառ, գետառ, փասիան, վարդան, տաբատ:

**Վարժություն 133.** *Նշել նյութ նշանակող գոյականները:*

Ձեթ, անտառ, մատիտ, չիչխան, չամիչ, թանաք, մածուկ, հեղուկ, նավթ, կուպր, ոլոռ, ացետոն:

**Վարժություն 134.** *Նշել հավաքական գոյականները, բացատրել դրանց իմաստը:*

Բոլուկ, մուրիակ, ոհմակ, դասակ, բանակ, պարս, հարս, ուտելիք, ավար, ավատ, կտավատ, երամակ:

**Վարժություն 135.** *Նշել վերացական գոյականները, բացատրել դրանց իմաստը:*

Շունչ, տենչ, ճիչ, դադձ, ուրց, բախտ, թախտ, դրախտ, հարգանք, կարոտ, պախուրց, վախ:

**Վարժություն 136.** *Ընդգծել անհոգնական գոյականները:*

Կավիճ, վրձին, լիություն, պղինձ, լիճ, ծխախոտ, երիվար, առևտուր, փառք, մրգեղեն, ֆոսֆոր, Վահան, տախտակ, կամուրջ, երեխա, ածխածին:

---

**Վարժություն 137.** *Բառակազմական հետևյալ կադասարներով կազմել բարդ գոյականներ (յուրաքանչյուրից 5 գոյական):*

ա) գոյական+ածական, բ) ածական+գոյական, գ) բայահիմք+գոյական

**Վարժություն 138.** *Դուրս գրել բաղադրյալ հատուկ անունների այն շարքը, որի բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով, և դրանք կիրառել նախադասության մեջ:*

ա) հայկական սփյուռք, հանրապետության նախագահ, դավիթ անհաղթ  
բ) խրիմյան հայրիկ, ֆրանց բուպ, երվանդ սակավակյաց  
գ) մինա բիրի, սահակ պարթև, ռուսաստանի դաշնություն  
դ) դիոնիսիոս թրակացի, կատարի հանրապետություն, լառ մարգար

**Վարժություն 139.** *Հնարավորության դեպքում կազմել տրված բառերի հոգնակի ձևերը և դրանք կիրառել նախադասության մեջ:*

Օրագիր, Վահան, տիկին, այլ, վագր, սարք, կայսր, գյուղապետ:

**Վարժություն 140.** *Կազմել տրված բառերի հոգնակի ձևերը:*

Սարալանջ, ռուս, արձակագիր, նուռ, հողաթումբ, հորաքույր, մատ, արքայադուստր, հարս, մեծատուն, լրագիր, նստացույց, խմբագիր, թագակիր, կողմնացույց, ձեռագիր, համերգ, հանքահոր, սպա, վերնագիր, վիպագիր, տապանագիր, ռազմերգ:

**Վարժություն 141.** *Ո՞ր շարքի բառերի հոգնակին է կազմվում եր-ով:*

ա) պահեստապետ, հանքահոր, հանքափոր, վարգաձի  
բ) մեծատուն, հացատուն, դրամատուն, անձրևատունկ  
գ) վարդաջուր, պարտատեր, հողակոշտ, հանքաքար  
դ) հանդամաս, խոտհարք, խեցգետին, խաչակիր

---

---

**Վարժություն 142.** *Տրված բառերը փոխանվանաբար (գոյականաբար) կիրառել նախադասություններում:*

Մանուշակագույն, ինը, վեցերորդ, առաջատար, անշուշտ, սպիտակ, համեստ, խոնարհ, նկարել, պարել, արագ:

**Վարժություն 143.** *Հոլովել տրված բառերը:*

Սյունիք, Ջուղա, սեփեթանք, ընչացք, միջօրե, հախճապակի, տեսիլք, վախճան, բժիշկ, հիվանդ, հեղափոխական, անտառապահ, բանաստեղծ, նկարիչ, խմբագիր, դերասան, երգիչ, գող, ծխախոտագործ, նավթագործ, հերոս, դավաճան, զինվոր, պարտիզան:

**Վարժություն 144.** *Դուրս գրել ու հոլովման ենթարկվող բառերը և հոլովել:*

Հայրենիք, հոգեհանգիստ, լեռ, հարկ, հայորդի, սպա, ձի, Անի, սեր, հավաստագիր, մատանի, մասնատուփ, դաշնակահար, թքագեղձ, կղզի, սյուն, երաշխավորագիր, խնձորենի, աչք, բարդի, եզրագիծ, շահ, խոտաբույս, զինապարտ, քամի, զինախումբ, ոսկի, ածխահոր, ուխտատեղի, թատերափորձ, թունանյութ, Նաիրի:

**Վարժություն 145.** *Դուրս գրել հոլովված բառերը՝ դիմացը գրելով հոլովը:*

-Հա՛, եթե Առաքելին տանուտեր չընտրեք այս անգամ,- հանդիմանական ձայնով դիմելով գյուղի երևելիներին՝ ասաց բարձրաստիճան սպան,-էլ ձեզ պրծում չկա:

-Ա՛յ կնիկ, մեզ մի շուն է պետք, գյուղի ծայրին ենք,- ասաց Մանասը: Պատմում են, թե ինչպես Առաքելը գիշերով հանդ էր գնում: Չորակում շինվող տները սուր-սուր փշերի պես Առաքելի աչքը մտան: Ամեն գարնան Օրանջիայում այնքան վարդեր են լինում՝ դեղին, սպիտակ: Պարիսպների գլխին ցինը և անգղը ամուր բույներ են հյուսել: Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ: Հեռվից ավերակներ չեն երևում. այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը:

**Ա. Բակունց**

---

---

**Վարժություն 146.** *Դուրս գրել հոլովված բառերը՝ ղիմացր գրելով հոլովը:*

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալախական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, և ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հավում վերևում՝ ամպերի մեջ: Կաքավաբերդի քարերը, քնից նոր արթնացած մանուկների նման կենդանացած, խոսում էին հնագետի հետ: Բերդի մուտքը նկարելիս մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնը լսելով՝ մի անգղ կռնչյունով թռավ բնից: Եվ երբ պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները և ինչ են փնտրում, պահակը սպառիչ պատասխան տվեց: Վրաններից մի մարդ՝ մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը թաշկինակով փաթաթած, բարձրացավ բերդի քարափով: Մարդը տեսավ ակնոցավորին մի քար տեղահան անելիս: Գրքերում գրված է, որ Կաքավաբերդի գլխին՝ կարասի մեջ, թաղված են ոսկե գանձեր:

**Ա. Բակունց**

**Վարժություն 147.** *Գտնել բացառական հոլովով դրված բառերը:*

Բլրաչափ քարեր ժայռերից պոկում,  
Փախչող նավերի ետքից շարտում (Ղ.Ա.):  
Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական  
Դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան... (Ե.Չ):  
Նագում ես ու շորորում գմբուխտե քո շորերում՝  
Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի (Հ.Ս.):  
Հեռվից խաղալով և խայտալով վագում էր սպիտակ ձին. քամին փռփռացնում էր բաշը, և ձին կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները (Ա.Բ.):  
Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը (Ա.Բ.):  
Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը (Բ.):  
... Լուսնի եղջյուրը ծածկվեց Քարքե լեռան ետևում, և Տարոնն ընկղմվեցավ գիշերային խավարի մեջ (Բ.):  
Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան (Մ.):  
-Ամփոփի՛ր ինձ միջնաբերդի առաջ, որպեսզի այնտեղից կարողանամ հսկել Աշոտ Բռնավորի շիրիմին, որ նա յուր շուրջն ամփոփված սրբերին չդավաճանե (Մ.):

---

---

Մի օր էլ գյուղում լուր տարածվեց, թե կռիվը վերջացել է, և գորքը տուն է գալու (Ա.Բ.):

Արյուն է եղել աշխարհում... եղել է եղեռն ու կռիվ,  
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ,  
Աշխարհից հեռու մի գյուղում՝ եղեգնյա մի սրինգ կտրած,  
Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին (Ե.Չ.):  
Ապիկար մարդիկ, ստրուկ ու վախկոտ, Ո՞վ տվեց սուրը նմանիդ ձեռին,  
Ո՞վ տվեց նրան վրեժի իրավունք, Իշխել, խողխողել իր նմաններին (Ա. Ի.):

**Վարժություն 148.** *Դուրս գրել **աճ** հոլովման ենթարկվող բառերը և հոլովել:*

Զմրուխտ, գարուն, ջանք, ձի, գիշեր, դեմք, նուռ, աղանդ, դաշտ, անուն, աղբյուր, դուռ, ամառ, սահման, արյուն, խավար, թագավոր, սուրբ, հայացք, ձուկ, զեկուցում, մանուկ, փիլիսոփա, բեռ, դար, վերաբերմունք, ծոռ, պատմիչ, քրիստոնեություն, թոռ, սառույց, աշուն, ձմեռ, սյուն, վարք, պատմություն, տարածում, պատերազմ, ավանդավեյ, մուկ, լուծում, տարի, մահ:

**Վարժություն 149.** *Դուրս գրել **վա** հոլովման ենթարկվող բառերը և հոլովել:*

Մուկ, մարդիկ, հարս, բոպե, Շուշի, տետր, կադր, բեռ, տիկնայք, հայր, ամիս, սկեսուր, օր, կեսօր, տեգր, շաբաթ, անկողին, շուն, տարի, ձյուն, քավոր, Լոռի, բարդի, եղբայր, Գյումրի:

**Վարժություն 150.** *Դուրս գրել **ոջ** հոլովման ենթարկվող բառերը և հոլովել:*

Աշուն, շաշկի, քույր, ամուսին, կացին, թիմ, լուսին, ծառա, ամիս, շաբաթ, տեգր, կատու, ամպրոպ, գաթա, կին, մարդ, զեկուցում, ընկեր, ծոռ, տիկին, հորեղբայր, արյուն:

**Վարժություն 151.** *Ընդգծել **ո** հոլովման պատկանող գոյականները: Դրանցով նախադասություն կազմել:*

Դար, քույր, եղբայր, ընկեր, մայր, հայր, ուսուցում, մահ, սյուն, նախահայր, Բաֆֆի, օղի:

---

**Վարժություն 152.** Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակերտն է **-ներ** մասնիկը:  
Այդ բառերով կազմել նախադասություններ:

- ա) հարս, պետ, ուղենիշ
- բ) աստղ, մատ, դավաճան
- գ) նուռ, վարկանիշ, թաղապետ
- դ) բանակ, հարս, ազդր

**Վարժություն 153.** Որոշել ուղղական կամ հայցական հոլովով դրված գոյականի պաշտոնը:

- ա) Բժիշկ Արամը այցելեց մեզ:
- բ) Նա անաչառ լրագրող է:
- գ) Երեկոյան գնացինք կինո:
- դ) Բանվորը շարեց պատը:

**Վարժություն 154.** Որոշել սեռական կամ տրական հոլովով դրված գոյականի պաշտոնը:

- ա) Ուսանողի վերաբերմունքից մնացինք ապշած:
- բ) Կատուն գաղտագողի մոտեցավ սեղանին:
- գ) Աշխենը զբոսնում էր ձիով:
- դ) Ո՛չ կարելի է կանգնել աթոռին, ո՛չ էլ նստել պատուհանագոգին:

**Վարժություն 155.** Ընդգծել ածականները:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞նջ է արդյոք, թե՞ մեռած:  
Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը՝ ասին... (Ե.Չ.):  
Որքան աշխարհը սիրես ու աշխարհով հիանաս,  
Այնքա՛ն աշխարհը անուշ ու ցանկալի կլինի:  
Ավա՛դ, լուսնի տակ և վեհ բան չկա... (Հ.Շ.):  
Այսքանից հետո ի՞նչ կոչես նրան  
Մեր կեռմանաշատ երթուղու վրա...  
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում,

---

---

Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր... (Ե.Չ.):

Գուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը (Ա.Բ.):

Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աթարի առաջ: Արտի մեջ կանգնել էր՝ ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մոլախտի մի կապ (Ա.Բ.):

Յոթն անգամ ահա ատում եմ, ատում իշխանությունը՝ սերունդներ լափող:

Եվ քարավանը, փոշու մեջ կորած, քայլում էր դանդաղ, հոգնած, քրտնաթոր:

Եվ նգովում եմ իշխանությունը՝ հազարաճիրան մոլի բորենին:

(Ա. Ի.):

**Վարժություն 156. Տեքստը հարստացնել ածականներով:**

Չնայած շոգին՝ օրիորդն առանց հովանոցի էր ու քայլելիս էլ մի տեսակ թափահարում էր ձեռքերը: Մի օր՝ կեսօրից հետո, հանկարծ շոգենավի սուլիչը ազդանշան տվեց, և բոլոր ճամփորդներն իրենց խցիկներից վազեցին դուրս՝ տեղեկանալու՝ ինչ է պատահել:

Եղե՞լ է արդյոք այս պատմությունը, թե՞ մի հեքիաթ է, դժվար է ասել, բայց կա գյուղը, կան քարանձավները, կա աղբյուրը, և կա գերեզմանը, իսկ գերեզմանի վրա՝ ոչ մի անուն:

Մինա բիբին մնաց սառած. Անժիկի պատասխանը մի զգացում ծնեց նրա մեջ, և նա կանգնեց խաչքարի մոտ, ինչպես մի երկրորդ խաչքար:

Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտեր են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքերը:

(Ա.Բ.):

**Վարժություն 157. Ընդգծել որակական ածականները:**

Ցածր, կիզիչ, դեփ-դեղին, ժլատ, քարոզիչ, նարնջագույն, պատանեկան, ստերջ, պարկեշտ, ջրալի, դաշտային, թավշյա, ասվե, գուլալ, ուրախ, կանգուն, քաղցր, գիտուն, անվճար:

---

---

**Վարժություն 158.** *Դուրս գրել որակական ածականները և դրանք կիրառել նախադասություններում:*

Բարձր, հմայիչ, սեփ-սև, շվայտ, ավերիչ, մարմնագույն, աշակերտական, ամուրի, առաքինի, թունդ, լեռնային, բրդյա, պղտոր, տխուր, լեփ-լեցուն, երերուն, դյուֆիչ, հիմար, վճարովի:

**Վարժություն 159.** *Նշել այն շարքերը, որոնցում բոլոր ածականները հարաբերական են (նշված շարքերի ածականներով կազմել նախադասություններ):*

- ա) դյուֆիչ, շքեղաշուք, ճերմակ
- բ) գծուծ, անարատ, ստերջ
- գ) ամուրի, դատարկ, ասյուշ
- դ) կաշվե, մարմարե, ասվյա
- ե) կիզիչ, հմայիչ, քաղաքային
- զ) շվայտ, պղտոր, ոսկե
- է) ամուրի, ճեփ-ճերմակ, հիմար
- ը) թունդ, տխուր, ամուր

**Վարժություն 160.** *Ընդգծել հարաբերական ածականները:*

Կապույտ, ոսկեդեն, մեծ, ժամանակավոր, երկար, թեթև, կանաչ, տպագիր, ցրտաշունչ, անխելք, արևելյան, աշակերտական, տզետ, մայրական, դժկամ, բրոնզաձույլ, ցասկոտ, հատուկ, ամենահեշտ, գարնանային, ոսկեգօծ, բաց կանաչ, խուլ ու համր, ժողովրդական, ավելի շքեղ, պողպատյա, բնակելի:

**Վարժություն 161.** *Դասդասել որակական և հարաբերական ածականները:*

Քարաշեն, ուժեղ, կաղնեփայտե, ջահել, խոշոր, մռայլ, ազատ, դեղին, ճքճքան, աղմկալի, հայրական, ապերախտ, գունավոր, երկտեղանի, տհաս, սիրելի, յուղոտ, ժպտուն, ամառային, բարձրագույն, պողպատակուռ, մուգ կարմիր, կանաչ-կարմիր, երկաթյա, մայրենի, ուրախալի, շատ բարձր, հոտավետ, սպիտակ, հրացանավոր, կավաշեն, կարմիր, պարաֆինե, հաստ, գորշ, մաքուր, կաթնագույն, ծաղկավոր, բազմակողմանի, անհոգ, ապաշնորհ, ավանդական, դժբախտ, համեղ, հայրենի, մերժելի, համոզիչ, ամենալավ, գյուղական, մեծագույն, թունդ սև, ավելի մեծ, թավշյա, ցողապատ, ազգային, յոթգլխանի:

---

**Վարժություն 162.** *Կազմել թույլ, սիրելի, շատախոս, ջերմ ածականների համեմատության աստիճանները և դրանք կիրառել նախադասություններում:*

**Վարժություն 163.** *Տրված գոյականներից կազմել ածականներ:*

Հայ, հույն, ռուս, պարսիկ, ասորի, թաջիկ, աֆղան, քուրդ, աղվան, թաթար, չեխ, լեհ, լատիշ, չին, շվեդ, լեզու, բեկոր, ժամանակ, կարգ, օր, գիր, բառ, բառարան, արքա, թագավոր, կյանք, ցեղ, պապ, հայր, մայր, հայրապետ, հեղինակ, անուն, այբուբեն, քարոզիչ, թարգմանիչ, խոսակից, Մաշտոց, Դանիել, Երևան, Կովկաս, Իրան, կիսամյակ, գաղափար, հնչյուն, վեպ, բանաստեղծ, ամանոր, անձրև, տարածք, տարբերակ, գրաբար, բարբառ, ժարգոն:

**Վարժություն 164.** *Կազմել 5 նախադասություն՝ գործածելով դասական թվականներ:*

**Վարժություն 165.** *Կազմել 5 նախադասություն՝ գործածելով քանակական թվականներ:*

**Վարժություն 166.** *Կազմել 5 նախադասություն՝ գործածելով բաշխական թվականներ:*

**Վարժություն 167.** *Ո՞ր շարքի բոլոր թվականներն են պարզ կամ արմատական: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) ինը, հինգ, քսան
- բ) տասնմեկ, քառասուն, երեք
- գ) տասնութ, քսանութ, հարյուր
- դ) տասը, երկու, տասներկու

**Վարժություն 168.** *Նշել այն շարքը, որի թվականները պարզ կամ արմատական են և դրանցով կազմել նախադասություններ (յուրաքանչյուրից երկուական նախադասություն):*

- ա) տասնինը, երեսուն, ինը
- բ) յոթ, վեց, հարյուր
- գ) քառասուն, մեկ, հազար
- դ) տասը, երկու, տասնմեկ

---

**Վարժություն 169.** Ո՞ր շարքի բոլոր քվականներն են ածանցավոր: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) տասնյոթ, իննսուն, երեք
- բ) քսանմեկ, ինը, տասներեք
- գ) վեց, իննսունինը, ութսունմեկ
- դ) երեսուն, հիսուն, յոթանասուն

**Վարժություն 170.** *Գրել տվյալ տառերի քվային արժեքը:*

- ա) ԻԵ,      բ)ԸՉՀԷ,      գ) ԺԱ,      դ) ՊՁ,
- ե) ԲՃ,      զ) ՓԽԲ,      է) ՉՀԷ

**Վարժություն 171.** *Տրված քվերը գրել տառերով:*

- ա) 55, 555, 5555, 1002                      ե) 15, 93, 64, 88
- բ) 99, 125, 33, 820                              գ) 52, 63, 120, 78
- զ) 65, 905, 10020, 1002                      է) 52, 63, 120, 778
- դ) 99, 12, 33, 82                                ը) 21, 93, 64, 808

**Վարժություն 172.** Ո՞րն է Կոմիտասի ծննդյան քվականը:  
*Դրանով նախադասություն կազմել:*

- ա) ՌՊԿԹ,      բ) ՌՅԺԸ,      գ) ՍՇԽԵ,      դ) ՌՋԾԹ

**Վարժություն 173.** Ո՞րն է Հովհաննես Թումանյանի ծննդյան քվականը:  
*Դրանով նախադասություն կազմել:*

- ա) ՌՊԿԹ,      բ) ՌՅԺԸ,      գ) ՍՇԽԵ,      դ) ՌՋԾԹ

**Վարժություն 174.** Ո՞րը քվականի տեսակ չէ: *Գրել քվականի տեսակները:*

- ա) բյուրավոր,      բ) կոտորակային,      գ) տասնորդական,      դ) դասական

---

---

**Վարժություն 175.** *Ո՞ր շարքում թվականից բացի այլ խոսքի մաս կա:*

- ա) վեցական, յոթերորդ, ութ-ութ, միլիոն
- բ) տաս, զրո, տասներկու, վեց-վեց
- գ) երկու հարյուր քսան, տրիլիոն, հարյուրական
- դ) հազարերորդ, երեք-երեք, մեկ հինգերորդ

**Վարժություն 176.** *Հետևյալ նախադասություններում ընդգծել՝ փոխանուն թվականները:*

- ա) Վտանգի պահին միշտ էլ օգնության է գալիս վեցերորդ զգայարանը:
- բ) Նրանցից երկուսը հասան փողոցի անկյանն ու կանգ առան:
- գ) Անձանոթը երեսունութին մոտ մարդ էր՝ բարձրահասակ ու ճաղատ:
- դ) Նա բեմահարթակ բարձրացավ առաջինը:

**Վարժություն 177.** *Նշված հատկանիշներից ո՞րը հատուկ չէ քանակական թվականներին: Գրել քանակական թվականներ:*

- ա) Արտահայտում են թվային քանակ:
- բ) Կազմվում են –րորդ և -երորդ ածանցներով:
- գ) Արտահայտվում են հայերենի այբուբենի տառերով:
- դ) Կազմությամբ լինում են արմատական, բարդ և ածանցավոր:

**Վարժություն 178.** *Տրված բառերը դասդասել ըստ խոսքիմասային պատկանելության:*

Հապճեպ, սույն, կողքանց, զննել, յոթ, մտահոգ, մորթի, պատրույգ, ոսկեգօծ, տասնութ, ակնազարդ, ուրիշ, աշխույժ, բյուր, մղկտալ, ե՞րբ, խեղդել, կոկորդ, խոնարհել, Հազկերտ, առաջին, հոգևորական, Սոֆիա, քաղաք, ինը, նույն, բարձունք, ուղեկցորդուհի, բազում, թուրթ, վերջին, վայրկյան, ողջ, հասարակած, տասնինը, ինչ-որ, արծաթահնչյուն, միլիարդ, օվկիանոս, հազարավոր, ամեն ոք, անջրդի, ջրաբքի, հարյուր յոթ, միևնույն, մարգագետին, հարավային, ո՞ւր, հազար, ալեհույզ, իննսունինը, երկարուձիգ, մրրկաձյուն, երրորդ, նժույզ, որևիցե, օրորվել, սրթսրթալ:

---

---

**Վարժություն 179.** Ո՞ր շարքում դերանվան գործածության սխալ չկա: Ուղղել սխալները:

- ա) իրեն հետ, քեզ համար, մեզ պես, քո վրայից
- բ) իմ համար, իր համար, մեզ մոտից, ձեզ վրա
- գ) ինչու համար, մեզ չափ, իմ վրա, իրեն համար
- դ) քեզ նման, իր նման, մեզ նման, ձեզ պես

**Վարժություն 180.** Ո՞ր շարքում են դերանունները ճիշտ տեղադրված: *Դրանցով նախադասություն կազմել:*

- ա) ցուցական – սույն, միևնույն, այսպես, նույն, այդքան
- բ) հարաբերական- որ, ուր, ինչպիսի, որպիսի, ե՞րբ
- գ) անորոշ – ուր, ով, ուրևէ, ինչ-որ, ուրիշ
- դ) որոշյալ - ամենքը, ամեն մեկը, բոլոր, որերորդ, որևէ

**Վարժություն 181.** Նշել անվանական հոլովման ենթարկվող դերանունների շարքը: *Դրանցով նախադասություն կազմել:*

- ա) ես, բոլոր, այսքան, դու
- բ) միմյանց, իրար, ամենքը, յուրաքանչյուր
- գ) ամբողջ, սա, դա, մենք, ով, ինչ
- դ) այստեղ, ինքը, դուք, ամեն ինչ

**Վարժություն 182.** Ո՞ր նախադասության մեջ փոխադարձ դերանուն կա: *Նշել նախադասության անդամների խոսքիմաստային պատկանելությունը:*

- ա) Կարճրաթուշ մի մանուկ էր նա՝ առավոտվա մածունը շուրթերին:
- բ) Ի վերջո սոսկում էր Իվան բեյը միմյանց ուղղված ահավոր խոսքերից:
- գ) Միայն ներքևում՝ ուռիների ստվերում, մնջում էին այն կովերը:
- դ) Սիրում էր այգին ու արտերը ջրել. դրանից մեծ հաճույք չկար նրա համար:

---

---

**Վարժություն 183.** Ո՞ր խոսքի մասերին չեն կարող փոխարինել դերանունները:

Գոյական, ածական, թվական, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, վերաբերական:

**Վարժություն 184.** Ո՞ր շարքում են դերանունները ճիշտ տեղադրված:  
Դրանցով նախադասություն կազմել:

- ա) փոխադարձ – միմյանց, իրար, մերոնց, մեկմեկու, մեկմեկի
- բ) հարաբերական- որ, ինչ, ինչպիսի, որպիսի, ինչքան
- գ) անորոշ – ուր, ով, ուրևէ, ինչ-որ, ուրիշ
- դ) որոշյալ - ամենքը, ամեն մեկը, բոլոր, որերորդ, որևէ

**Վարժություն 185.** Ո՞ր նախադասության մեջ որոշյալ դերանուն կա:

ա) Գիտեի, որ հեռաբնակ հորեղբայրներիցս ոմանց ազգանունը Գույումջյան էր:

- բ) Առաջին անգամ գիտակցեցի, որ այսպես թե այնպես հայ եմ:
- գ) Այդտեղ ամենքը խոսում էին հայերեն:
- դ) Հորդ ընտանիքը հայկական արյուն ունի, սակայն ինքն անգլիացի է:

**Վարժություն 186.** Ո՞ր բառերին չեն կարող փոխարինել դերանունները:

Մուգ, երկինք, արև, մոտ, իննսուն, ջինջ, այս, լիճ, լուսե, ձմեռ, ամառ, ութսուն, վիշապաձայն, բուք, ուրեմն, երրորդ, վսեմ, ինձ, ոչ մի, ահավասիկ, հեքիաթ, արագ, ճակատ, անցնել, կամ, վա՛յ, տասը, նաև, աշխարհ, վրա, ո՞ւր, Արարատ, բարեկամաբար, ճերմակ, անհաս, մանավանդ, հպարտորեն, փառք, հետ, ճամփա, Մասիս, սար, անտառ, հե՛յ, անդարձ, ամպ, ծվեն, հին, լինել, ո՞վքեր, կապույտ, անցնել, մշուշ, օրոր, ասել, մավի, աշուն, ո՞ր, գնալ, սակայն, քուն, տանել, երևի, վաղուց, հայացք, անհայտ, լաջվարդ, Սոնա, շապիկ, հեռու, սիրտ, դանդաղ, միտք, անհուն, թափառել, սահուն, կարոտ, ամեն, անգամ, երբ, դառնալ, դեպի, քեզ, տրորել, երես, դաշտ, մեղմորեն, ծաղկավառ:

---

---

**Վարժություն 187.** *Ընդգծել դերանունները:*

Գուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի,  
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա:  
Ոչ մի ստվեր կախադանին թող մոտ չգա:  
Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ,  
Ու օրորվեմ եղերական ու անբասիր...(Ե.Չ.)

Ոչ ոք չի հաղթի արքա Աթիլին:  
Այր մի, որ եկավ ապացուցելու,  
Թե մի տեղ վերջը դառնում է  
Սկիզբ (Ե.Չ.):

Մի հավք զարկի ես մի օր,  
Թռավ գնաց վիրավոր:  
Թռչում է նա իմ մտքում,  
Թևքը արնոտ ու մոլոր (Հ.Թ.):

Քո աչքերի, քո աչքերի պատճառով,  
Իմ աչքերը ամբողջ գիշեր, ամբողջ գիշեր չեն փակվում:  
Ինչո՞ւ իզուր հանգցնում ես,  
Ջահել կրակն աչքերիդ:

**Վարժություն 188.** *Ո՞ր բառերին չեն կարող փոխարինել դերանունները:*

Ճանապարհ, անուշ, շնորհիվ, նախանշել, սակայն, Հայաստան, երանի՛, տուն, հասկ, գերդաստան, արևահամ, անշուշտ, հին, գոնե, հանդերձ, ողբանվագ, հետ, հարկավ, լացակումած, լար, անգամ, սիրել, բայց, հանուն, ինը, արնանման, ծաղիկ, ա՛խ, նաիրյան, աղջիկ, հե՛յ, հեզաճկուն, պար, միասին:

**Վարժություն 189.** *Ո՞ր շարքում բայական խոնարհիչ (լծորդիչ) չկա: Տրված մասնիկներով բառեր կազմել:*

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| ա) ապ-, դժ-, -իչ, -իլ, -ակ  | զ) -եղեն, -ք, -աշ, -ոտ, -ատ |
| բ) -ուչ, -անի, -ալ, ան-, տ- | դ) -իք, -իկ, -ել, -եղ, -յան |

---

**Վարժություն 190.** Ո՞ր շարքում **ա** խոնարհման բայ չկա: *Գրել տրված բայերի անորոշ դերբայները:*

- ա) կկանչի, խաղար, հեռացի՛ր, լինեի՛նք
- բ) պատմեմ, պիտի սովորենք, մոտեցավ, բե՛ր
- գ) չանսաց, չասաց, կերկմտեր, երկնես
- դ) չընդունեց, կըմբռներ, պիտի խորհի, ոթելիս

**Վարժություն 191.** Ո՞ր շարքում են միայն ներգործական սեռի բայեր: *Գրել տրված բայերի հրամայական ձևերը:*

- ա) միացնել, ատել, համբուրել, ցատկել
- բ) սլանալ, հորդել, ջարդել, ամաչել
- գ) նշել, կատաղել, պայտել, սովարանալ
- դ) ճմլել, գողել, հերկել, հերքել

**Վարժություն 192.** Ո՞ր շարքում են միայն անկանոն և պակասավոր բայեր: *Գրել տրված բայերի անցյալ կատարյալի ձևերը:*

- ա) գալ, լալ, տալ, ասել, խոսել
- բ) ուտել, զարկել, բացել, բերել, քերել
- գ) բանալ, դնել, բառնալ, դառնալ, լվանալ,
- դ) կենալ, անել, քնել, եփել, թափել

**Վարժություն 193.** *Ընդգծել ենթակայական դերբայները: Գրել բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) Թող ոչ մի ծնող զավակ չկորցնի:
- բ) Մի լրագրող հայտնեց ճշմարտությունը:
- գ) Թելադրություն գրող աշակերտը դուրս եկավ:
- դ) Մի՛ վախենա հոսող գետից:

---

**Վարժություն 194.** *Ընդգծել համակատար դերբայները: Գրել բայերի հրամայական ձևերը:*

- ա) Հարգելի՛ս, ընդունի՛ր հրավերս:
- բ) Նրան հանդիպելիս ժպտում է:
- գ) Երեխային սիրելիս հուզվում էր:
- դ) Դու, սիրելի՛ս, չես ճանաչում նրան:

**Վարժություն 195.** *Ընդգծել դերբայական սխալ ձևերը: Տրված բայերով նախադասություններ կազմել:*

Ծաղկացնել, հիշացնել, սառեցնել, թոնոլ, փախնոլ, հալչել, հալչած, սպասացնել:

**Վարժություն 196.** *Ընդգծել բազմապատկական բայերը: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

Ճաշոտեց, կեղտոտվել է, կմրոտի, պիտի կտրատի, քաշկոտեցին, մի՛ պոկոտիր, փոշոտելու ես, թռչկոտեր, ցեխոտեցին:

**Վարժություն 197.** *Ընդգծել հրամայական բայերի սխալ ձևերը: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

Մի՛ գնա, մի՛ մոտեցիր, փախցրո՛ւ, երգի՛ր, մի՛ թռի, կորցրո՛ւ, մի՛ փախնիր, մի՛ ներս մտի:

**Վարժություն 198.** *Ո՞ր շարքում ըղձական եղանակի բայ կա: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) ցանկանում ենք, շրշում էին, պիտի տխրեր, ըմպի՛ր
- բ) խոնջանալու ես, կասեցրեց, երագի՛ր, ազուցեցինք
- գ) կկոցեց, հորդելու է, լինեին, ճարճատում են, սպրդեց
- դ) արդուկելու ենք, կկպչեր, ուզում է, տենչում եմ

---

**Վարժություն 199.** Ո՞ր շարքում սխալ բայածև կա: *Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) կընկներ, աղճատել է, պիտի նվիրվի, կամայանա
- բ) սեթևեթում էին, պչրվեր, տուժվել են, գուժում էին
- գ) արածեցրել է, հեռացի՛ր, մի՛ լար, մի՛ բարբառիր
- դ) կցնցվի, ասացին, ցայտելու էր, հիշեցրեց

**Վարժություն 200.** Ո՞ր նախադասության մեջ հարկադրական եղանակի բայ կա:

- ա) Մի կասկած օձի պես աննկատ սողաց, սրտի մեջ կծիկ դարձավ:
- բ) Կարմրաքարում ոչ ոք ջրաղացպանի նման պատմություններ չգիտեր:
- գ) Եթե լուսադեմին մառախուղ է լինում, ապա ցերեկով ի՞նչ եղանակ պիտի լինի:
- դ) Նա հանեց ծիրանի փողը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը:

**Վարժություն 201.** Ո՞ր շարքում բայական խոնարհիչ (լծորդիչ) չկա: *Տրված մասնիկներով բառեր կազմել:*

- ա) չ-, դժ-, -ին, -իլ, -ակի
- բ) -ունի, -անի, -ել, ան-, տ-
- գ) -եղեն, -ք, -աշ, -ոտ, -ատ
- դ) -իք, -ստան, -ալ, -եղ, -յակ

**Վարժություն 202.** Ո՞ր շարքում ա խոնարհման բայ չկա: *Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) կհորդեինք, բուրի՛ր, չժպտացող, կարկառած
- բ) վարգում էին, կցնծային, մի՛ ճախրիր, դոփում էին
- գ) կկարկամես, տատամսեց, պիտի հայթայթի, սրդողած
- դ) զվարթացող, պարծեցել են, գժվի, արդուկված

---

**Վարժություն 203.** Ո՞ր շարքում են միայն ներգործական սեռի բայեր:  
*Դրանցով նախադասություն կազմել:*

- ա) անջատել, համբուրել, թռչկոտել, մոտեցնել
- բ) փշրել, աղալ, ջարդել, պայտել
- գ) ապավինել, մոլեգնել, ավետել, ամաչել
- դ) ամփոփել, կարդալ, ջրել, ցցվել

**Վարժություն 204.** Ո՞ր շարքում են միայն անկանոն և պակասավոր բայեր:  
*Դրանով նախադասություն կազմել:*

- ա) գնալ, գալ, լալ, տալ, ասել
- բ) ուտել, զարկել, բացել, բերել, ցանկալ
- գ) բանալ, դնել, հանել, դառնալ, լվանալ
- դ) կենալ, անել, տանել, ելնել, խառնել

**Վարժություն 205.** Ընդգծել հարակատար դերբայները:

- ա) Երեխաները սիրում են խորոված ուտել:
- բ) Տունը կանգնած է գյուղի եզրին:
- գ) Շուրջբոլորը համատարած լռություն է:
- դ) Վախեցած նապաստակը թաքնվել էր:

**Վարժություն 206.** Ընդգծել ապակատար ձևաբայերը:

- ա) Այս մասին երկար է խոսվելու:
- բ) Նա ձեր ներկայությամբ չի երգելու:
- գ) Դու ես դրդում նրան մեկնելու:
- դ) Սա բաժանելու հող չէ:

**Վարժություն 207.** Ընդգծել սխալ բայաձևերը:

Ուսուցանել, կռվացնել, գծվացնել, տուժվել, սարսափացնել, թռնելուց, խոսալով, լացել, արածացնել, արթնանալ, խոսեցնել, զարթնացնել, զանգվել, խմցնել, մեծամտանալ, ուտացնել, հասունանալ, լռացնել, վարագուրել, լրացնել:

---

**Վարժություն 208.** *Ընդգծել սուկածանցավոր բայերը: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

Կամենում ենք, լինեի, դիպավ, անցավ, մոռացել է, կժպտան, փախավ, կորել էր, նագում ես, գտնվում է, հեռացի՛ր, շորորա՛, մոտեցրո՛ւ, զնգում է, հասկացրո՛ւ, կվախեննա, մերձեցրեց, պիտի խաղան, մահացավ, հպարտացի՛ր, թռան, գգվի՛ր:

**Վարժություն 209.** *Ընդգծել հրամայական բայերի սխալ ձևերը: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

Մի խոսա, մի՛ լսի, հեռացի՛, արածացրո՛ւ, թռչի՛ր, կորե՛ք, ելի՛ր, ե՛տ վերադարձիր, վե՛ր բարձրացիր:

**Վարժություն 210.** *Ի՞նչ է նշանակում տոգորել բայը: Գրանով նախադասություն կազմել:*

ա) արծարծել, բ) հրավիրել, գ) համակել, դ) հրաժարվել, ե) տառապել:

**Վարժություն 211.** *Ո՞ր շարքում պայմանական եղանակի բայ կա: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) ջարդվեց, փշրում էին, վառվեին, պիտի տիրեր
- բ) խոնարհելու ես, մատնանշի՛ր, ագուցեցինք
- գ) կկոցեց, հորդելու է, ճողոպրում են, սպրդեց
- դ) արդուկելու ենք, կկաչեր, պարսավելի է, վրդովվում են

**Վարժություն 212.** *Ո՞ր շարքում սխալ բայածև կա: Գրել տրված բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) կընկղմեր, աճապարել է, պիտի ներկվի, կամլանա
- բ) նազկտում էին, պճնված է, տրվել են, գայթում էին
- գ) արծարծել է, կզանգվես, մի՛ բախիր, մի՛ բարկանա
- դ) կցնծալին, ասացող, կայծկլտալու էր, հիասթափեցրեց

---

**Վարժություն 213.** Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայ չկա:

- ա) Այդ երեկոն վառ է մնացել հիշողությանս մեջ:
- բ) Մտածում էի, թե ինչպես պիտի վերաբերվեմ այս նախնիներին:
- գ) Ժամանակի հոլովույթը Նաիրին վերածեց Ուրարտուի թագավորության:
- դ) Գիրք ծննդոցում կլինի այդ մասին:

**Վարժություն 214.** *Դուրս գրել բայերը և դրանցով կազմել բառակապակցություններ:*

Ազգային ժողովում մի խումբ պատգամավորներ առաջարկեցին նիստը շարունակել հաջորդ օրը: Խնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ են հրատապ միջոցներ: Արեգակը թեքվել էր դեպի մայրամուտ: Բուսականությունից գուրկ քաղաքը ողողվել էր արևի վերջին ճառագայթներով: Կարևորը հոգու մեջ լուսավոր կետ ունենալն է: Տիրակալը պահանջում էր, որ իր հպատակները սափրեն մորուքները: Լուսամուտներից մեկը նայում է գառիթափին, որ իջնում էր մինչև այգիների ցանկապատը: Նոր միայն զգաց, որ այդ աղմկահույզ աշխարհում ինքը միայնակ է: Կույր է նա, ով չի տեսնում երկինք հասած կրակը: Արամ քեռին, որ մեր դպրոցի տնօրենն էր, հայոց լեզու էր դասավանդում: Բայց նորից հանդիպել նրան, ով ինձ ցավ է պատճառել, չեմ կարող:

**Վարժություն 215. Ընդգծել բայերը:**

Լինե՛ր հեռու մի անկյուն,  
Լինե՛ր մանկան արդար քուն (**Հ.Թ.**):  
Եվ քարավանը Աբու-Լալայի...  
Հանգիստ, միաշափ քայլում էր առաջ  
Հեզ լուսնկայի շողերի միջով (**Ավ.Ի.**):

Ապրելուց քաղցր է մեռնել թեզ համար,  
Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:  
Ես թողնում էի օրերս մենակ  
Եվ այս աշխարհից սլանում հեռու (**Վ.Տ.**):

---

**Վարժություն 216.** *Կրավորական սեռի բայերը հնարավորության դեպքում դարձնել ներգործական:*

Ազգային ժողովում մի խումբ պատգամավորներ առաջարկեցին նիստը շարունակել հաջորդ օրը: Խնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ են հրատապ միջոցներ: Արեգակը թեքվել էր դեպի մայրամուտ: Բուսականությունից զուրկ քաղաքը ողողվել էր արևի վերջին ճառագայթներով: Կարևորը հոգու մեջ լուսավոր կետ ունենալն է: Տիրակալը պահանջում էր, որ իր հպատակները սափրեն մորուքները: Լուսամուտներից մեկը նայում է զառիթափին, որ իջնում էր մինչև այգիների ցանկապատը: Նոր միայն զգաց, որ այդ աղմկահույզ աշխարհում ինքը միայնակ է: Կույր է նա, ով չի տեսնում երկինք հասած կրակը: Արամ քեռին, որ մեր դպրոցի տնօրենն էր, հայոց լեզու էր դասավանդում: Բայց նորից հանդիպել նրան, ով ինձ ցավ է պատճառել, չեմ կարող:

**Վարժություն 217.** *Ներգործական սեռի բայերը դարձնել կրավորական:*

Ես անթուրժ որսորդի միամտությամբ հափշտակված նայում էի, իսկ եղջերուն իր մռայլ հայացքը ոչ մի ակնթարթ չէր կտրում ինձանից: Այդ պահին շատ գեղեցիկ էր նա: Արևի թրթռացող շողերի ու սրաշեղք թրերի նմանվող եղեգների տուրևառումից ոսկևորվել էր նա և ասես փայլատակում, ճաճանչում էր իր անվրդով վեհությանը: Արևագոծ մորթուց կայծեր էին արձակվում: Գայթակղիչ էր հրացանի ձգանք իսկույն ևեթ սեղմելու փափագը, բայց ինչպես կարելի էր այդ պահին սպանել աստվածային մի անաղարտ գեղեցկություն: Ես շփոթվեցի, ամաչեցի և մի վայրկյան փորձեցի թաքցնել հրացանս: Շարժվեցի թե չէ, նա հապճեպ հետ թեքեց վիզը: Հետ թեքելուն պես հարևան դիրքից սաստկորեն որոտաց որսկան Օսեփի հրացանը: Հրացանի թնդյունից անտառը որոտաց, և լավեց կախկռտվող շամբերի շեղջերի խարշափյունը: Վիրավոր եղջերուն էր փախչում:

**Հ. Թումանյան**

**Վարժություն 218.** *Ո՞ր շարքում պայմանական եղանակի բայ կա: Գրել բայերի անորոշ դերբայի ձևերը:*

- ա) ջարդվեց, փշրում էին, վառվեին, պիտի տիրեր
- բ) խոնարհելու ես, մատնանշի՛ր, ազուցեցինք
- գ) կկոցեց, հորդելու է, ճողոպրում են, սպրդեց
- դ) արդուկելու ենք, կկպչեր, պարսավելի է, վրդովվում եմ

---

**Վարժություն 219.** Ո՞ր շարքում սխալ բայածև կա: Գրել բայերի անորոշ դերբայի ձևերը:

- ա) կընկճներ, ճաքել է, պիտի նվիրվի, կամայանա
- բ) սեթևեթում էին, պչրվեր, տուժվել են, գուժում էին
- գ) արածեցրել է, հեռացի՛ր, մի՛ լար, մի՛ բարբառիր
- դ) կցնցվի, ասացին, ցայտելու էր, հիշեցրեց

**Վարժություն 220.** Ո՞ր նախադասության մեջ հարկադրական եղանակի բայ կա:

- ա) Մի կասկած ո՞ւր պես աննկատ սողաց, սրտի մեջ կծիկ դարձավ:
- բ) Կարմրաքարում ոչ ոք ջրադացյանի նման պատմություններ չգիտեր:
- գ) Եթե լուսադեմին մառախուղ է լինում, ապա ցերեկով ի՞նչ եղանակ պիտի լինի:
- դ) Նա հանեց ծիրանի փողը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը:

**Վարժություն 221.** Նշել ներգործական կառույցի նախադասությունը:

- ա) Ոչխարն ու տավարը Մրոցի հովիվների կողմից քշվել են ձորի կողմը:
- բ) Մի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամրջին:
- գ) Սարի քամուց Մրոցի հարսներն ու աղջիկները կոշտացած դեմքեր ունեին:
- դ) Աշնան անձրևները հորդում էին գիշերուզօր:

**Վարժություն 222.** Նշել կրավորական կառույցի այն նախադասությունը, որը սխալ է:

- ա) Ոչխարն ու տավարը Մրոցի հովիվների կողմից քշվել են ձորի կողմը:
- բ) Ծիրանի տափի համար Միրի և Մրոցի գյուղացիների կողմից հավասար թվով մահակներ էին զարկվում իրար:
- գ) Սարի քամու կողմից Մրոցի հարսներն ու աղջիկները կոշտացած դեմքեր ունեին:
- դ) Աշնան անձրևներից գետի ջրերը պղտորվում էին:

(Ա. Բ.)

---

---

**Վարժություն 223.** *Գտնել կրավորական սեռի բայերը և դրանցով նախադասություն կազմել:*

Կոտրվել, սիրվել, ուտվել, մերժվել, սանրվել, ջարդվել, խոսվել, ծեծվել, երագել, ընկրկել, հագնվել, երկմտել, երկնչել, նահանջել, տրամադրվել, ծագել, զարդարել, հարգվել, արթնանալ, արդուկել, երգվել, փրկվել, լվացվել:

**Վարժություն 224.** *Գտնել անկանոն բայերը և դրանցով նախադասություն կազմել:*

Գալ, գնալ, գտնել, լալ, լցնել, տալ, տարածել, ասել, խոսել, ուտել, կերցնել, զարկել, հարվածել, բացել, փակել, բերել, տանել, բանալ, ջանալ, դնել, գնել:

**Վարժություն 225.** *Գտնել պակասավոր բայերը և դրանցով նախադասություն կազմել:*

Բառնալ, բարձրացնել, դառնալ, վերցնել, լվանալ, արդուկել, կենալ, հեռանալ, վեր կենալ, արթնանալ, անել, թողնել, դնել, գնել, տանել, բերել, ելնել, նստել, լինել, անմահանալ:

**Վարժություն 226.** *Գտնել անկանոն և պակասավոր բայերը և դրանցով նախադասություն կազմել:*

Առնել, վաճառել, տեսնել, նայել, թողնել, վերցնել, հուսալ, հավատալ, ցանկալ, կամենալ, լվալ, մաքրել, կենալ, սպասել, եմ, կամ, մտածել, գիտեմ, հիշել, ունեմ, զրկվել, արժեմ, ծախել:

**Վարժություն 227.** *Տրված բառերը դասդասել ըստ խոսքիմասային պատկանելության:*

Երբևէ, հեղհեղուկ, ուղտ, թանկ, ինչպիսի, հյուրընկալվել, երդում, թախծախառն, հոգնաբեկ, որպիսի, բերանքսիվայր, պառկած, ախտահարված, անրջել, ո՞վ, ուրևէ, որոշյալ, ամենքը, ամեն մեկը, բոլոր, բողբոջ, որերորդ, որևէ, սպաշխարող, ձյունաթույր, խստահայաց, մրջյուն, կորամեջք, փոխադարձ, միմյանց, թախծոտ,

---

---

իրար, հետաքնին, մերոնց, քողտիկ, մեկմեկու, անվերծանելի, միափեղկ, ձերոնց, շահագրգռել, բարձրաբերձ, քարակոփ, արձանացել, սևասքեմ, շղարշ:

**Վարժություն 228.** *Ո՞ր շարքում են միայն չափի մակրայներ: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) հետագայում, վաղ, նախ, վերջիվերջո, դեռ
- բ) դեմուդեմ, դռնեդուռ, տեղ-տեղ, մեջտեղ, ընդառաջ
- գ) հետզհետե, հիմնովին, միասին, միաձայն, իսկույն,
- դ) հաճախ, երիցս, համարյա, մասամբ, թեթևակի

**Վարժություն 229.** *Ո՞ր շարքում են միայն ձևի մակրայներ: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) այլևս, ընդմիջտ, մշտապես, առմիջտ, հար
- բ) այլուր, վերուստ, վար, վեր, հեռու,
- գ) հազիվ, հապճեպ, հանկարծ, հոնտկայս, ներքուստ
- դ) ավելի, լիովին, դարձյալ, երիցս, իսպառ

**Վարժություն 230.** *Ընդգծել կապերն ու կապական բառերը:*

Բացի, սա, մյուս, այսպիսի, դա, նա, ներքո, նույնչափ, հանդեպ, վերաբերմամբ, այնպիսի, նույն, սույն, միևնույն, այդտեղ, նույնպիսի, այնչափ, համաձայն, ի վնաս, նման, հանդերձ, այս, այնպես, այդ, այն, ի դեմս, այսպես, որպես, սրանք, դրանք, այդպիսի, այսքան, նույնպես, նրանք, ի փառս, այնտեղ, հանձինս, ըստ, այդպես, միջոցով, այստեղ, նույնքան, նույնտեղ, դեպի, այդքան, զատ:

**Վարժություն 231.** *Ո՞ր շարքում են միայն կապեր: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) ամեն, ամենքը, բոլոր, յուրաքանչյուր, ոչ մի
- բ) ոմն, մեկը, մի, ուրիշ, այլ, որոշ
- գ) հանդերձ, ներքո, օրոք, շնորհիվ, առթիվ
- դ) այսինչ, ոչ մեկը, ամբողջ, համայն, ամենայն

---

**Վարժություն 232.** Ո՞ր շարքում են միայն կապեր. տրված կապերով կազմել նախադասություններ:

- ա) ոմն, մեկը, մի, ուրիշ, այլ, որոշ
- բ) այսինչ, ինչևիցե, որևիցե, մի քանի
- գ) չնայած, տեղ, նման, գատ, անց
- դ) ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, ովև, ոչ մի

**Վարժություն 233.** Ընդգծել իսկական կապերը:

Ժամանակ, ըստ, մասին, անունով, առանց, բացի, կողմից, դեպի, համար, հավասար, հանուն, հանդերձ, ներս, ներքո, օրոք, չափ, շնորհիվ, առթիվ, նկատմամբ, վերաբերյալ, փոխանակ, տեղակ, նման, մինչև, նախքան, ներքո, առաջ, միջև, դուրս, հետ, քով, ընդդեմ, հանդիման, հանդեպ, կից, պես, չնայած, հանձին(ս), իբրև, որպես, ի դեմս, ի վար, ձեռքով, ի փառս, հետո, ի հեճուկս, ի հաշիվ, համեմատ, հիման վրա:

**Վարժություն 234.** Կազմել նախադասություններ հետևյալ անիսկական կապերով:

Մոտ, վրա, մեջ, տակ, շուրջ, դեմ, փոխարեն, դիմաց, առջև, առընթեր:

**Վարժություն 235.** Կազմել նախադասություններ հետևյալ կապական բառերով:

Վերև, ներքև, հեռու, զուգընթաց, պատճառով, միջոցով, համապատասխան, նպատակով, հետևանքով, անցած:

**Վարժություն 236.** Տեղադրել շաղկապներ:

- ա) Ազգային ժողովում մի խումբ պատգամավորներ առաջարկեցին, ..... նիստը շարունակվի հաջորդ օրը:
- բ) Խնդիրը կարգավորելու համար անհրաժեշտ է, ..... մենք հանդիպենք:
- գ) Արեգակը թեքվել էր դեպի արևմուտք, ..... նրա վերջին ճառագայթները ողողել էին բուսականությունից զուրկ քաղաքը:

---

դ) Կարևորն այն է, ..... հոգուդ մեջ լուսավոր կետ ունենաս:

ե) Տիրակալը պահանջում էր, ..... իր հպատակները սափրեն մորուքները:

**Վարժություն 237.** *Ընդգծել համադասական շաղկապները:*

Եվ, իբր թե, ու, թե, երևի, նաև, ևս, թերևս, էլ, նույնպես և, բայց, իսկ, սակայն, այլ, միայն, այնինչ, ապա, թե չէ, հո, և ոչ թե, կարծեմ, այլ ոչ թե, երևի թե, բայց ոչ, միգուցե, կամ, կամ թե, և կամ, կամ...կամ թե չէ, կամ...կամ թե, գուցե, կամ... և կամ, ասես, ո՛չ...ո՛չ, թե՛ ...թե՛, է՛լ...է՛լ, և՛ ...և՛, կարծես, ոչ միայն...այլ նաև, իբր, ոչ թե...այլ:

**Վարժություն 238.** *Ո՞ր շարքում են համադասական շաղկապները: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) մինչդեռ, միայն, այնինչ, ապա, բայց և այնպես
- բ) որ, թե, ինչ, իբր թե, մինչ, հենց,
- գ) նախքան, քանի, մինչև որ, հենց որ, քանի դեռ
- դ) թե չէ, երբ որ, եթե, թե որ, միայն թե, նայած

**Վարժություն 239.** *Ո՞ր շարքի բոլոր շաղկապներն են համադասական: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) այլև, իսկ, թե՛ ...թե՛, այլապես, ապա թե ոչ
- բ) թեպետև, և, բայց, նաև, թեև
- գ) կամ, եթե ոչ, քանի որ, ու, հենց որ
- դ) սակայն, թեկուզ, ուրեմն, չնայած որ, և կամ

**Վարժություն 240.** *Ո՞ր շարքի բոլոր շաղկապներն են ստորադասական: Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) այլ, որ, բայց և, որովհետև, թեպետ
- բ) քանի որ, ինչպես և, քան թե, իսկ, չնայած որ
- գ) եթե, քանի դեռ, որպեսզի, թեկուզ, մինչև
- դ) թեև, բայց և այնպես, քանի դեռ, այն է, սակայն

---

**Վարժություն 241.** Ո՞ր շարքում են ստորադասական շաղկապները: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) նաև, ևս, ոչ թե...այլ, այլև, ինչպես և, բայց և այնպես,
- բ) ինչպես նաև, նույնպես և, մմանապես, բայց
- գ) այլ, մինչդեռ, միայն, այնինչ, ապա, և սակայն,
- դ) միայն թե, թե ինչ է, ասես թե, կարծես թե, ոնց որ

**Վարժություն 242.** *Ընդգծել ստորադասական շաղկապները:*

Անշուշտ, որ, թե, ինչ, իբր թե, անկասկած, մինչ, մինչև, անպայման, հենց, անպատճառ, նախքան, իհարկե, քանի, իրոք, մինչև որ, հենց որ, քանի դեռ, իրոք որ, թե չէ, երբ որ, իսկապես որ, եթե, թե որ, իսկապես, միայն թե, այո՛, եթե միայն, նայած, հիրավի, նայած թե, իրավամբ, որովհետև, հարկավ, քանի որ, չէ որ, մանավանդ որ, հավանական է որ, թեև, թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, չնայած, չնայած որ, փոխանակ:

**Վարժություն 243.** *Ընդգծել ստորադասական շաղկապները 1, իսկ հարաբերական դերանունները՝ 2 գծով:*

- ա) Դիլան դային սեղմել էր հրացանի փողը, ինչպես միքիավի մարմինը, որը միայն մի անգամ շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է:
- բ) Երբ որ քո սիրուն ես արժանանամ, այնժամ կխոսես իմ սիրո մասին:
- գ) Թե ուզում ես երգի լսեն, ժամանակիդ շունչը դարձի՛ր:
- դ) Ինչպես հինավուրց առածն է ասում, երբ կորցնում ես, նոր ես ափսոսում:

**Վարժություն 244.** Ո՞ր շարքի բոլոր շաղկապներն են տրոհական: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) և, ու, նաև, այլև, թե՛...թե՛, ինչպես նաև
- բ) նամանավանդ, մինչդեռ, եթե ոչ, այլապես
- գ) միայն, բայց և այնպես, կամ թե, ոչ թե
- դ) կամ, կամ թե, կամ թե չէ, և կամ, թե

---

**Վարժություն 245.** Ո՞ր շարքի բոլոր շաղկապներն են ժամանակի: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) մինչ, հենց, քանի, նախքան, մինչև որ, հենց որ
- բ) եթե, թե որ, միայն թե, նայած թե, քանի դեռ
- գ) որովհետև, մանավանդ որ, քանի որ, թեկուզև, թե որ
- դ) ինչ, չնայած որ, թեպետ, թեև, միայն թե, կարծես թե

**Վարժություն 246.** *Երկու սյունակով դասավորել կապերը (կապական բառերը) և շաղկապները:*

Ժամանակ, եթե ոչ, մասին, առանց, բացի, այլև, դեպի, համար, ինչպես նաև, հանուն, հանդերձ, եթե...սպա, ներքո, օրոք, նպատակով, հետևանքով, բայց և այնպես, շնորհիվ, առթիվ, այնուամենայնիվ, նկատմամբ, վերաբերյալ, փոխանակ, կամ թե չէ, տեղակ, մինչև, ոչ միայն...այլև, նախքան, ներքո, միջև, հետ, ինչպես... այնպես էլ, քով, ընդդեմ, հանդիման, և սակայն, անունից, հանդեպ, պես, համապատասխան, մինչդեռ, հանձին(ս), իբրև, նմանապես, որպես, ի դեմս, ի վար, ի վեր, ի փառս, ի հեճուկս, ի հաշիվ, ինչպես և, հիման վրա:

**Վարժություն 247.** *Տրված բառերը դասդասել ըստ խոսքիմասային պատկանելության:*

Թախծալի, ամենուր, ուղղաձիգ, եթե, ճգնել, ամենուրեք, կից, թաքցնել, այլուր, բերնեբերան, դեմառդեմ, սպա, առընթեր, խորասույգ, դմնեդուռ, ուղղություն, քաթանե, անդրավարտիք, իսկ, գյուղեգյուղ, կոհակ, ավետող, թրթռալ, տեղ-տեղ, ձեռքից ձեռք, սակայն, վերուստ, թրծված, ներքո, քամի, դու, դեմ դիմաց, ծովահայաց, ելևէջ, կամ, վար, հեռու, հիսուն, մեջտեղ, ընդառաջ, համընդհանուր, տասը, երկյուղածություն, ակնդետ, հետք, վրա, աշխարհ, վերջին, դեմ հանդիման, մխրճվել, ընկրկել, բայց, դեմուդեմ, շփոթված, և, իսկույն, որ:

**Վարժություն 248.** *Նշվածներից քանի՞սն են վերաբերական: Դրանցով նախադասություններ կազմել:*

- Թերևս, սույն, ըստ, միևնույն, արդյոք, ամեն ոք, հապա, նույն, սոսկ, որևիցե, դե:
- ա) 3,      բ) 4,      գ) 5,      դ) 6,      ե) 7

---

**Վարժություն 249.** Ո՞ր շարքում են սաստկացում, շեշտում արտահայտող վերաբերականները: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) անշուշտ, անկասկած, միմիայն, անպատճառ, իհարկե
- բ) ախր, չէ՞ որ, ինչ արած, լուկ, թեկուզ
- գ) ո՛չ, չէ՛, բնավ, զոհե, գեթ, սուկ, միայն
- դ) նամանավանդ, իսկ և իսկ, մինչև իսկ, մինչև անգամ

**Վարժություն 250.** Նշվածներից քանի՞սն են վերաբերական: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- Երբևէ, այո՛, ինչպիսի, ահավասիկ, մեջ, որպիսի, բնավ, գեթ, հետ, իրավամբ, ուր:
- ա) 3,
  - բ) 4,
  - գ) 5,
  - դ) 6,
  - ե) 7

**Վարժություն 251.** Ո՞ր շարքում են կասկած արտահայտող վերաբերականները: *Դրանցով նախադասություններ կազմել:*

- ա) անշուշտ, իրավամբ, իսկապես, հարկավ, հիրավի,
- բ) ո՛չ, չէ՛, բնավ, ահավասիկ, այ, թեկուզ, սուկ
- գ) երևի, թերևս, միգուցե, ասես, իբր
- դ) նամանավանդ, անգամ, նույնիսկ, իսկ և իսկ

**Վարժություն 252.** *Ընդգծել հաստատական վերաբերականները:*

Անկասկած, վերև, անշուշտ, ներքև, ներս, հիրավի, դուրս, հեռու, այո՛, կից, հարկավ, զուգընթաց, անպատճառ, պատճառով, իրավամբ, չէ՛, միջոցով, ձեռքով, գծով, իհարկե, ո՛չ, անունով, իրոք որ, կողմից, բնավ, հավասար, իսկապես, ընթացքում, անպայման, սկզբում, իրոք, իսկապես որ, անցած:

**Վարժություն 253.** *Ընդգծել կասկած, ենթադրություն արտահայտող վերաբերականները:*

Որպեսզի, թերևս, միայն թե, ինչ է թե, գուցե, թե ինչ է, ասես թե, կարծես թե, ոնց որ, ոնց որ թե, միգուցե, ինչպես որ, ինչպես, կարծես, որպես թե, քան, քան թե,

---

---

ուստի, ուրեմն, այնպես որ, հետևաբար, կարծեմ, հետևապես, ասես, ուստի և, երևի թե, ուրեմն և, և ուրեմն, այսինքն, այն է, իբր, եթե...ապա, եթե...ուրեմն, հո, եթե...ապա ուրեմն, թե...ուրեմն, իբր թե, թե որ...ուրեմն, թե որ...ապա ուրեմն, թե...բայց, թեպետ...բայց:

**Վարժություն 254.** *Ընդգծել սաստկացում, շեշտում արտահայտող վերաբերականները:*

Թեպետ, թերևս, արդյոք, սակայն, մանավանդ, չլինի՞ թե, նամանավանդ, այնուամենայնիվ, չնայած որ...բայց, թեկուզ...բայց, անգամ, թեկուզ... բայց և այնպես, նույնիսկ, թեև...բայց և այնպես, թեև...սակայն, իսկ և իսկ, իբր թե, մի՞ թե, մինչև իսկ, մինչև անգամ, երևի թե, չլինի՞:

**Վարժություն 255.** *Կազմել նախադասություններ հետևյալ վերաբերականներով:*

Գուցե, կարծեմ, իբր, ահավասիկ, գեթ, լոկ, սոսկ, հապա, չէ՞ որ, ինչ արած:

**Վարժություն 256.** *Ընդգծել ձայնարկությունները:*

Ախ, ես, հարայ, պահ-պահ, ինքը, վախ, իրենք, էյ, ձերոնք, փիշտ, սա, ծո, նույն, սույն, հեյ, մյուս, այսպիսի, դեհ, նույնպես, այստեղ, էհեյ, այդտեղ, այդչափ, ջան, այնչափ, վույ, ո՞վ, ծիվ-ծիվ, ի՞նչ, շրթիկ, ինչքա՞ն, ինչո՞ւ, ո՞ր, դա-դա, որքա՞ն, որպիսի՞, ծուղրուղու, որչա՞փ, հո-հո, բոլոր, այ, ոք, ողջ, բռավո, համայն, ոմն, բիս, այլ, թրղիկ, որոշ, այսինչ, ովևէ, ջու-ջու, որևիցե, դեհ, ինչ-ինչ, չու:

**Վարժություն 257.** *Կազմել նախադասություններ հետևյալ ձայնարկություններով:*

Հե՛յ, դե՛, տո՛, պա՛հ-պա՛հ, վախ, բա՛, է՛, վա՛շ-վի՛շ, ուռա՛, շը՛իկ:

**Վարժություն 258.** *Գրել ձայնարկություններ պարունակող բանաստեղծական հատվածներ:*

**Վարժություն 259.** *Տրված հատվածում ցույց տալ շարահյուսական կապակցության միջոցները (վերջավորություններ, կապեր, շաղկապներ, շարադասություն, հնչերանգ):*

Այսօր մենք ապրում ենք համացանցի ու վիրտուալ հաղորդակցության դարաշրջանում: Դա լավ է: Բայց ո՞ւմ են պետք այն բացնող հայտնագործությունները, որոնք գրավոր խոսքի ու գրքերի հետ ոչ մի առնչություն չունեն: Մարդկությանը ներկայացնել այդ բյուրեղապատ էկրաններին... ուտոպիա չէ՞ արդյոք: Հավանաբար, մենք ցանկանում ենք ստեղծել ընտրյալների մի նոր հասարակությո՞ւն, ուր ոմանք ի վիճակի կլինեն օգտվել այդ հնարավորությունից, իսկ մյուսները՝ ո՛չ: Մեծ ժողովուրդներ ու քաղաքակրթություններ են ջնջվել, մոռացվել՝ չհասկանալով այս պարզ ճշմարտությունը: Ու կան փոքրաթիվ ժողովուրդներ, որ հարատևում են իրենց մշակույթի, գրավոր խոսքի ու առասպելների շնորհիվ: Անհրաժեշտ է ու շատ օգտակար ընդունել այն ամեն դրականը, որ փոխանցում են այդ մշակույթները: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ սերունդները ակնածանք տաժեն գիր ու գրականության հանդեպ:

**Ժան Մարի լը Կլեզիո**

**Վարժություն 260.** *Տրված հատվածում ցույց տալ համաձայնության, հոլովառության (խնդրառության) և առդրության օրինակները:*

Դա այն պապենական վաղեմի տունն էր, որի նեղ, ցածրիկ դռնից մտնելիս պետք է կռացնել գլուխը, կոշիկները թողնել դռան առջև՝ չկեղտոտելու համար նրա վաղեմի մաքուր տախտակամածը, զգույշ նստել հին բազմոցին և շատ էլ չբարձրացնել գլուխը՝ ծխոտ ու ցածր առաստաղին չդիպչելու համար, ուր պետք է երկյուղած ու ցածր ձայնով խոսել՝ չանհանգստացնելու համար վաղուց գնացած, բայց տանը միշտ ներկա վաղեմի պապին, եթե նեղ ու անհնարին էլ լինի այդ տունը, նորը շինել նրա կողքին, բայց չփորձել նորոգել հինը, և թեկուզ այդ հին օջախը մի նոր պալատում էլ պարփակելու լինենք, չպոկենք նրա ամենատեղին մեխն անգամ:

**Վ. Փափազյան**

---

**Վարժություն 261.** *Գրել համաձայնության օրինակներ:*

**Վարժություն 262.** *Տրված կադրերով կազմել նախադասություններ՝ նշելով շարահյուսական կապի տեսակները:*

1. ենթակա + ստորոգյալ
2. հատկացուցիչ + խնդիր
3. որոշիչ + ենթակա
4. ստորոգյալ + խնդիր

**Վարժություն 263.** *Նշել այն նախադասությունը, որի շարահյուսությունը փոխելիս կփոխվեն նաև բառերի շարահյուսական պաշտոնները:*

- ա) Ընկերոջ տանը խնջույք էր:
- բ) Կեցությունը որոշում է գիտակցությունը:
- գ) Ոսկե երիտասարդությունը խրախճանքի է:
- դ) Պատգամավորը ներկայացրեց օրինագիծ:
- ե) Լուսաբացին վաղ մեկնեց աննկատ:

**Վարժություն 264.** *Գտնել և ուղղել խնդրառական սխալները:*

- ա) Ծանոթանալ քաղաքին:
- բ) Խոչընդոտել առաջընթացին:
- գ) Կտակել որդիներին:
- դ) Երախտապարտ՝ ծնողներին:
- ե) Սիրել հայրենիքին:
- զ) Նկատել անցորդին:
- է) Ջրպարտել հայրենակցին:

**Վարժություն 265.** *Գտնել և ուղղել համաձայնության սխալները:*

- ա) Ամեն պաշտոնյա ու ենթակա պետք է իմանա անելիքը:
- բ) Վար ու ցանքն ավարտվել է:
- գ) Երբ Արամը կամ Աշոտն սկսում են խոսել, էլ ազատում չկա:

- 
- դ) Ցուցարարների խումբը վանկարկումներով առաջանում էր:
  - ե) Արտաքին գործերը հուսադրող են:
  - զ) Չինվորների դասակը նահանջեց:
  - է) Քաղաքապետը տեղակալների հետ շրջայց կատարեցին:

**Վարժություն 266.** *Գրել բառակապակցություններ տրված կաղապարներով:*

- ա) ածական + գոյական
- բ) գոյական + գոյական
- գ) ածական + բայ
- դ) մակբայ + ածական + գոյական
- ե) մակբայ + մակբայ + բայ

**Վարժություն 267.** *Կազմել բառակապակցություններ գերադաս և ստորադաս բաղադրիչների տրված կազմով (մեկական օրինակ):*

- ա) գերադաս անդամ՝ գոյական, ածական, թվական, մակբայ
- բ) ստորադաս անդամ՝ գոյական, ածական, դերբայ

**Վարժություն 268.** *Որոշել տրված բառակապակցությունների տեսակը ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության և շարահյուսական կապի տեսակների:*

Սեպտեմբերի մեկ, վատահել գաղտնիքն ընկերոջը, վարքով անտանելի, կույր մտքով, ձիու բաշ, շատ արագ, երկնային բույր, հոգու դժոխք, մոտ հազար, հոգով արի, հայոց լեզու, բնավորությամբ չար, խուսափել հանդիպումից, խմել աղբյուրի ջրից, գորգերով պատված սենյակ, խենթի պես սիրահարված, արագ ընթացք, հասակով բարձր, ոսկե թաս, ուժեղ բոլորից, չափազանց դանդաղ, դատապարտվել ամբոխավար ատյանից, բաշխել ունեցածն աղքատներին, մարտում ընկած հերոս, կրակով լիքը թոնիր, հազարազանձ հայերեն, գոռոզ թշնամի:

**Վարժություն 269.** *Կազմել բաղադրիչների համադաս հարաբերությամբ բառակապակցություններ (8-10 օրինակ):*

---

**Վարժություն 270.** *Կետադրել տրված նախադասությունները և նշել այն տարրերակները, որոնց կետադրությունն ըստ հնչերանգի հնարավոր է փոփոխել:*

- ա) Հուզվել էր շատ տեսնելով ծերացած մորը:
- բ) Քայլում էր անշտապ չնկատելով փողոցի անցուղարձը:
- գ) Հևում էր արագ-արագ շուրջը նայելով:
- դ) Լավիս էր աղիողորմ հիշելով կորուստը:
- ե) Վազում էր արագ թափահարելով ձեռքերը:
- զ) Քայլում էր ցածր սուլելով հին օրերի երգը:

**Վարժություն 271.** *Գրել պատմողական նախադասություններ՝ գործածելով բայի սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերը:*

**Վարժություն 272.** *Որոշել տրված հատվածի նախադասությունների տեսակներն ըստ հաղորդակցական բնույթի:*

Միջանցքում կանգնած էր մի մարդ, որին ինքը չէր ճանաչում, բայց աղոտ հիշեցնում էր ինչ-որ մեկին...

-Դուք բժիշկ Ռավի կն էք:

-Ավելի լավ է՝ ասե՛ք՝ ինչ եք ուզում:

-Եթե դուք բժիշկ Ռավիկն եք, ապա անմիջապես պետք է գնաք Ժոան Մադուի մոտ:

-Ահա՛ թե ինչ:

-Նրան դժբախտություն է պատահել:

-Ի՞նչ դժբախտություն,- թերահավատ քննիչն ընդհատեց Ռավիկը:

-Նրա վրա կրակել են,- ասաց անծանոթը:- Ժոանը վիրավորված է...

-Վիրավորվա՞ծ է,- կրկնեց Ռավիկը՝ նույն թերահավատ քննիչն ընդհատեց:

-Տե՛ր իմ աստված, ես ձեզ ասում եմ՝ Ժոանը մահանում է,- շշմուշաց անծանոթը:

- Ի՞նչ եք կանգնել, շո՛ւտ եկեք գնանք: Նա մահանում է: Ինքս եմ կրակել նրա վրա:

-Ի՞նչ:

-Այո՛ ... Ինքս...

**Է. Մ. Ռեմարկ**

---

**Վարժություն 273.** *Կազմել հրամայական նախադասություններ՝ գործածելով ա) հրամայական, բ) ըղձական, գ) ենթադրական, դ) սահմանական եղանակներով արտահայտված ստորոգյալներ:*

**Վարժություն 274.** *Տրված հատվածին ըստ հնարավորության հաղորդել հնչերանգային այլ երանգավորում:*

Ես չգիտեմ, թե Սկրտիչներից որը երբ եկավ <<Եռանկյունի>>, նրանք ինչպես իրար հանդիպեցին: Ես միայն մեկի գալուստն եմ հիշում՝ վարպետ Սկրտիչի:

Այդ օրը դուրսը մանր անձրև էր մաղում, և հորս դարբնոցում գտնվելը շատ հաճելի էր: Հայրս և Սկոն աշխատում էին. հայրս՝ փոքր մուրճով, Սկոն՝ մեծ: ... Ակնդետ նայում էի կրակին և ոչինչ չէի մտածում:

Տրամադրությունը <<Եռանկյունում>> շեշտակի փոխվեց, երբ ներս ընկավ վրացի Սկրտիչը՝ Վասոն՝ մի ահագին փաթեթ ձեռքին: Իմ ուշադրությունը գրավեց Վասոյի հետ եկած անձնավորությունը: Նրա ծուռուծուռ արտաքինը խցանահան էր հիշեցնում, իսկ այտերի փոսերն այնքան խորն էին, որ մարդ հետաքրքրվում էր, թե ինչ կա ներսը: Դիշտ այնպես, ինչպես քարանձավների մուտքի առջև:

## Ա. Այվազյան

**Վարժություն 275.** *Գրել կրկնակի հարցումով նախադասություններ, որոնց հարցական հնչերանգը կրեն՝ ա) դերանունը, բայը, բ) վերաբերականը, ածականը:*

**Վարժություն 276.** *Հետևյալ հատվածում ցույց տալ ճարտասանական հարցի օրինակները:*

Չայնի ինչ-որ անդրադարձում էր, արձագանք, որ գալիս էր հեռու հեռվից՝ վերջին հույսի այն կողմն ընկած սահմանից: Բայց ինչի՞ վրա էր նա հույս դնում: Ի՞նչը հանկարծ այդպես հարվածեց նրան իր այս թույլ ժամին, այդ ի՞նչը հերձադանակի նման խրվեց մարմնի հենց այն տեղը, որն, ինչպես իրեն թվում էր, արդեն սպիացել և լավացել էր: Մի՞ թե նա ինքն իրեն խաբելով՝ դեռ ինչ-որ բանի էր սպասում: Մի՞ թե այդ հույսը, դառնալով թրթուր, դառնալով հարսնյակ, ձմեռային քուն մտնելով, դեռ պահպանել էր իր գոյությունը և մնացել կենդանի:

## Է. Մ. Ռեմարկ

---

**Վարժություն 277.** *Կազմել բացականչական նախադասություններ, որոնց հնչերանգն արտահայտվի՝ ա) գոյականով, բ) ածականով, գ) բայով, դ) վերաբերականով, ե) ձայնարկությամբ:*

**Վարժություն 278.** *Տրված հատվածում ընդգծել ենթակաները՝ նշելով դրանց խոսքիմասային պատկանելությունը:*

Մենք դեռևս միշտ չէ, որ հասկանում ենք ինքներս մեզ, իսկ ուրիշներին՝ ավելի հազվադեպ: Փորձը չունի բարոյագիտական ոչ մի նշանակություն: Փորձ անունը մարդիկ տվել են իրենց սխալներին: Բարոյագետները, որպես կանոն, փորձի մեջ միշտ նախազգուշացման միջոց են տեսել և համարել են, որ այն ազդում է բնավորության ձևավորման վրա: Նրանք փառաբանում էին փորձը, քանի որ փորձը մեզ սովորեցնում է ինչին հետևել և ինչից խուսափել: Բայց փորձը շարժիչ ուժ չունի: Նրա մեջ գործնականը նույնքան քիչ է, որքան և մարդկային գիտակցության մեջ: Իրականում նա միայն ապացուցում է, որ մեր գալիքը սովորաբար նման է մեր անցյալին, և եթե մի անգամ մեղանչել ենք դժկամությամբ, դա կրկնում ենք կյանքում բազմաթիվ անգամ, բայց արդեն բավականությամբ:

**Օ. Ուայդ**

**Վարժություն 279.** *Տրված նախադասություններում որոշել ենթակաների քանակն՝ ըստ հետևյալ տեսակների.*

*ա) քանի՞ ենթակա է գործածված.*

- 1) Տեսնողն էլ կասի՝ ինչ աղջիկ է սա:
- 2) Նրա պատմածը ճշմարտանման է:
- 3) Դ-ա երկհարկանի շինություն էր:
- 4) Ո՞վ է կանչում, ո՞ւմ է կանչում:
- 5) Պաշտոնյայի ուղարկած տեղեկագրում վիճակագրական թվեր էին:

*բ) քանի՞ կողմնակի ենթակա է գործածված.*

1. Նրա հայտնած լուրն ուրախացրեց:
2. Դ-ուրս եկավ մի մարդ՝ ճրագը վեր բռնած:
3. Դ-ստեր նամակը կարդացել էր հայրը:
4. Գ-երուհու հիվանդ լինելը դժվարացնում էր փախուստը:
5. Ձեր կատարելիք հանձնարարությունը գաղտնի է:

---

---

զ) քանի՞ մասնական ենթակա է գործածված.

1) Գրական երեկոյի ընթացքում ընթերցվեցին Չարենցի բանաստեղծություններից:

2) Հ. Սահյանի ժողովածուներից մեկը տեսա ընկերոջս գրադարակում:

3) Ներկայացվեց հեղինակի երկից մի հատված:

4) Ռ-ադիոյով հնչեց Ա. Բարաջանյանի ստեղծագործություններից:

5) Երեկ լսեցի ժողովրդական երգերից մեկը:

**Վարժություն 280.** Փոխանվանարար գործածված քանի՞ ենթակա կա տրված նախադասություններում:

ա) Ո՞վ է անվերջ հեծեծում...

բ) Ուրիշներն այլ կերպ են մտածում:

գ) Ամենքը պարտավոր են միմյանց հարգել:

դ) Երրորդն ավելորդ է:

ե) Կառուցելը հայ ժողովրդի անբաժան ուղեկիցն է:

զ) Անցածն էլ հետ չի գալու:

**Վարժություն 281.** Կազմել այնպիսի նախադասություններ, որոնց ենթակաները արտահայտված լինեն անորոշ, ենթակայական, հարակատար դերբայներով (մեկական օրինակ):

**Վարժություն 282.** Կազմել նախադասություններ՝ գործածելով այնպիսի անվանական ստորոգյալներ, որոնց հանգույցի դերով հանդես գան **լինել, դառնալ, հանդիսանալ, թվալ** վերացական բայերը (մեկական օրինակ):

**Վարժություն 283.** Տրված նախադասություններում որոշել ստորոգյալների քանակն՝ ըստ հետևյալ տեսակների.

ա) քանի՞ անվանական ստորոգյալ է գործածված.

1) Մեր այգու միրգն ավելի համով է:

2) Ո՞ւմ համար է արեգակը դժնի, ո՞ւմ աստղն է այսօր գիսավոր... (Ե.Չ.):

3) Հարևանուհին մոտ քառասուն տարեկան մի կին էր:

4) Հասկացա, որ նա աշխարհի ամենանշանավոր մարդն է. Մարիփոզա փողոցում ապրող այդ վարսավիրը (Վ.Ս.):

5) Ա՛խ, ասես խարույկ լինես՝ բռնկված կանաչ բոցով... (Հ.Ս.):

---

---

*բ) քանի՞ քայական ստորոգյալ է գործածված.*

- 1) Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար... (Ե.Չ.):
- 2) Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից... (Վ.Տ.):
- 3) Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր, ինձ այդպես քրոջ պես մի՛ գթա... (Վ.Տ.):
- 4) Ներեց, իհարկե, և ինձ՝ մի քիչ ականջիս ծայրը ոլորելով միայն և ցավ հայտնելով, որ գոնե մի ելակ չեմ թողել զամբյուղի հատակին (Վ.Փ.):
- 5) Դասարանում կար Սամադ, կար Մադաթ, կար Ամիրխան, բայց Թուրք մենք Արտավազդին էինք ասում (Հ.Մ.):

**Վարժություն 284.** *Կազմել նախադասություններ մեջ, նման, մասին, պես, հետ կապերով ձևավորված ստորոգյալներով:*

**Վարժություն 285.** *Կազմել նախադասություններ, որոնց անվանական ստորոգյալների ստորոգելիներն արտահայտված լինեն գոյականով, դերանունով, ածականով, թվականով, մակբայով (մեկական օրինակ):*

**Վարժություն 286.** *Տրված հատվածում ընդգծել գոյականական անդամի լրացումները և նշել դրանց տեսակները:*

Գիշերային լուսյան մեջ ծառի բարձր ճյուղերի արանքից մի աստղ երևաց, ապա դանդաղ թաքնվեց տերևի հետևում, մինչ ես, հայացքս շրջելով, տեսա, թե ինչպես խոր երկնքում, գետի նման լուռ հոսելով, հայտնվեց Հարդագողի ճանապարհի արևակն վճիտությունը՝ Սանտյագոյի ճանապարհը, ինչպես գյուղում էին անվանում: Քունը վանվում էր, գիշերը բնակեցվում էր պապիս անվերջանալի պատմություններով ու հետաքրքրաշարժ դեպքերով՝ լեզենդներ, տեսիլքներ, սարսափներ, զարմանահրաշ դեպքեր, մահացած մարդիկ, ծեծ ու կռիվ փայտով և քարով, մեր նախնիների խոսքերը. հուշերի անդուլ հոսք, որ ինձ արթուն էր պահում և մեղմորեն օրորում: ...Տասս, որ պապիցս առաջ արդեն ոտքի էր, առաջս էր դնում սուրճի թասը՝ մեջը հացի կտորներ, և հարցնում էր, թե ինչպես եմ քնել: Եթե ասեի, որ պապիս պատմությունների պատճառով վատ երազ եմ տեսել, կփորձեր հանգստացնել. «Բանի տեղ մի՛ դիր, երազները լուրջ չեն»:

**Ժ. Սարամազո**

---

---

**Վարժություն 287.** *Քանի՞ որոշիչ կա տրված նախադասություններում:*

- 1) Նրա նախնիները այս պայծառ հովտում էին ապրում:
- 2) Փայտե աշտարակը դեռ կանգուն էր:
- 3) Փղի չափ կենդանի տեսան:
- 4) Պատի ժամացույցը կախված էր մեծ բազմոցի վերևում:
- 5) Ծառի մոտ կանգնած էր անտառապահը՝ հրացանը ուսին:

**Վարժություն 288.** *Տրված նախադասություններում ընդգծել հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցությունները:*

- 1) Որսի շները հալածում էին մի եղնիկի:
- 2) Հացը պատրաստված էր ցորենի այլուրով:
- 3) Գյուղացու ձին արածում էր հանդում:
- 4) Երեխայի խելք չունենար, այդ օրին չէր լինի:
- 5) Մոռացել էր միայն զինու բաժակը:

**Վարժություն 289.** *Գրել նախադասություններ՝ յուրաքանչյուր օրինակում գործածելով.*

- ա) բուն և կողմնակի ենթականեր,
- բ) բայական և անվանական ստորոգյալներ,
- գ) տրոհված որոշիչ և հատկացուցիչ:

**Վարժություն 290.** *Քանի՞ բացահայտիչ կա տրված նախադասություններում:*

- 1) Նա՝ իբրև հայր, պարտավոր էր հոգալ երեխաների ապրուստը:
- 2) Ռուզա Նիկոֆորիչը՝ ռուսական ծագումով ամերիկուհին, բարձրահասակ, խարտյաշ, զգայասեր մի աղջիկ էր (Թ.Դ.):
- 3) Նա ճառում էր իբրև իմաստուն:
- 4) Տղան իր կողքին՝ ընկուզենու տակ, տեսավ երկու մարդու:
- 5) Մայրս քույրերիս և եղբորս հետ գնացել էր ամառանոց՝ Բուրսայի ջերմուկները (Վ.Փ.):

---

**Վարժություն 291.** *Քանի՞ մասնավորող պարագայական բացահայտիչ կատրված նախադասություններում:*

1. Կանգնած էր փողոցում՝ թթենու տակ՝ դարպասի առջև:
2. Սովորում էր համալսարանում՝ բանասիրական ֆակուլտետում:
3. Կհանդիպենք կիրակի՝ իրիկնամուտին:
4. Տարիներ անց՝ պատերազմի օրերին, լսեց նրա անունը:
5. Անդրանիկի՝ ազգային հերոսի աճյունը Փարիզից տեղափոխվեց Երևան:

**Վարժություն 292.** *Տրված հատվածը համալրել՝ գործածելով բացահայտչի բոլոր տեսակները՝ բուն, մասնական, մասնավորող պարագայական:*

Ինչո՞ւ իմ գեղեցիկ ծննդավայր քաղաքը չկարողացավ ենթարկվել «սրբազան իմաստության» թելադրանքներին, երբ նրա արծվաքանդակ պարիսպներին խարսխվեցին արաբ ուղտապան Մուհամեդի դրոշակները: Դու չանսացիր իմաստության ձայնին նույնիսկ այն ժամանակ, երբ իմ համեստ ու բարի ազգը ոչ միայն իր արյամբ լցրեց քո հյուծված լեգեոնների արյունաքամ երակները, այլև տասներկու կայսրեր նվիրեց քեզ, որոնցից մի երկուսը, նորոգելով ուսերիցդ սահող կայսերական ծիրանին, ամրացրին մականը քո թուլացած աջին:

**Վ. Փափազյան**

**Վարժություն 293.** *Գրել նախադասություններ՝ գործածելով կապերով և կապական բառերով ձևավորված բայական անդամի լրացումներ (8-10 օրինակ):*

**Վարժություն 294.** *Բայական անդամի խնդիր լրացումներով նախադասություններ կազմել:*

**Վարժություն 295.** *Հետևյալ հատվածում ընդգծել բայական անդամի լրացումները և նշել դրանց տեսակները:*

Երբ հասավ մահվան տեսարանը, ու Գեզդեմոնան մահասարսուռ տազնապով պոկվեց մահճակալից և աղիողորմ գոչումով նետվեց դեպի բեմառաջք, գազանային ոստյունով հասա ու բռնեցի նրան բեմառաջքի լույսերի մոտ, բարձրացրի նրա ահագին մարմինը գլխիցս վեր և վազրի մռնչյունով ուղղվեցի դեպի մահճակալ...

---

---

Ճանապարհի կեսին, սակայն, սանդուղքներով բարձրանալիս զգացի, որ նրա թուլացած մկանունքները սահում են ձեռքերիցս, և որպեսզի ձեռքիցս չընկնի, բնագործար, սեղմեցի տասը մատներս..., և Դեզդեմոնան կախվեց իմ մագիլներից՝ շամփրված ազդրից ու թիկունքից, մինչև նետեցի նրան մահճակալին: ... Ոչ մի դե-րասանուհի և ոչ մի թատրոնում այդպիսի ճիչ չի արձակել, և սարսափած հանդիսա-տեսը երբեք այդ կերպ չի ծափահարել:

#### Վ. Փափագյան

**Վարժություն 296.** Նախադասությունների մեջ գործածել վերաբերության, ներգործող, մասնավորման, անջատման խնդիրներ՝ դրված բացառական հոլովով (մեկական օրինակ):

**Վարժություն 297.** Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր կա:

- ա) Միտքը պղտոր է:
- բ) Նրան խենթի պես սիրահարված է:
- գ) Դասակը մասնակցեց գորավարժությանը:
- դ) Մի հավք զարկի ես մի օր, թռավ գնաց վիրավոր (Հ.Թ.):
- ե) Ոտքերը հատակին չէին դիպչում:

**Վարժություն 298.** Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:

- ա) Ճաղերին փաթաթված վագերը օրորվում էին քամուց:
- բ) Բաշխեց ունեցածն աղքատներին:
- գ) Նրան սիրում էին ընկերները:
- դ) Ավերեցին ծաղկած քաղաքներ ու գյուղեր:
- ե) Ակա՛նջ արեք, մի բան պատմեմ հիմի ձեզ (Հ.Թ.):

**Վարժություն 299.** Նախադասությունների մեջ գործածել միջոցի, վերաբե-րության, մասնավորման խնդիրներ՝ դրված գործիական հոլովով (մեկական օրինակ):

---

---

**Վարժություն 300.** *Կազմել նախադասությունները՝ գործածելով տեղի պարագա՝ դրված՝ ա) ուղղական հոլովով, բ) տրական հոլովով, ժամանակի պարագա՝ դրված՝ ա) բացառական հոլովով, բ) գործիական հոլովով, ձևի պարագա՝ դրված գործիական հոլովով:*

**Վարժություն 301.** *Շարունակել նախադասություններ՝ նշելով ավելացված բառի շարահյուսական պաշտոնը:*

- ա) Դժվարությամբ բաժանվեցին...
- բ) Բարի լուրը հայտնեց ...
- գ) Շատ անգամ էին հավաքվում ընկուզենու տակ և մազլցում....
- դ) Ձիերի երամակը սլանում էր...
- ե) Լիովին պարզվեց...

**Վարժություն 302.** *Ո՞ր նախադասության մեջ ներգործող անուղղակի խնդիր կա:*

- ա) Աղավնիներից մեկը բախվեց տղայի երեսին:
- բ) Առանց բացատրության հեռացավ ընտանիքից:
- գ) Չինվորը ճարահատյալ հանձնվեց գերի:
- դ) Կիզիչ արևից լողափն ասես վառվում էր:
- ե) Սիրում էր պատմել իր պատերից:

**Վարժություն 303.** *Գոյականով արտահայտված քանի՞ պարագա կա տրված նախադասություններում:*

1. Եվ քարավանը գնում էր առաջ ու ետ չէր նայում (**Ա.Բ.**):
2. Սանձը դրեց ձիու բերանը և շարունակեց ճանապարհը:
3. Ջատկի օրը եղանակը մի քիչ մեղմացավ:
4. Այս գիշեր ես հեռվում եմ, հեռվո՛ւմ, կարծես հայրենիք եմ դարձել (**Վ. Տ.**):
5. Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում, թշնամու հոգին լցնում սարսափով (**Հ.Թ.**):

---

---

**Վարժություն 304.** Ո՞ր նախադասության մեջ վերաբերության անուղղակի խնդիր կա:

- ա) Մորթուց գլխարկ էր կարել:
  - բ) Համտեսեց քաղցրահամ պտուղներից:
  - գ) Քույրը եղբորից նվազ ընդունակ է:
  - դ) Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմի,
  - ե) Ամեն ինչ ծնվում է փորձից:
- Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից (Հ.Թ.):

**Վարժություն 305.** Ընդգծել բայական անդամի պարագա լրացումները և նշել, թե որ խոսքի մասերով են արտահայտված:

Վաղո՛ւց, շատ վաղուց մի տեղ մի անգամ ես մի ոտանավոր եմ կարդացել: Վաղուց էլ մոռացել եմ էն ոտանավորը... բայց մտքիս մեջ մնացել է առաջին տողը.

«Ի՛նչ լավն էին, ի՛նչ թարմ էին վարդերը...»:

... Ու իբրև թե քաղաքից դուրս մի ռուսական տան ցած պատուհանի առջև կանգնած եմ ես: Ամռան երեկոն մեղմիկ հավում, փոխվում է գիշերի: Գաղջ օդը լիքն է հափրուկի ու լորենու բուրմունքով, իսկ լուսամուտի գոգին, լուսամուտին տված ձեռքին հենված, գլուխը ուսին թեքած, նստած է մի աղջիկ ու լուռ, անթարթ նայում է երկնքին, ասես թե մնում է առաջին աստղերի երևալուն: Ինչքա՛ն պարզորեն ոգևորված են նրա մտախոհ աչքերը, ինչքա՛ն հուզիչ-անմեղ են կիսաբաց, հարցավոր շրթունքները, ի՛նչ հավասար է շնչում դեռ լիովին չփթթած, դեռ ոչ մի բանով չալեկոծված կուրծքը, ի՛նչ մաքուր ու քնքուշ է ջահել դեմքի տեսքը: Միրտ չեմ անում՝ խոսեմ հետը, բայց ինչքա՛ն թանկ է նա ինձ համար, ո՛նց է զարկում սիրտս...

«Ի՛նչ լավն էին, ի՛նչ թարմ էին վարդերը...»:

**Ի. Տուրգենև**

**Վարժություն 306.** Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:

- ա) Նա կարոտով փարվեց մայրիկին:
- բ) Մաշկի գույնով սև էին:
- գ) Յոթ որդիներով սեղան նստես:
- դ) Նրանով է մրմնջացել հայ պանդուխտը վերքն իր սրտի (Ս.Կ.):
- ե) Խելքով, հոգով աղքատ էր:

---

---

**Վարժություն 307.** Ո՞ր նախադասության մեջ անջատման անուղղակի խնդիր կա:

ա) Կարոտից արտասավեց:

բ) Բնությամբ չար, անտանելի էր:

գ) Փախի՛ր կնոջից, սիրուց, ընկերից, շնչահեղձ փախի՛ր մարդու ստվերից

(Ա.Բ.):

դ) Չիու խելագար վագրը հոգնեցրել էր նրան:

ե) Ծաղիկներից հյուսել էին տոնական պսակներ:

**Վարժություն 308.** *Հետևյալ հատվածում նշել ստորոգման դեպքերը և ցույց տալ դրանց արտահայտման բայական և հնչերանգային ձևերը:*

Թուխ ու ջղային մարդկանց մի ցեղ, որ իրեն հիքսոս էր կոչում, հյուսիսից Ասորիք ու Փյունիկիայով Նեղոսի հովիտ մտավ և փարավոնների տասնյոթերորդ հարստությունը մեկ բախմամբ կործանեց...:

Հը՞... Հյուսիսից Ասորիք-Փյունիկիա-Եգիպտոս: Հետո չքացան: Եվ ջրերը երկրի վրա գնալով նվազում էին: Եվ տապանը նստեց Արարատ լեռան վրա: Արարատյան հովտում երկրորդ հազարամյակի հնոցներ են բացվել: Եգիպտերենում չկար յ կիսահնչյունը. եգիպտացիները եթե գրելու լինեին Հայք, պիտի գրեին Հաիք: Եգիպտոս-Եղրպտոս- Գըպտոս- դըպտ: Հիքսոս: Հիքսոս- հիք- հեք- հայք- հայ:

**Հր. Մաթևոսյան**

**Վարժություն 309.** *Գտնել բազմակի անդամները և որոշել նրանց շարահյուսական պաշտոնները:*

Դատարկ խոսքեր են մեր փոքր ազգ լինելու մասին հնչող ճառերը. ո՛չ բելգիացիք են մե՞ծ ազգ, ո՛չ նորվեգացիք...: Չպետք է մատնանիշ անել արտաքին արգելքներն ու խոչընդոտները. դրանք միշտ կան, և դրանց դեմ, այո՛, պետք է կռվել: Բայց նախ պետք է ներքին կամք, ներքին հավատ, անխախտ գիտակցություն, առանց այդ ավելորդ է արտաքին արգելքների դեմ կռվելը, ավելորդ է այդ պատենշները ջնջելը, քանի որ երբ ընկնեն այդ պատենշները, հանկարծ պիտի տեսնեք դուք, որ զուր էին ձեր ջանքերը, ձեր զոհաբերումները, ձեր կռիվը. այդ բոլորը դուք արել եք մի անկենդան դիակի համար: Ահա այդպիսի մի ներքին

---

---

հավատ, մի խոր գիտակցություն է հարկավոր հայ մտավորականությանը: Հարկավոր է, եթե նա իրավ սիրում է մեր ժողովրդին, մեր երկիրը:

**Վ. Տերյան**

**Վարժություն 310.** *Գտնել դերբայական դարձվածները և ըստ անհրաժեշտության՝ կետադրել:*

Այս կյանքի համար իր որդուն որոշեց պոկել անցյալից մի նոր սկիզբ հաստատելու նպատակով... (Ա.Ա.): Այդ նվիրատվությունը նրան իրավունք է տվել դառնալու պատվավոր քաղաքացի: Ինքնուրույն միտք արտահայտելիս նա չէր վախենում կծու խոսքից, հեզմանքից: Արտ ու արոտ տրորելով գալիս էր ոչխարի հոտը: Քո երկիր մտել են ոչ թե փաղանգների կուռ սպառնալիքով կորզելու հավասարի քո դաշինքը կամ գնելու քո մեծահոգի չեզոքությունը, այլ թափփված խուժանի խմբերով են եկել կնիկ, ճարմանդ, կարպետ, ձի խելու, արտ հրդեհելու (Հ.Մ.): Հորն ուղղված նամակում որդին վիրավորական ոչինչ չէր գրել: Տանը կային անկյուններ թանկարժեք իրերով զարդարված: Տեղանքն ուսումնասիրող գիտնականների խումբն աշխատեց առանց հանգստի:

**Վարժություն 311.** *Դերբայական դարձվածները նախադասությունների մեջ գործածել որոշչի, ուղիղ խնդրի, ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոններով (մեկական օրինակ):*

**Վարժություն 312.** *Շարահյուսորեն վերլուծել տրված նախադասությունները:*

Եվ տեսնելով կնոջը, որ աղբյուրից գալիս էր կժի ծանրությունից դանդաղաքայլ, ու թևը պոկում էր փթանոց դույլը, իսկ երեխան նստել էր ճանապարհի փոշու մեջ ու ոտքերով գետինը ծեծում էր՝ մորից պահանջելով իրեն էլ շալակել, և նկատելով այգում խնձորենու մեկ տարեկան պատվաստը կրծող ուլին՝ Չավենը մտածեց, որ ինքը երեխայի բաներ է անում, թեթև կնոջ բաներ է անում, պատասխանատվություն չի զգում ո՛չ ընտանիքի նկատմամբ, ո՛չ էլ պատվի (Հ.Մ.):

Ես գտա սիգարետներն ու ծխեցի՝ հենվելով աթոռի թիկնակին ու պահպանելով հավասարակշռությունս ետևի ոտքերի վրա. տտիպ, թթվահամ ծուխը հոսեց օղակներով: Լռում էինք: Ես՝ աթոռի վրա ճոճվելով, նա՝ բարակ սպիտակ մատները լամպի ապակե գլխարկի վրա տաքացնելով (Գ.Գ.Մ.):

---

**Վարժություն 313.** Միջանկյալ նախադասությամբ արտահայտել խոսողի հաստատական և ենթադրական վերաբերմունքը (երկուական օրինակ):

**Վարժություն 314.** Տրված հատվածում ցույց տալ միջանկյալ նախադասությունները և որոշել դրանց արտահայտության բնույթը՝ բացատրությո՞ւն է, վերաբերմո՞ւնք, թե՞ տեղեկույթ:

1. Եվ իմացի՛ր, դո՛ւմ գլուխ (այդ նրա փաղաքշական արտահայտությունն էր), թատրոնը ժողովրդինն է, այն պետք է լինի համեստ ու պարզ հոգիների դպրոցն ու մխիթարանքը (Վ.Փ.): 2. Այնպես պատահեց, որ մենք տեղափոխվեցինք մի տուն, որը, բնակարանային գործերով զբաղվող գործակալի խոսքերով ասած, տուն չէր, այլ հրաշք (Վ.Ս.): 3. Իսկ մեզ հրավիրող թաղական խորհուրդը՝ իր զանազան «մասնաճյուղերով», «ատենադպիրով», «ատենապետով» հանդերձ անդամոք ... (լուսավո՛ր լինի քո գերեզմանը, Պարոնյա՛ն) և հետ ժողովո՛ւ պատշաճ դասեցին ինձ հյուրասիրվելու՝ քաղաքի Մխիթար Կարսավիչ աղա Շամանդրաճյանի «ապարանքում» (Վ.Փ.): 4. Ազնիվ Օթիոփերիճեն (հորենական ազգանվամբ՝ Խաչթովմասյանը) փնտրում է Համազասպ հորը, Արուսյակ մորը, 1895-1914 թվականներին Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքում ծնված իր Անդրանիկ, Պռոշ, Անուշավան, Մանուկ, Հարություն, Համբարձում, Գառնուկ եղբայրներին (Ազնիվ Օթիոփերիճեն Գառնուկի իսկական անունը լավ չի հիշում, նա մեկուկես տարեկան էր, ընտանիքի երեխաները նրան Գառնուկ էին ասում), Մարիամ, Արփենիկ, Շուշան Խաչթովմասյան քույրերին... (Հ.Մ.): 5. Եվ ես վեր էի կենում, փաթաթվում էի կոշտ ծածկոցով և ոտաբոբիկ (գյուղում միշտ ոտաբոբիկ էի, մինչև տասնչորսս լրանալը), մազերիս մեջ ծղոտի ծվեցներ, բակի փորված մասով տան հակառակ կողմն էի անցնում, որտեղ խոզաբույն էր (Ժ.Ս.):

**Վարժություն 315.** Գտնել կոչականները և կետադրել՝ գործածելով շեշտ, բացականչական կամ հարցական նշաններ:

1. Տեր, թռչունները բնակորոյս են, այգիներն ամայի են, և շեները՝ ավերակ, մարդ չկա՝ վարդի հոտով զմայլվող, Տեր, ծուխ է ամենուր, տաճարներիդ գմբեթները հողի հետ են հավասարվում, Քո տները ավերվում են (Ա.Բ.):

2. «Իմ թանկագին և անմոռանալի ուստա Մուկուչ ջան, Վաստ ջան, Գասպար ջան, Հովիկ ջան: Նախ և առաջ բարևում ենք ձեր ընտանիքներին և ձեզ ես ու Լուբան...» (Ա.Ա.):

3. - Անդրանիկ...,- կանչեց պառավը:
- Քեզ ի՞նչ է եղել, այ մեր:
  - Ախպորդ երեխան կայարանում է, Անդրանիկ:
  - Բա էն ձին մեղավոր է, որ կայարանում է, այ մեր...
  - Հա ջան...

(Հ.Մ.)

**Վարժություն 316.** *Գրել կոչականի օրինակներ՝ որպես լրացում գործածելով դերանուն, ածական, ճայնարկություն (երկուական օրինակ):*

**Վարժություն 317.** *Տրված հատվածում վերականգնել զեղչված անդամները՝ նշելով նրանց շարահյուսական պաշտոնները:*

- Իսկ ի՞նչ եք մտադիր աճեցնել այստեղ,- ասացի ես:
- Տեսակ-տեսակ մրգատու ծառեր կտնկեմ:
- Դեղձի՛:
- Ա՛յո, մի տասը ակր:
- Իսկ ծիրա՞ն:
- Օ՛, ինչպես չէ,- ասաց քեռիս:- Ծիրանը սքանչելի պտուղ է: Տեսը՝ գեղեցիկ, համը՝ չքնաղ, հոտն էլ հիանալի: Մի քսան ակր ծիրան կտնկեմ:...
- Թո՛ւզ,- ասացի ես:
- Երեսուն ակր էլ թուզ,- ասաց քեռիս:
- Իսկ ի՞նչ կասեք թթի մասին: Թթենին շատ սիրուն ծառ է,- ասացի ես:
- Թութ,- ասաց քեռիս և բավականությունից լեզուն ճլթացրեց:- Սիրուն ծառ է թթենին, ի՞նչ խոսք: Դեռ հայրենիքում ես շատ էի հավանում այդ ծառը: Քանի՞ ակր կառաջարկես:
- Մի տասը ակր,- ասացի ես:
- Շատ լավ է,- ասաց նա:- Է՛լ ինչ:
- Չիթենին էլ գեղեցիկ ծառ է:
- Օ՛, անշուշտ,- ասաց քեռիս,- ամենագեղեցիկ ծառերից է: Տասը ակր էլ ձիթենի: Ուրիշ ի՞նչ:
- Դե, խնձորենին հազիվ թե աճի այսպիսի հողում,- ասացի ես:
- Դժվար թե,- ասաց քեռիս: Բայց մեկ է, խնձոր չեմ սիրում:

**Վ. Մարոյան**

**Վարժություն 318.** *Գտնել միակազմ նախադասությունները՝ նշելով, թե ինչ խոսքի մասով է արտահայտված գերադաս անդամը:*

1. Մազերը կարմիր, աչքերը սպիտակության հասնող կապո՛ւյտ-կապույտ, շուրթերը կլոր և այնպես առատ ներկած, որ բերանը թվում էր կարմիր օղակ: Անօգնական կախված բարակ ձեռքեր և սպիտակ, կարճ գուլպաներով ոտքեր...

(Ա.Ա.):

2. Լճի ջրերը թույլ պեծկլտում էին: Ասես հին արհեստական լճակի նեխած ջուրը՝ լուսնի արտացոլանքով: Այն ափին լուռ այրվում էր անտառը: Աչքդ ուր կտրեր, ամենուր կրակ էր: Հրդեհ լեռնանտառում (Յ.Կ.):

3. Արդյոք մի բան հասկանո՞ւմ եք Հայից... Որքա՛ն տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՛ն խաբուսիկ: Երևույթը, ո՛չ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Չո՛ւտ աշխատանք... (Դ.Դ.):

4. Արահետի վրա, ձեռքերը գոգնոցի տակ ու վիզը ծուռ, կանգնել էր Անդրոյի Աշխենը: Խելո՛ք, մո՛ւսն, հնազա՛նդ... (Հ.Մ.):

5. Փողոցներ: Քաղաք: Բոսորագույն երկինք: Կարմիր, սպիտակ, կապույտ տներ: Քամի, որ քնքուշ կատվի նման խաղում ու սեղմվում է բիստրոյի անկյունների: Մարդիկ, օդ... (Է.Մ.Ռ.):

6. Հեկեկում է անվերջ,

Հեկեկում.

Մենավոր ու վիատ

Իմ հոգուն

Հարազատ-

Անհատում, անպատում

Կսկիծով

Հեկեկում է տրտում,

Հեկեկում...

Մշուշոտ ու աղոտ օրերում

Գիշերները երկար ու անքուն

Փողոցում, դաշտերում, անտառում.-

Անամոք իմ հոգում,

Անանուն և անտուն և անքուն

Մղկտում է անվերջ,

Հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ, հեկեկո՛ւմ...

(Վ.Տ.)

---

---

**Վարժություն 319.** Նշել դիմավոր միակազմ նախադասությունը:

- ա) Կա՛մ կեսար, կա՛մ ոչինչ:
- բ) Գանդաղ շտապի՛ր:
- գ) Գնաց՝ առանց հրաժեշտի:
- դ) Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,  
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում (Պ.Ս.):
- ե) Նորից անձրև՝, մշո՛ւշ, ա՛մպ,  
Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ... (Վ.Տ.):
- զ) Սանրը շինված էր եղջյուրից:

**Վարժություն 320.** Նշել անդեմ միակազմ նախադասությունը:

- ա) Ճանաչի՛ր ինքդ քեզ:
- բ) Նորից չեն սիրում, սիրում են կրկին (Պ.Ս.):
- գ) Սև գիշե՛ր, և հուշե՛ր և խոհե՛ր, անհամար (Վ.Տ.):
- դ) Ծույլ ես՝ սոված կմնաս:
- ե) Այգին՝ տերևաթափ ու ցրտից խոնարհված:

**Վարժություն 321.** Որևէ մասնագիտության, արհեստի վերաբերյալ կազմել հարցաշար և պատասխանել հարցերին հաստատական և ժխտական բառ-նախադասություններով:

**Վարժություն 322.** Տրված բարդ նախադասությունների կազմում ցույց տալ համադաս և ստորադաս բաղադրիչները:

Նրա խոնավ, անհանգիստ հայացքը փայլեց լամպի օրորվող լույսի տակ, ու ես հիշեցի. ես ամեն գիշեր երագում տեսնում եմ այդ սենյակն ու լամպը, ամեն գիշեր հանդիպում եմ այստեղ անհանգիստ աչքերով աղջկան (Գ.Գ.Մ.): Խնդրում եմ քեզնից չափավորություն և զսպվածություն, որպեսզի իմ կյանքի ընթացքում չթռչեն և չսողան, այլ կարողանամ ծրագրել իմ օրը օրվա ընթացքում, կարողանամ տեսնել բարձունքներն ու հեռուները (Ս.Է.): Ծխել ուզեց, բայց գիտեր՝ արգելվում է: Բոլորս շատ զայրացած էինք, բորբոքված խոսում էինք, թե ինչ սարսափելի ստախոս է այդ գործակալը, որ շարունակ գովում էր այդ հրաշալի տունը՝ մի բառ անգամ չասելով, թե մրջյուններ կան (Վ.Ս.): Նստել էր այն դռան դիմաց, որի նմանը աշխարհում չեմ տեսել,

---

---

քանի որ դրա հետևում ապրում էին մարդիկ, որ կարող էին քնել խոճկորների հետ, ինչպես սեփական երեխաների, մարդիկ, որ ափսոսում էին կյանքից հեռանալ միայն մեկ պատճառով, որ այն գեղեցիկ էր (Ժ.Ս.):

**Վարժություն 323.** *Տրված համադասական և ստորադասական շաղկապները գործածել միևնույն նախադասության մեջ.*

ա) և, որ, բ) կամ, եթե, գ) բայց, թե, դ) իսկ, որպեսզի:

**Վարժություն 324.** *Նշել ենթակա և ստորոգելի ստորադաս բաղադրիչներով նախադասությունները:*

Ինձ թվում էր, թե Գրիգորը կուզենա երաժիշտ դառնալ, բայց ես ոչինչ չասացի (Վ.Ս.): Հերիք էր, որ ճամփին մի քար լիներ կամ մի փոքրիկ փոս, անիվները շրխկոցով քարին կպչեին կամ փոսի մեջ ընկնեին, որպեսզի դրոգում նստողները խայթվածի պես ցնցվեին... (Ա.Բ.): Չընկրկելու պատճառն այն էր, որ շնորհիվ բնածին երևակայության՝ միշտ մտածել էր ավելի լավի մասին: Պարզել էր, որ նախագծում թերություններ կան: Իսկական փրկություն էր, որ թոքերի շրխկոցով, ձիու լանջը քրտինքից մթնած, եկավ հասավ... (Հ.Մ.): Պատմում էին, թե արդարամիտ ու ազնիվ մարդ է: Երկինք համբառնալու միակ վատ կողմն այն է, որ այնտեղից չի երևում երկինքը (Ա.Մ.):

**Վարժություն 325.** *Հետևյալ նախադասությունների բաղադրիչների համադաս և ստորադաս հարաբերությունները ցույց տալ գծապատկերների միջոցով.*

ա. Նա ինձ մի գավաթ սուրճ բերեց, և ես զարմանքով մտածում էի, թե ինչպես էր պատահել, որ առաջ երբեք չէի այցելել մեր քաղաքի այս թերևս ամենահետաքրքիր մարդուն (Վ.Ս.):

բ. /1/ Մեր ժամանակներում, /2/ երբ գիտությունն այսպիսի վեհության հասավ, պարզ դարձավ, որ /3/ ժողովրդի մտքի համեմատությամբ որքան մակերեսային է այն շերտը, որը /4/ գրականություն է կոչվում:

գ. /1/ Հետո ջուր խմեցրեց Աշխենը Մարիամին, /2/ իր սանրը տվեց՝ մազերը սանրելու, /3/ կապեց նրա գլխաշորը և /4/ դուլերն ինքը վերցրեց, որովհետև /5/ Մարիամը ոտքի վրա դժվար էր մնում (Հ.Մ.):

**Վարժություն 326.** Ո՞ր նախադասությունն է համաստորադաս :

ա) Քաջալերում էին երիտասարդին, որպեսզի փրկի հաշմանդամ ծերունուն, որն ուժ չունեի հեռանալու կրակի ու ծխի մեջ կորած տնից:

բ) Նկատել եմ, որ շատ ես սիրում եղբորդ, ծնողի պես մտահոգվում ու անհնարինը հնարավոր ես դարձնում նրա համար:

գ) Հենց նրան եմ տեսնում ամեն անգամ, երբ հատում եմ երազների ստրուն սահմանը, որ կանգնած է քնի ու արթնության միջև (Գ.Գ.Մ.):

դ) Միայն տարիներ անց, երբ պապս արդեն հրաժեշտ էր տվել աշխարհին, ի վերջո հասկացա, որ տատս իրականում նույնպես հավատում էր երազներին

(Ժ.Մ.):

**Վարժություն 327.** Որոշել տրված բարդ նախադասությունների տեսակները և հավելելով կամ կրճատելով բաղադրիչներ՝ փոփոխել դրանք:

Ինձ մեղադրում էին, որ ես յուրացրել եմ զգեստներ ու կեղծամներ թատրոնից ու թաքցրել ինձ մոտ, որ այդ իրերը խուզարկությունից հետո գտնվել են իմ սենյակում: Կոմիսարը ցավ հայտնեց, թե ինչպես ինձ նման մի երիտասարդ, որի անբասիր կյանքը հաստատվում էր ըստ իր ստացած տեղեկանքի, կարողացել էր այդ կարգի մի արարմունքով իրեն անպատվել: Խեղճ կինը, երբ վերահասու եղավ, թե ինչպիսի նենգության անգիտակից գործիք է դարձել, արտասվագին խոստովանեց, թե ինքն էր ինձ մոտ բերել այդ կապոցը դեռևս վաղ առավոտյան, թե ես ոչ մի առնչություն չունեի այդ գործի հետ, թե այդ սրիկան նախանձից դիվոտում էի ինքնիրեն իմ՝ Փարիզ հասած օրիցս ի վեր, և որ այդ իրերը ինքն էր վերցրել թատրոնից և խորամանկությամբ ինձ մոտ պահ դնելուց հետո ամբաստանել էր ինձ թատրոնի վարչության մոտ, որպես այդ իրերը յուրացնողի (Վ.Փ.):

**Վարժություն 328.** Շարունակել կիսատ նախադասությունները և նշել տեսակները:

- |                             |                                       |
|-----------------------------|---------------------------------------|
| ա) Խոստացա, որ ...          | զ) Ապրել է այն տանը, որի...           |
| բ) Հայտնի է, որ ...         | է ) Սպասում եմ, որ...                 |
| գ) Հպարտանում է, երբ...     | ը) Հեռացավ նրանցից, որոնց...          |
| դ) Արվեստագետը նա է, ով ... | թ) Այնպես է պարում, որ...             |
| ե). Կների, եթե...           | ժ) Հիշում է նրանց անունները, ովքեր... |

---

---

**Վարժություն 329.** Նշել որոշիչ երկրորդական նախադասությունը:

- ա) Նրա հայացքը, ում վիրահատել էին, առաստաղին էր հառած:
- բ) Հետո մտքում զգում-բռնում էր, թե ընկերը ինչ ասելիք ուներ:
- գ) Չանձրանում էր այն բանից, որ մարդ չկա կողքին:
- դ) Հիշեց այն տարիները, երբ երիտասարդ էր:
- ե) Ծաղրի էր արժանի, որ տակավին հույս էր տաժում:

**Վարժություն 330.** Նշել բացահայտիչ երկրորդական նախադասությունը:

- ա) Սքանչելի էին այն մի քանի ծառերը, որոնք աճում էին տան դիմաց (Թ.Գ.):
- բ) Պահպանի՛ր ինձ այն միամիտ հավատից, որ այս կյանքում ամեն ինչ պետք է հարթ լինի (Ս.Է.):
- գ) Ընկերներից մեկը, որ տարիներ ապրել էր հարևանությամբ, անճանաչելի փոխվել է:
- դ) Դ-ասընկերը, որ կատարել էր առաջադրանքը, գովեստի արժանացավ:
- ե) Մեր խաղացանկը կազմող գործերը զուրկ էին այն անչափելի խորություններից, որոնց հետ սովորել էի ես մաքառել համամարդկային տիպարներ անձնավորելիս (Վ.Փ.):

**Վարժություն 331.** Նշել ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը:

- ա) Թվում էր, թե մանկությունը հազար տարի կտևի:
- բ) Հայտարարվել է, որ հակառակորդն անձնատուր է եղել:
- գ) Չեկուցել է, որ գրոհն անկասելի էր:
- դ) Երևում է, որ դու էլ երես կթեքես:
- ե) Ուղեկիցս ընտրել էր այն ճանապարհը, որն ամենակարճն էր:

**Վարժություն 332.** Նշել ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը :

- ա) Անցել են այն տարիները, երբ երիտասարդ ու ինքնավստահ էր:
- բ) Այն օրը, երբ մառախուղը պատեց շուրջբոլորը, նա կորավ տեսադաշտից:

- 
- զ) Սիրտ չարեց դուրս գալու, երբ ամպրոպ որոտաց:
  - դ) Չի սիրում, երբ շատախոսում են:
  - ե) Երբեք մտքով չէր անցնի, որ ծերուկն այդքան սիրալիր կլինի:

**Վարժություն 333.** *Նշել միջոցի խնդիր երկրորդական նախադասությունը:*

- ա) Վատ է նրանով, որ անպատիվ քայլ կատարեց:
- բ) Համառ է նրանով, որ չի զիջում աթոռը:
- գ) Սաստեց նրանով, որ հիշեցրեց բացթողումները:
- դ) Օրինակելի է նրանով, որ վերևից նայում է միայն օգնելու համար:
- ե) Առավոտյան ավելի գով է լինում, քան երեկոյան:

**Վարժություն 334.** *Կազմել բացահայտիչ և հատկացուցիչ ստորադաս բաղադրիչներով նախադասություններ՝ գործածելով նա հարաբերյալը և որ հարաբերականը (երկուական օրինակ):*

**Վարժություն 335.** *Թե շողկապով կազմել համադասական և ուղիղ խնդիր ստորադասական նախադասություններ (երկուական օրինակ):*

**Վարժություն 336.** *Կազմել ուղիղ և հանգման խնդիր ստորադաս նախադասություններ, որոնք պատասխանեն **ո՞ւմ** հարցին (երկուական օրինակ):*

**Վարժություն 337.** *Կազմել բարդ համադասական և ստորադասական երկուական նախադասություն՝ կապակցված շարահարությամբ:*

**Վարժություն 338.** *Գրել բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություններ՝ ստորադաս բաղադրիչների տրված կազմով:*

ա) Ենթաստորադասական նախադասություն, որի ստորադաս բաղադրիչները որոշիչներ են:

բ) Համաստորադասական նախադասություն, որի ստորադաս բաղադրիչները ժամանակի պարագա են:

գ) Տարաստորադասական նախադասություն, որի ստորադաս բաղադրիչները որոշիչ և հանգման խնդիր են:

---

---

**Վարժություն 339.** Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակի:

ա) - Մինչև մահս էսպես մրոտ եմ մնալու, որ մեռա, կսպիտակեմ,- կատակով ասում էր նա տպարանի նոր բանվորներին... (Ա. Բ.):

բ) Եվ Հեռախոսի Սաքոն ասաց Վանուն.

- Կյանքը գնում է, դու ոչխար խուզիր, Վանի՛... (Հ.Մ.):

գ) - Կարծում էի, թե համակրում ես ինձ, այդպես էիր ասել,- ասաց նա գայրացած (Թ.Գ.):

դ) Աննան ունքերը իրար հավաքեց, մոտեցրեց թանաքամանն ու փետուրի ծայրով թղթի վրա մեծ տառերով գրեց. «Խորհրդային իշխանությունը մեզ ազատություն բերեց, կեցցե՛ մարտի 8-ի տոնը» (Ա.Բ.):

ե) Մի մարդ, որ ճգնավոր էր ուզում դառնալ, կեսգիշերին ասաց. «Հասել է ժամը, որ ես թողնեմ տունս ու գնամ որոնեմ Աստծուն: Ա՛խ, ո՞վ էր այսքան ժամանակ ինձ պահում այստեղ՝ մոլորության մեջ»: «Ե՛ս», - շնչաց Աստված, բայց մարդու ականջները փակ էին: Անկողնու մի ծայրում խաղաղ պառկած էր կինը՝ քնած մանուկը կրծքին: «Ո՞վ ես դու, որ այսքան ժամանակ ինձ հիմարացրիր ու խաբեցիր», - ասաց մարդը: Չայնը նորից ասաց. «Ես Աստվածն եմ», - բայց մարդը չլսեց: Հանկարծ երեխան լաց եղավ քնի մեջ ու ավելի հպվեց մորը: Եվ հրամայեց Աստված. «Սպասի՛ր, պանդո՛յր, մի՛ լքիր քո տունը», - նա կրկին չլսեց: Ու Աստված դառնորեն հառաչեց. «Ինչո՞ւ է ծառաս ինձ լքում և գնում որոնելու ինձ»: (Ռ.Թ.)

**Վարժություն 340.** Վերաշաղրել տրված հաստիվածը՝ ուրիշի ուղղակի խոսքը վերածելով անուղղակի:

Հետո Սկոն եկավ: Եվ նրա հետ մի ռուս կին:

Ես զարմացած նայում էի կնոջը: Նա ասես փոքր երեխայի խզմզած նկար լիներ:

- Նստեցե՛ք, - վեր թռա ես, առաջարկելով իմ տեղը՝ գետնին դրած հին զնդանը:

Լռությունն աննկարագրելի էր:

Փոքր անց Սկոն վերադարձավ:

- Ծո՛ւ, ատ ի՞նչ է... իտոր հե՞տ կուզես ընտանիք կազմել, - հարձակվեց հայրս:

Սկոն միամիտ ժպտաց:

- Ո՞վ է... Ի՞նչ կենե, - իրար ետևից շարեց հայրս:
- Որտե՞ն է կաշխատի,- չարախնդորեն շարունակեց Գասպարը:
- Որտե՞ն է ծանոթացար,- վերջացրեց Վասն:
- Լուբան է... Ճաշարանում ամաններ կլվա,- ասաց Սկոն, - և ժպիտը նրա դեմքից մեղմորեն սկսեց չքանալ:

## Ա. Այվազյան

**Վարժություն 341.** Մեկական օրինակով ցույց տալ ուղղակի խոսքն անուղղակիի վերածելիս նախադասության կրած կառուցվածքային հետևյալ փոփոխությունները:

- ա) որ կամ թե շաղկապների գործածում՝ ըստ նախադասության հաղորդակցական տեսակի
- բ) հրամայական բայաձևի փոփոխում ըղձականի
- գ) դիմային փոփոխություններ
- դ) կոչականի վերածում ենթակայի և խնդրի
- ե) կոչականի, ձայնարկությունների, եղանակավորող բառերի անկում

**Վարժություն 342.** Գրել ուղղակի խոսքի օրինակներ՝ գործածելով կետադրության բոլոր հնարավոր տարբերակները (երկուական օրինակ):

**Վարժություն 343.** Տրված հատվածներում ցույց տալ մեջբերվող խոսքի տեսակները և բացատրել կետադրությունը:

- Ո՞վ է:
- Մայքը:
- Ո՞ր Մայքը,- կանչեց Սենը:
- Քորբեթ Մայքը,- ասաց Մայքը:
- Սենը վեր թռավ անկողնուց ու բացեց դուռը:
- Չէ՛,- ասաց նա,- չհասկացար: Երբ հարցնում եմ՝ որ Մայքը, մի ծիծաղելի բան ասա: Օրինակ, ես կասեմ՝ թըխկ-թըխկ, իսկ դու ասա՝ ո՞վ է:
- Բա՛ն ասա, բա՛ն:
- Թը՛խկ-թը՛խկ,- ասաց Սենը:
- Լա՛վ,- ասաց Մայքը:- Ո՞վ է:

## Վ. Մարոյան

---

Պուրակի բոլոր հաճարենիներն ուրեմն այստեղից էին արձակելու դեպի ձոր: Եվ ոչ ոք չէր ասելու. «Էդ դո՞ւք եք տնկել, որ բերաններդ բաց էդպես գլորում ու ուրախանում եք...», - ոչ ոք չէր ասելու: Մայրն ու տատը նորից կանչեցին, և մայրը նորից ծղրտաց՝ Արայի՛կ...

- Դե գալիս եմ:- Եվ տղան շարտվեց զառիթափն ի վար, որտեղից գետակ էին իջեցնելու հաճարկուտը, և մոռը թող ճխվեր: «Դուք էլ, ձեր մոռն էլ»:

**Հ. Մաթևոսյան**

#### **Վարժություն 344. Կետադրել:**

Ողական ամբոցի սենյակներից մեկի մեջ թանկագին գորգով պատած գահավորակի վրա որի երեք կողմը դրած էին շքեղ կերպասներով զարդարված բարձեր նստած էր մի երիտասարդ:

Նա ինչպես երևում էր նրա քնաթաթախ դեմքից դեռ նոր էր դուրս եկել յուր քնարանից և դուրս էր եկել զարթնելու ժամից շատ վաղ: Ոչ հագնվել էր ոչ լվացվել էր և ոչ սանրվել: Սի լայն ասվյա նուրբ վերարկուի մեջ փաթաթված էր նա և բաց գլխի երկար գիսակները գազաթից իջնելով մեղմ ալիքներով սփռվել էին թիկունքի վրա և երբեմն սքողում էին նրա գեղեցիկ գունաթափ դեմքը:

Նրա անհանգիստ մատները անդադար ոլորում էին փոքր-ինչ ուռած կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը թեև ոլորելու շատ բան չէին էլ գտնում:

Այդ ցույց էր տալիս սրտի խորին խռովքը: Իսկ սևորակ նշանն աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք:

Քսանհինգ տարեկան հագիվ կլիներ նա նուրբ կազմվածքով և փոքր-ինչ մուգ դեղնագույն դեմքով որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից:

Երիտասարդը Վահան Մամիկոնյանի որդի Սամվելն էր:

Սենյակը որտեղ նստած էր նա ներկայացնում էր նրա ընդունարանը: Հատակը պատած էր նախշուն բրդեղեն օթոցներով անկյուններում դրված էին ծանր և թեթև նիզակներ տեգեր գեղարդներ աշտեններ և երկաթյա ահագին լախտեր բոլորը գեղեցիկ քանդակներով զարդարված բոլորը ոսկեհուռ դրվագներով ազուցված:

Իսկ սենյակի այն ճակատին որ կողմը դրված էր նրա գահավորակը պատի վրա մեխած էր վագրի մի լայն մորթի:

Նա ամբողջովին մտախոհ էր:

**Ըստ Բաֆֆու**

---

---

**Վարժություն 345. Կետադրել:**

Ամենքը շտապում էին մահամերձ միլիոնատիրոջ տուն որպեսզի վերջին անգամ տեսնեն նրան և գուցե մի բան իմանան կտակի մասին:

Այնինչ մահամերձի ննջարանի դռները փակ էին:

Այնտեղ մահճակալի շուրջը հավաքվել էին մեռնողի ընտանիքի անդամները մի բանի մերձավորներ ծխական քահանան և երկու-երեք բժիշկ:

Օդն այնքան խեղդուկ էր որ մարդիկ հազիվ էին կարողանում շունչ քաշել և չնայելով դրան եկողը չէր ուզում հեռանալ:

Թանկագին պարսկական գորգերից բարձրացել էր նոսր փոշի: Լուսամուտների թանձր ասվյա վարագույրների միջով ներս սփռվող արեգակի շողերը ոսկեգոծում էին այդ փոշին օդի մեջ գոյացնելով թեք սյուներ որոնք հետզհետե երկարում էին և հորիզոնական ձև ստանում:

Նրանցից մեկի ծայրը հասավ անկյունում մարմարյա վառարանի վրա դրած բրոնզե ժամացույցին: Փայլեց ձվաձև ապակե ծածկոցը և նրա տակ հրավառվեց գեղեցիկ կնոջ մի արձան վեհ ճակատով թուրը ձեռքին մի ոտը դրած ամեհի առյուծի կոկորդին որպես հաղթության աստվածուհի:

Սպասում էին մահամերձի վախճանին իսկ նա դեռ չէր մեռնում:

Ոմանք ստեպ-ստեպ թեքվում էին և փակ դռների բանալու անցքից նայում դեպի մահամերձի սենյակը կամ ականջ էին դնում ճգնելով մի բան տեսնել կամ լսել: Հետո հեռանում էին շնչում միմյանց ականջին և գաղտուկ կատաղի հայացքներ ձգում սրա ու նրա վրա:

Բանն այն էր որ յուրաքանչյուրն իր սրտում գաղտնի աղոտ հույս ուներ որևէ կերպ հիշված լինել Մարկոս աղայի կտակում:

Ննջարանի դռները հանդարտիկ բացվեցին շնչյունները վայրկենաբար ընդհատվեցին:

**(Ըստ Ալ. Շիրվանզադեի)**

**Վարժություն 346. Կետադրել:**

Գյուղի աղմուկը հետզհետե լռեց:

Ծառերն անհեթեթ նկարներ սփռեցին գետնի խորդուբորդ մակերևույթին:

Շինականները արագ ընթրելով հոգնությունից ընդարմացած քնեցին վաղվա ապրուստի հայթայթման հույսն օրորելով:

Միայն ջրաղացի պատի տակ աշխույժ էր ու եռուզեռ: Այնտեղ հավաքված բազմահոգ մարդիկ կրակ էին վառել բացօթյա գիշերելու համար:

---

Հենց գետնի վրա նստոտեցին բոլորակ շարքով և կրակի հաճելի թովոցները դիտելով սկսեցին զրուցել: Մերթ ընդ մերթ ձեռքերը կարկառում էին կրակին ջերմացնելու:

Փոքրիկ խարույկը կարմիր էր ներկում շինականներին ու ջրադացի պատը:

Մի շինական գոտիկից հանեց փողը որը վայրկենապես փայլվեց լուսնկա գիշերվա արծաթագոծ լույսի տակ ու սկսեց նվագել: Հնութունը բուրեց նվագից նախնիների ուրվականներ երևացին և հնօրյա կյանքի պայքար վիշտ իղձ ու կարոտ:

Չէր խոսում ոչ ոք թախիծը տիրել էր նրանց:

Թե Արտակը և թե Աստղիկը ակնդետ լսում էին զրույցներն ու երգերը իրենց երջանիկ աշխարհի անջրպետի այս կողմից: Եվ հենց այդ անջրպետը թույլ չէր տալիս որ այդ բոլոր զրույցների ու երգերի մեջ տոգորված վիշտն ու հոգսը իրենց իսկական թույնով սողոսկեին իշխանական երջանիկ կյանքի ոլորտը:

Ուշ գիշեր էր երբ Արտակն ու Աստղիկը թողեցին շինականներին և հեռացան: Աստղիկի միջոցով Անահիտին բարի գիշեր մաղթելով Արտակը գնաց իր խրճիթը և պառկեց քնելու:

Դեռ երկար նրա ականջին հնչում էին շինականների զրույցներն ու մեղմօրոր երգերը:

Հաջորդ օրը Արտակը դուրս գալով Արտաշատից գնաց խառնիճադանջ ամբոխի հետևից:

Երկրնորանքը կեղեքում էր նրա սիրտը:

**Ըստ Դ. Դեմիրճյանի**

#### **Վարժություն 347. Կետադրել:**

Նաիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով նման էր նաիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին փոքր էր ոչ բազմամարդ խարխուլ ու փոշոտ:

Ժամանակակից լեզվով այդպիսի քաղաքներին ասում են գավառական հետամնաց քաղաք:

Երբ է շինված նաիրյան այդ քաղաքը աստված ինքը գիտե:

Բայց ասում են որ այդ քաղաքը հիմնողները եղել են հին նաիրցիներ գուցե լայնաթիկունք ու ջլաբազուկ խալդեր գուցե գանգրահեր ուրարտացիներ:

Սակայն պատմական այդ հանգամանքը կարծում ենք այնքան էլ կարևոր չէ որովհետև խալդական կամ ուրարտական այդ հին քաղաքից հիմա երևի տեղն էլ չի մնացել:

---

Նրանց այն կավե գետնափոր խրճիթների փոխարեն կանգնած են հիմա նաիրյան այդ փոքրիկ քաղաքում քարե միհարկանի երկհարկանի և նույնիսկ երեքհարկանի շինություններ տներ ու խանութներ:

Գրանցից մի քանիսը նույնիսկ թիթեղե կարմիր կամ կանաչագույն կտուրներ ունեն մի հանգամանք որ քսաներորդ դարից է գալիս և որպես այդպիսին նոր է և միանգամայն ուշագրավ:

Քաղաքի ցածրիկ տների ու խանութների միօրինակ ծովում թիթեղե այդ կտուրներն աչքի են զարնում ինչպես աչքի կզարներ կանացի եվրոպական փետրազարդ գլխարկն արևելյան գյուղերում:

Եվ իզուր չէ որ նաիրյան այդ քաղաքում մինչև օրս էլ մի անհուն վախով ու պատկառանքով են խոսում այն անձնավորության մասին որն առաջին անգամ թիթեղե կտուրով է ծածկել իր երկհարկանի բնակարանը:

Դա բոլորին հայտնի բոլորից հարգված այսպես անվանված Գեներալ Ալռշն է ութսունն անց պատկառելի մի նաիրցի:

Բայց տների ու խանութների այդ միօրինակ տափակության ծովում քաղաքի ճիշտ կենտրոնում կանգնած կա հինգհարկանի մի հսկա քարե մի թյուրիմացություն:

**Ըստ Ե. Չարենցի**

**Վարժություն 348. Կետադրել:**

Քաղաքի արևմտյան մասում վերը ժայռակուռ դեղին բլուրի վրա խիստ խոժոռ որպես արևելյան քարե մի բռնակալ բազմել է բերդը:

Ժայռե իր գահի աթոռի վրայից նայում է քաղաքին:

Քարի մի վիթխարի արկղ լինի կարծես ծանր ընկել է վերևից ու կախված մնացել բլուրի վրա նստել է ծանր ու հաստատ: Ընկել է նախ մի հսկայական քարե արկղ կարծես և հետո մեկը մյուսի հետևից տեղացել են վար ուրիշ մեծ ու փոքր ծանր ու թեթև զանազանաձև սնդուկներ մեկը մեկի վրա կողք կողքի:

Հրաշք է չես հասկանում զարմանում ես միայն:

Ասում են որ այդ բերդը շինելիս նաիրցի վարպետները ձվի սպիտակուց են գործածել շաղախի փոխարեն ահա թե ինչու է այդ բերդն անխորտակելի:

Անառիկ է այդ բերդը ամենքը այդ գիտեն և դավաճանությունն է նենգ ստոր նաիրյան դավաճանությունն է այդ բերդը հանձնել եկվոր սրիկաներին...

---

---

Բերդը շինել են նահրցիները բայց դժբախտաբար այդ նույն բերդն է հիմա եկվորներին պաշտպանում թե մեզնից բերդի և քաղաքի իսկական տերերից և թե ամեն մի թշնամուց:

Օրը կգա և նրանք կգնան:

Եվ նորից բերդի անառիկ ամրություններից որպես երկաթյա ահեղ մի սպառնալիք կելնի կհառնի ահասաստ նահրյան ոգին կորովը ուժը հազարամյա նահրյան աշխարհի:

Ու կվառվի նորից անմար խնդությամբ կժպտա խնդագին երկիրը հազարամյա երկիրը Նահրի:

Այսպես էին մտածում այդ բերդի մասին նահրյան այդ քաղաքում ապրող իսկական նահրցիները:

**(Ըստ Ե. Չարենցի)**

**Վարժություն 349. Կետադրել:**

Թեկուզ անունը Ծիրանի տափ է բայց և ծիրանի ոչ մի ծառ չկա այնտեղ:

Գետի ափին քարաժայռերի ճեղքերում մացառներ կան քրքրված ցախավելի պես դիք-դիք ցցված: Ծիրանի տափի միակ առավելությունը քամիներից պաշտպանված լինելն է և ջրի մոտիկությունը:

Սարում երբ գարնան սկզբին բուք է լինում անձրևախառն քամի հովիվը ոչխարը գետի ձորն է քշում և պատսպարան տալիս լերկ Ծիրանի տափի ժայռերի հետև:

Այծերը մացառներ են կրծում ոչխարը գլուխը միմյանց շեքի մեջ անընդհատ որոճում է:

Ծիրանի տափը հիշատակելու արժանի ոչինչ չէր ունենա եթե երկու գյուղի Միրի և Մրոցի միջև անվերջ շարունակվող կռիվների խոսք ու գրույցի առարկա չդառնար եթե նրա համար տարիների ընթացքում բազմիցս մահակներով կռիվ չտալին երկու դրկից գյուղերը Մրոցն ու Միրը...

Բայց նրանք առիթ չունեին ասելու թե Մրոցը վառես խանձահոտ չի գա:

Եթե նրանք աղբաջրով են խմոր հունցում որովհետև Միրում երեխան էլ գիտեր թե գետը վերից է գալիս անցնում Մրոցի կողքով սրբում գետի մոտ կիսած աղբակույտերն ու մոխրանոցները և լվանում գետի միջով անցնող կովերի եզների հորթերի ձիերի սմբակներն ու կճղակները:

Երբ Միրի լղար կովերը քարերի արանքում բուսած չոր խոտերն էին պոկում Մրոցի կովերի լիքը կուրծը թաղվում էր երփներանգ ծաղիկների ու հյութեղ խոտերի

---

---

մեջ իսկ պտուկները քսվում էին ծաղկաթերթերին և ծաղկափոշին նստում էր կուրծին:

Եվ թեկուզ ամառվա շոգին ու տապին կանաչը խանձվում էր հողը օրըստօրե ճաքճքում էլի շոգից նեղացած շնչահեղձ եղող նախիրը ժայռի շվաքում հանգստանում է և արևը թեքվելուց հետո փոքր-ինչ շունչ քաշում:

**Ըստ Ա. Բակունցի**

- Ա.Ա. - Աղասի Այվազյան
- Ա.Բ. - Ակսել Բակունց
- Ա.Ի. - Ավետիք Իսահակյան
- Ա.Մ. - Ավգուստո Մոնտերոսո
- Գ.Գ.Մ. - Գաբրիել Գարսիա Մարկես
- Դ.Դ. - Դերենիկ Դեմիրճյան
- Ե.Չ. - Եղիշե Չարենց
- Է.Մ.Ռ. - Էրիխ Մարիա Ռեմարկ
- Թ.Դ. - Թեոդոր Դրայզեր
- Ժ.Ս. – Ժոզե Սարամագո
- Հ.Թ. – Հովհաննես Թումանյան
- Հ.Մ. - Հրանտ Մաթևոսյան
- Հ.Շ. - Հովհաննես Շիրազ
- Հ.Ս. - Համո Սահյան
- Մ. - Մուրացան
- Յ.Կ. - Յասունարի Կավարադա
- Պ.Ս. - Պարույր Սևակ
- Ռ.Թ. - Ռաբինդրանաթ Թագոր
- Ռ.Պ - Ռաֆայել Պատկանյան
- Ս.Է. – Անտուան դը Սենտ Էքզյուպերի
- Ս.Կ. - Սիլվա Կապուտիկյան
- Վ.Ս. – Վիլյամ Սարոյան
- Վ.Տ. – Վահան Տերյան
- Վ.Փ. - Վահրամ Փափազյան
- Բ. - Բաֆֆի

<b>Հայերենի շրջանաբաժանումը</b>	<b>1</b>
<b>Հնչյունաբանություն</b>	
ա. Հնչյուն և տառ	2, 33
բ. Բաղաձայններ	7, 10, 29, 30, 35
գ. Չայնավորներ	31, 32
դ. Երկհնչյուններ	18, 19
ե. Տառերի թվային արժեքը	49, 50, 170, 172, 173
զ. Հնչյունական վերլուծության	6
է. Շեշտ	8, 9, 25-28, 315
ը. Վանկ	3-5, 21-23
թ. Հնչյունափոխություն	11-17, 20, 24
<b>Ուղղագրություն և ուղղախոսություն</b>	
ա. Ուղղագրության պատմություն	34
բ. Բաղաձայնների և ձայնավորների ուղղագրությունը	51-54, 56, 57, 62, 63
գ. Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը	55, 64
դ. Գծիկով, կից կամ անջատ գրությամբ բառեր	36, 38, 40-42, 45-47
ե. Մեծատառի գրությունը	37, 39, 43, 44, 138
զ. Չայնակապի գրությունը	48
է. Ուղղախոսություն	58-61
ը. Տառադարձություն	65
<b>Բառագիտություն</b>	
ա. Բառագիտության բաժինները	102, 103, 107
բ. Բառիմաստ	70-76, 81, 83, 86, 88, 106, 114, 115-117, 123, 124
գ. Մեհիմաստ և բազմիմաստ բառեր	79, 85, 90, 104, 105
դ. Փոխաբերական իմաստով բառեր	68, 121, 126, 127
ե. Հոմանիշներ	66, 125
զ. Համանուններ	122
է. Փոխառություններ	55, 61, 91-95
ը. Օտարաբանություններ	69, 82, 96-101
թ. Արևմտահայերեն բառեր	78, 87
ժ. Դարձվածքներ	77, 124, 128

---

---

***Բառակապակցություն***

ա. Պարզ բառեր	108
բ. Ածանցավոր բառեր	38, 54, 67, 80, 108, 111-113, 118, 119
գ. Բարդ բառեր	89, 109, 110, 137
դ. Հապավումներ	84
ե. Բառակազմություն	17, 19, 25, 32, 38, 42, 49, 54, 59, 64, 115-118

***Չևարանություն***

***Գոյական***

ա. Գոյականի տարբերակումը	129, 131, 138, 178, 227
բ. Գոյականի կազմությունը	137
գ. Հատուկ և հասարակ գոյականներ	42, 44, 73, 132
դ. Նյութական գոյականներ	133
ե. Վերացական գոյականներ	135
զ. Եզակի և հոգնակի գոյականներ	139-141, 152
է. Անհոգնական գոյականներ	136
ը. Հավաքական գոյականներ	134
թ. Հոլովներ	131, 143-150, 153, 154, 294
ժ. Հոլովման տեսակներ	144, 148-151
ժա. Գոյականի գործածությունը խոսքի մեջ	261, 266, 267, 277, 285, 296, 299, 300, 303

***Ածական***

ա. Ածականի տարբերակումը	130, 155, 178, 227
բ. Որակական և հարաբերական ածականներ	157-161
գ. Ածականի համեմատության աստիճանները	162
դ. Ածականի փոխանվանական գործածությունը	142
ե. Ածականի գործածությունը խոսքի մեջ	156, 266, 267, 275, 277, 285, 316
զ. Կազմել ածականներ	162, 163

***Թվական***

ա. Թվականի տարբերակումը	175, 178
բ. Թվականի տեսակները	164-166, 174, 177
գ. Թվականի կազմությունը	167-169,
դ. Թվականի գրային արտահայտությունը	49, 50, 170, 172, 173
ե. Թվականի ուղղագրությունը	57, 171
զ. Թվականի փոխանվանական գործածությունը	142, 176
է. Թվականի գործածությունը խոսքի մեջ	267, 285

---

---

***Գերանուն***

ա. Գերանվան տարբերակումը	179, 187
բ. Գերանվան տեսակները	180, 182, 184, 185
գ. Գերանվան հոլովումը	181
դ. Գերանվան խոսքիմասային հարաբերակցությունը	183, 186, 188
ե. Գերանվան գործածությունը խոսքի մեջ	275, 285, 316

***Բայ***

ա. Բայի տարբերակումը	199, 207, 227, 212, 214, 215, 219
բ. Ե, Ա խոնարհման բայեր	189, 190, 201, 202
գ. Բայի կազմությունը	46, 196, 208
դ. Բայի սեռը	191, 203, 216, 217, 221-223,
ե. Անկանոն և պակասավոր բայեր	192, 204, 224-226
զ. Գերբայներ և ձևաբայեր	193-195, 205, 206, 281
է. Բայի եղանակաժամանակային ձևերը	97,198,200,209,211,213,218,220, 273
ը. Բայի գործածությունը խոսքի մեջ	266, 271, 273, 275, 277, 281, 282
թ. Բայի բառային իմաստը	210

***Մակբայ***

ա. Մակբայի տարբերակումը	247
բ. Մակբայի տեսակները	228, 229
գ. Մակբայի գործածությունը խոսքի մեջ	266, 267, 285

***Կապ***

ա. Կապի տարբերակումը	231, 232, 246, 247
բ. Կապի տեսակները	230, 233-235
գ. Կապի գործածությունը խոսքի մեջ	234, 235, 284, 293

***Շաղկապ***

ա. Շաղկապի տարբերակումը	246, 247
բ. Շաղկապի տեսակները	237-243
գ. Շաղկապի իմաստները	244, 245
դ. Շաղկապի գործածությունը խոսքի մեջ	236, 323, 334, 335

***Վերաբերական***

ա. Վերաբերականի տարբերակումը	248, 250
բ. Վերաբերականի իմաստները	249, 251-254
գ. Վերաբերականի գործածությունը խոսքի մեջ	255, 275, 277

---

---

**Չայնարկություն**

ա. Չայնարկության տարբերակումը	256
բ. Չայնարկությունից կազմված բառեր	81, 88, 114
գ. Չայնարկության գործածությունը խոսքի մեջ	257, 258, 316, 277

**Շարահյուսություն**

<b>Բառակապակցություն</b>	214, 266-269
Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի	271-277

**Պարզ նախադասություն**

ա. Շարահյուսական կապակցության միջոցները և եղանակները	259-265, 268, 270
բ. Միակազմ նախադասություններ	318-320
գ. Ջեղումով նախադասություններ	317
դ. Բառ-նախադասություններ	321
ե. Ստորոգում	308
զ. Նախադասության գլխավոր անդամներ	278-285,
է. Գոյականական անդամի լրացումներ	42, 153, 154, 286-292, 309, 311
ը. Բայական անդամի լրացումներ	153, 154, 293-300, 301-307, 309, 311
թ. Բազմակի անդամներ	309
ժ. Դերբայական դարձված	310-312
ժա. Կոչական	315, 316
ժբ. Միջանկյալ կապակցություններ	313, 314

**Բարդ նախադասություն**

ա. Բարդ համադասական նախադասություն	322, 325, 335, 337
բ. Բարդ ստորադասական նախադասություն	322-338

**Մեջբերվող խոսք**

339-343

**Կազմել նախադասություններ**

44, 45, 110, 125, 138, 139, 142, 152, 158, 159, 162, 164-166, 168, 223-226, 232, 234, 235, 239, 241, 255, 271, 273, 275, 277, 281, 282, 284, 285, 289, 293, 296, 299-301, 311, 313, 316, 321, 323, 328, 334-337, 342

**Կետադրական առաջադրանքներ**

270, 310, 315, 342, 344-353

**Գործնական գրությունների նմուշներ**

354-359